





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՐԽԻՎ  
ARCHIVES OF THE FIRST PRESIDENT OF THE REPUBLIC OF ARMENIA

---

**ԼԵՒՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ**

**ՀԱՅ-ԹՈՒՐԲԱԿԱՆ  
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**ԵՐԵՒԱՆ 2009**

ՀՏԴ 327  
ԳՄԴ 66.4  
Տ – 506

LEVON TER-PETROSSIAN  
**ARMENIAN-TURKISH RELATIONS**

Erevan 2009

Տեր-Պետրոսյան Լևոն  
Տ – 506 Հայ-թուրքական հարաբերություններ.  
Կազմող՝ Ա. Ռ. Բանուչյան, առաջաբան՝ Ա. Բ. Սարգսյան, խմբագիր՝ Ա. Է. Ավագյան – Եր.: Հայաստանի Հանրապետության Առաջին Նախագահի արխիվ, 2009. – 96 էջ:

ԳՄԴ 66.4

**ISBN 978- 99941-2-255-4**

© Լևոն Տեր-Պետրոսյան, 2009

## ԱՌԱՋԱԲԱՆ

Սույն ժողովածուն Լեւոն Տեր-Պետրոսյանի ելույթներից, հարցազրույցներից ու հոդվածներից քաղվածքներ են, որոնք վերաբերում են Հայաստանի եւ Թուրքիայի հարաբերություններին, դրանց կարգավորման սկզբունքներին եւ ուղիներին: Ժամանակագրական առումով այն ընդգրկում է ուղիղ 20 տարի՝ սկսած 1989 թվականի հունիսից եւ մինչեւ մի քանի օր առաջ՝ մայիսի 1-ի հանրահավաքում հնչած նրա ելույթը: Այսպիսի մի ժողովածուի հրատարակության այժմեականությունը բացատրվում է մի կողմից՝ Հայ-թուրքական հարաբերությունների ներկա փուլում տեղի ունեցող սրընթաց զարգացումներով, մյուս կողմից՝ Թուրքիայի նկատմամբ ներկա իշխանությունների վարած քաղաքականությունը Լեւոն Տեր-Պետրոսյանի քաղաքականության հետ նույնացնելու կամ դրանց մեջ հավասարության նշան դնելու ողորմելի փորձերը մերկացնելու նպատակով: Այդ փորձերը հատկապես ակտիվացան վերջին օրերին՝ հայ-թուրքական հայտնի համաձայնության, կամ «Ճանապարհային քարտեզ» կոչված փաստաթղթի բացահայտման առիթով:

Իրականում, վերջին 11 տարում իշխող վարչախումբը պետականության հիմնադրույթների իր ընկալումներում ու պատկերացումներում, նեքաղաքական ու արտաքին քաղաքական բոլոր հարցերում նախկին իշխանությունների հակոտնյան է ու հակադրությունը: Եւ, այս առումով, հայ-թուրքական հարաբերությունները, այդ հարաբերությունների մաս կազմող Հայոց ցեղասպանության խնդիրը, ինչպես նաեւ գործնական քաղաքականությունը ոչ միայն բացառություն չեն, այլեւ տվյալ հակադրությունը հաստատող ու ցուցադրող օրինակներից ամենաբնորոշն են:

## **Ի՞նչ էր ասում Լեւոն Տեր-Պետրոսյանը**

Ինչպես այլ կարեւոր հարցերի, այնպես էլ Հայ-թուրքական հարաբերությունների հետ կապված սկզբունքային մոտեցումները ՀՀ Հիմնադիր-նախագահի 20 տարվա գործունեության ընթացքում փոփոխություն չեն կրել: Դրանք հենվել են իրատես քաղաքականության նրա անխաթար սկզբունքի վրա եւ արտահայտվել հետեւյալ դրույթներում.

ա) Պետության ապահովության ու տնտեսական զարգացման ամենակարեւոր երաշխիքներից մեկը հարաբերություններն են անմիջական հարեւանների, այդ թվում թուրքիայի հետ:

բ) Ըստ այդմ, առանց որեւէ քաղաքական զիջման պետք է հարաբերություններ հաստատել նաեւ թուրքիայի հետ:

գ) Այդ հարաբերությունները պետք է կարգավորվեն առանց երկուստեք նախապայմանների:

դ) Թուրքիան չպետք է հարաբերությունների հաստատումը եւ սահմանի բացումը պայմանավորի երրորդ երկրի՝ Ադրբեջանի հետ կապված հանգամանքներով, այն է՝ Լեւոնային Ղարաբաղի խնդրով:

ե) Հայաստանը չպետք է արտաքին քաղաքականության օրակարգում դնի Ցեղասպանության հարցը, քանզի տվյալ պայմաններում միանգամից անհեռանկարայնության կմատնի այդ հարաբերությունների կարգավորման հնարավորությունը:

զ) Որպեսզի Ցեղասպանության եւ այլ խնդիրների մասին երկու երկրների տրամագծորեն հակադիր համոզմունքները դրան չխանգարեն, պետք է գործադրել «համաձայնություն տարածայնության» մասին բանաձեւը եւ կարգավորել դրանից դուրս մնացող մյուս խնդիրները:

Այստեղ արձանագրենք երկու փաստ-իրողություն:

**Առաջին.** այս սկզբունքների հիման վրա առաջին տարիներին թուրքիայի հետ հարաբերությունների հաստատման գործընթացը հաջողությամբ իրականանում էր. եւ ամենածանր տարիներին թուրքիայի ճանապարհների օգտագործմամբ Հայաստան հաց էր ներկրվում: Կարգավորման այդ ընթացքը խզվեց Ղարաբաղյան պատերազմում մեր հաղթանակների պատճառով՝ թուրքական կառավարության վրա թուրքիայի ազգայնական ուժերի եւ Ադրբեջանի ճնշման հետեւանքով: Արձանագրենք նաեւ, որ անկախ այն բանից, որ Ցեղասպանության հարցը չէր դրված Հայաստանի արտաքին քաղաքակա-

նության հիմքում, Լեւոն Տեր-Պետրոսյանի իշխանության տարիներին մի շարք կարեւոր երկրների կողմից ճանաչվեց 1915-ի Հայոց ցեղասպանությունը:

**Երկրորդ.** Լեւոն Տեր-Պետրոսյանի իշխանավարման ողջ ընթացքում հայ-թուրքական հարաբերություններում նրա քաղաքականությունը ամենասուր ու կատաղի քննադատություն էր ենթարկվում այսպես կոչված «ազգայնական» ամենատարբեր ուժերի եւ առաջին հերթին Դաշնակցության կողմից, նրան համարում էին «թուրքամետ»: Նույն քննադատությունը տանում էին նաեւ «հայրենասեր» ու «հայտնի» մտավորականների մի ամբողջ ջոկատ: Նրանից պահանջում էին Յեղասպանության ճանաչման հարցը դնել արտաքին քաղաքականության հիմքում եւ որեւէ հարաբերություն Թուրքիայի հետ հաստատելու համար վերջինիս առաջ որպէս նախապայման դնել Յեղասպանության ճանաչման հարցը: Նույն մեղադրանքը եւ պահանջը շրջանառվում էր նաեւ Սփյուռքի որոշ շրջանակներում:

### **Ի՞նչը փոխվեց 1998-ից**

1998թ. Ռ. Քոչարյանի գլխավորությամբ իրականացված պետական հեղաշրջումից հետո, այլ հարցերի թվում, արմատապէս փոխվեցին նաեւ հայ-թուրքական հարաբերությունների խնդրի դիրքորոշումները եւ ողջ փիլիսոփայությունը: Արվեց ճիշտ այն, ինչը չէր անում Լեւոն Տեր-Պետրոսյանը, եւ ինչի համար արժանանում էր բուռն քննադատության: Քոչարյանի «հաշվարկներն» այսպիսին էին.

ա) Յեղասպանության հարցը պետք է դնել Հայաստանի արտաքին քաղաքականության հիմքում, դարձնել քաղաքական օրակարգի խնդիր:

բ) Դրանով կսիրաշահենք Սփյուռքին եւ նա ավելի առատաձեռն կգտնվի Հայաստանի հանդեպ:

գ) Այդ դեպքում Թուրքիան տեղի կտա եւ անմիջապէս կբացի հայ-թուրքական սահմանը:

դ) Յեղասպանության ճանաչման, հողերի վերադարձի, Կարսի պայմանագիրը չեղյալ հայտարարելու պահանջների ճնշման տակ Թուրքիան նաեւ անկողմնակալ դիրք կգրավի Լեւոնային Ղարաբաղի խնդրում եւ ջերմեռանդ չի պաշտպանի Ադրբեջանին:

Կրկինք, որ նույն խնդրի նկատմամբ սա տրամագծորեն հակադիր մոտեցում եւ գործելակերպ է: Եւ տրամագծորեն հակադիր այս մոտեցումն էլ հենց դրվեց Հայաստանի արտաքին քաղաքականության հիմքում: Իսկ դրա սկիզբը

կարելի համարել 1998թ. սեպտեմբերին ՄԱԿ-ի ամբիոնից Ռ. Քոչարյանի ելույթը Յեղասպանության մասին: Ժամանակին դա թմբեկահարվեց վերոհիշյալ նույն, այսպես կոչված, ազգայնական ուժերի եւ առաջին հերթին Դաշնակցության կողմից: Ներբողներ երգեցին նույն «հայրենասիրությամբ զբաղվող» հայրենի մտավորականները: Այն ծափողչույններով ընդունեցին Սփյուռքում:

Այստեղ էլ արձանագրենք երեք փաստ-իրողություն:

**Առաջին.** Լեւոն Տեր-Պետրոսյանի նկատմամբ քննադատությունները մինչեւ վերջ էլ չդադարեցին: Մասնավորապես՝ դրանք լայնորեն օգտագործվեցին Սերժ Սարգսյանի ու նրան սատարող ուժերի կողմից վերջին նախագահական ընտրությունների քարոզարշավի ժամանակ՝ նրան մեղադրելով «թուրքամետության» մեջ: Այսինքն՝ Սերժ Սարգսյանը հարազատ էր մնում իր օրգանական նախորդի՝ Քոչարյանի գծին:

**Երկրորդ.** Հայ-թուրքական հարաբերությունների խնդրում քոչարյանադաշնակցական այս մոտեցումները չփոխվեցին նաեւ Սերժ Սարգսյանի պաշտոնավարումից հետո. ոչ մեկը պաշտոնապես չի հայտարարել, թե Յեղասպանության հարցը հանվում է Հայաստանի արտաքին քաղաքականության օրակարգից, մի բան, որ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման խնդրի բանալին է, կամ փիլիսոփայության հիմքը:

**Երրորդ.** Այս ընթացքում, Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Էրդողանի կողմից նամակով պաշտոնական առաջարկ արվեց Հայկական կողմին ստեղծել հայ եւ թուրք պատմաբանների համատեղ մի հանձնաժողով՝ ուսումնասիրելու համար 1915թ. իրադարձությունները, այն է՝ պարզել այդ ժամանակ հայ ժողովրդի ցեղասպանություն եղել է թե՞ ոչ:

Նկատենք, որ նման պաշտոնական առաջարկ հնարավոր էր միայն մի դեպքում, եթե Յեղասպանության խնդիրը դրված է Հայաստանի արտաքին քաղաքականության հիմքում որպես օրակարգային հարց: Նման մի առաջարկ անհնար ու անհեթեթ կլիներ հակառակ դեպքում, եթե պետական քաղաքականության հիմքում դրված լինեին նախկին իշխանության սկզբունքները: Ակնհայտ էր նաեւ, որ սա հեռահար մի որոգայթ էր, եւ, համաձայնել դրան, կնշանակեր պաշտոնապես կասկածի տակ դնել Հայոց ցեղասպանությունը, ըստ էության ուրանալ այն: Դա Թուրքիայի ձեռքին լավագույն կովանը կլիներ՝ կասեցնելու տարբեր երկրների կողմից Յեղասպանության միջազգային ճանաչման 1970-ական թվականներից ի վեր ծավալված գործընթացը: Այդ ժամանակ Հայաստանը դրան շարձագանքեց, եւ, թվում էր, թե այդ առաջարկը մոռացվել է:



2008թ. օգոստոսին, Մոսկվա կատարած այցի ընթացքում, Սերժ Սարգսյանը երկու անակնկալ մատուցեց. Թուրքիայի նախագահ Գյուլին հրավիրեց Երեւան՝ միասին ֆուտբոլային հանդիպում դիտելու, նաեւ հայտարարեց, թե սկզբունքորեն դեմ չէ 1915թ. իրադարձությունների ուսումնասիրության եւ գնահատման համար հայ եւ թուրք պատմաբանների հանձնաժողով ստեղծելու գաղափարին:

### **Վերջին մեկուկես տարում**

2007 թվականի աշնանից, առաջիկա նախագահական ընտրություններին մասնակցելու մասին հրապարակային հայտարարությունից ի վեր, Լեւոն Տեր-Պետրոսյանը իր ելույթներում բազմիցս եւ հիմնավորապես անդրադարձել է նաեւ Հայ-թուրքական հարաբերությունների եւ Յեղասպանության խնդրին: Քաջ գիտակցելով Թուրքիայի, թվում էր, թե մոռացված առաջարկի որոգայթը, նա դեռ 2007 թվականի դեկտեմբերի 8-ի հանրահավաքում հայտարարեց. «Մեզ համար անընդունելի եւ վիրավորական է հայ եւ թուրք պատմաբանների հանձնախումբ ստեղծելու մասին արված հայտնի առաջարկը, քանի որ դա նախ կասկածի տակ է դնում մեր համագգային համոզումը, եւ երկրորդ՝ բազմաթիվ երկրների խորհրդարանների կողմից Յեղասպանության ճանաչման կայացված փաստն այլեւս ավելորդ ու ժամանակավրեպ է դարձնում նման հանձնախմբի ստեղծումը»: Ինչպես այդ, այնպես էլ հետագա ելույթներում նա ամբողջությամբ վերահաստատեց իր նախկին դիրքորոշումները հայ-թուրքական հարաբերությունների ողջ համալիրում, դա հակադրելով ներկա վարչախմբի վարած քաղաքականությանը՝ միաժամանակ զգուշացնելով վերջինիս վտանգավոր հետեւանքներից: Այս տեսակետները պաշտպանել եւ հիմնավորել են նրա գլխավորած Համաժողովրդական շարժման – Հայ Ազգային Կոնգրեսի մեջ մտնող քաղաքական ուժերը եւ դրանց ղեկավարները:

Այսինքն՝ թե՛ իր իշխանության օրոք, թե՛ ընդդիմություն եղած ժամանակ Լեւոն Տեր-Պետրոսյանը սկզբունքորեն հետեւել է Թուրքիայի հետ առանց նախապայմանների հարաբերություններ հաստատելու սկզբունքին: Պարզաբանենք. առանց նախապայմանների հարաբերություններ նշանակում է. Թուրքիան առաջ չի քաշում Դարաբաղի խնդրի առաջնահերթ կարգավորման, հայ եւ թուրք պատմաբանների հանձնաժողովի ստեղծման, Կարսի պայմանագրի վերահաստատման պահանջները: Իսկ Հայաստանը հարաբերությունների հաստատման պարտադիր պայման չի համարում Թուրքիայի

կողմից Յեղասպանությունից ճանաչման հարցը: Այս խնդրի հետ կապված՝ մեջբերենք մի հատված Լեւոն Տեր-Պետրոսյանի՝ 2009թ. մայիսի 1-ի հանրահավաքային ելույթից, որում նա ներկայացնում է հայ-թուրքական հարաբերությունների բնագավառում քոչարյանա-սերժական վարչակազմի միանգամայն սնանկ եւ վնասակար քաղաքականությունից հիշուցիցիան.

– «Քոչարյանի վարչակազմի առաջին գործը եղավ դավաճանական կամ հակազգային հայտարարել թուրքիայի հետ առանց նախապայմանների հարաբերություններ հաստատելու՝ նախկին իշխանությունների որդեգրած քաղաքականությունը:

– Հայաստանի արտաքին քաղաքականության անկյունաքար հռչակվեց Յեղասպանությունից միջազգային ճանաչման պահանջը, որը որպես հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման բանական հիմք՝ հոխորտանքով դրվեց նաեւ թուրքիայի առջեւ:

– Երբ, երկար համառուցուց հետո, Քոչարյանը եւ Օսկանյանը ի վերջո համոզվեցին, որ այս ճանապարհը փակուղային է, նրանք վերադարձան իրենց կողմից ժամանակին դավաճանական հայտարարված՝ թուրքիայի հետ առանց նախապայմանների հարաբերություններ հաստատելու սկզբունքին, ահամա բացահայտելով Հայաստանի թուլությունը եւ թուրքիային հնարավորություն տալով ավելի կոշտացնելու իր դիրքորոշումը:

– Թե՛ այս օբյեկտիվ պատճառով, թե՛ սեփական լեգիտիմությունից խնդրի լուծման նկատառումով, Սերժ Սարգսյանն ընկավ մի ավելի վտանգավոր ծայրահեղությունից գիրկը՝ հայ-թուրքական սահմանի բացման դիմաց անխոհեմաբար համաձայնելով ընդառաջել Յեղասպանություն ուսումնասիրման հարցով հայ եւ թուրք պատմաբաններից կազմված հանձնաժողով ստեղծելու վերաբերյալ թուրքիայի վարչապետ Ռեջեփ Էրդողանի կողմից տարիներ առաջ արված ու համարյա մոռացված առաջարկին»:

Այսպիսով, վերջին մեկուկես տարում միայն Հայ Ազգային Կոնգրեսն է եւ Լեւոն Տեր-Պետրոսյանը, որ հստակ ահազանգել է երեք վտանգավոր զարգացումների մասին.

ա) Հայ եւ թուրք պատմաբանների հանձնաժողովի ստեղծում.

բ) Հայաստան-Թուրքիա-Ադրբեջան եռակողմ բանակցություններ Ղարաբաղի հարցի շուրջ.

գ) Հայաստան-Թուրքիա հարաբերությունների եւ Ղարաբաղյան հակամարտության կարգավորում փաթեթով:

Ո՛չ իշխող կոալիցիայից, ո՛չ իրեն «հայրենասեր մտավորական» համարողներից որեւէ մեկը այդ ահազանգերին լուրջ չվերաբերվեց: Ընդհակառակը՝ փորձում էին մոլորեցնել, հանգստացնել եւ խաբել ժողովրդին, թե այդպիսի վտանգներ չկան: Իսկ հիմա, բանը-բանից անցնելուց հետո, նրանք վայնասուն ու ոռնոց են բարձրացրել՝ հերոսանալու կամ ժողովրդի համակրանքը շահելու համար:

\* \* \*

Միակ ուժը, որը հետեւողականորեն բարձրացրել է այդ հարցերը եւ արել ամեն ինչ՝ վտանգավոր այդ զարգացումները կանխելու համար, եղել է Հայ Ազգային Կոնգրեսը եւ նրա առաջնորդ Լեւոն Տեր-Պետրոսյանը: Նույն ահազանգերը Լեւոն Տեր-Պետրոսյանը հնչեցրել է նաեւ Լեւոնային Ղարաբաղի հարցի վերաբերյալ, բայց դրանք էլ նշված ուժերի կողմից արժանացել են նույն արձագանքին: Հիմա սպասում են, որ այդ փորձանքն էլ մեր գլխին գա, որից հետո էլի վայնասուն ու ոռնոց բարձրացնեն ու հերոսականություն խաղան:

Այսպիսով՝ «Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորում առանց նախապայմանների» սկզբունքը Լեւոն Տեր-Պետրոսյանի իշխանության տարիներին, բոլորովին այլ բան էր նշանակում ու այլ կերպ լուծվում, քան հռչակված նույն սկզբունքն այսօր Սերժ Սարգսյանի համար: Այն ժամանակ դա նշանակում եւ իրագործվում էր առանց Յեղասպանության եւ Լեւոնային Ղարաբաղի խնդրի հետ որեւէ աղերսի: Այժմ այդ հարաբերությունների կարգավորման համար Սերժ Սարգսյանի կողմից արդեն իսկ ծախվել է Հայոց ցեղասպանությունը, իսկ ակնհայտ ու թավալզլոր գործընթացները վկայում են, որ հերթի է դրված նաեւ Լեւոնային Ղարաբաղը: Իսկ բացատրությունը մեկն է. առաջին դեպքում գործ ունենք լեգիտիմ նախագահի եւ պետական գործչի գործելակերպի հետ, որի նպատակը պետության ու ժողովրդի շահն է, երկրորդ դեպքում գործ ունենք իշխանությունը բռնազավթած ոչ լեգիտիմ իշխողի հետ, որի նպատակը ամեն գնով, ընդհուպ՝ բացահայտ ազգային դավաճանությամբ, սեփական իշխանությունը պահպանելն է:

ԱՇՈՏ ՍԱՐԳՍՅԱՆ  
Պատմական գիտությունների  
թեկնածու



**ԵԼՈՒՅԹ ՀԵՍՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆՍՏԱՇՐՋԱՆՈՒՄ**  
(24 հունիսի, 1989թ.)<sup>1</sup>

Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեն, խորապես մտահոգված ընթացիկ նատաշրջանի հակադեմոկրատիկ բնույթով, նրանում հնչած հիմնովին սխալ ու անհեռատես ֆաղափական ծրագրով եւ հայ ժողովրդի իղձերի իրականացման համար ստանձնած պատասխանատվության զգացումով՝ իր պարտքն է համարում Հայաստանի գերագույն իշխանության ամբիոնից անելու հետեյալ հայտարարությունը:

Չնայած պատմական դառը փորձին, չնայած հայ ժողովրդի կրած բազմաթիվ հիասթափություններին, մեր որոշ մտավորական գործիչների կողմից շարունակվում է տենդագին կերպով ֆարոգվել ֆաղափականապես սնանկ եւ վտանգավոր այն մտայնությունը, որ Հայաստանը, շրջապատված լինելով այլակրոն, թշնամի ազգերով՝ իր գոյությունը կարող է պահպանել միայն որեւէ հզոր պետության հովանավորության շնորհիվ: Այս մտայնությունը մեր ժողովրդին մատնում է բարոյական ստրկության եւ զրկում նրան ֆաղափական պարտնյոր դառնալու հնարավորությունից, որը ֆաղափականության մեջ հաջողության հասնելու երաշխիքն է:

---

<sup>1</sup> «Ղարաբաղ» կոմիտեի անունից հնչած այս ելույթի բնագիրը չի պահպանվել: «Գրողակը» այն հրապարակել է (հավանաբար ձայնագրությունից) «Լեւոն Տեր-Պետրոսյանի մտահոգիչ ելույթը» վերնագրով՝ իր կողմից խոստանալով հետագայում «գիրքորոշվել նման զարտուղի եւ դատապարտելի կեցվածքի մը նկատմամբ»: Ուղղել ենք սպագրված տեքստում տեղ գտած ակնհայտ սխալները եւ վրիպումները:

Հայաստանի՝ որպես պանթուրֆիզմի ծրագրի իրականացումը խափանող եւ դրանում Ռուսաստանի շահերին ծառայող գործոնի ըմբռնումը Հայկական հարցը կրկին ներֆաշում է միջազգային ֆաղաֆական հարաբերությունների բարդ ոլորտը, որ հղի է մեր ժողովրդի նակատագրի համար վտանգավոր հետեանմներով:

Թեեւ պանթուրֆիզմը, որպես գաղափարախոսություն, սպրելով իր ծաղկումը Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում, ներկայումս փաստորեն կորցրել է ֆաղաֆական գործոնի իր բովանդակությունը, ֆանի որ թուրֆալեզու ժողովուրդները բռնել են ազգային զարգացման ուղին, նրա դեմ ուղղված խաշակրանմի կոչերը ընդունակ են այն նորից վերածելու ֆաղաֆական գործոնի, եւ Հայաստանը դարձնելու պանթուրֆիզմի, պանիսլամիզմի թիրախ:

Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեն, ավելի ֆան մեկ տարի գլխավորելով համաժողովրդական Շարժումը, սկզբից ի վեր մերժել է օտար հովանավորի վրա հույս դնելու եւ պանթուրֆիզմը որպես մշտական սպառնալիք դիտելու վնասակար մտայնությունը եւ հետետողականորեն կենսագործել է ֆաղաֆական այն սկզբումբը, որ հայ ժողովուրդն իր ազգային իղձերին հասնելու համար պետֆ է սպավիհնի միայն ու միայն սեփական ուժերին: Քաղաֆական այդ ուղին արդեն տվել է իր ակնհայտ դրական արդյունմները, եւ արցախյան խնդիրը մերժման, բռնադատման փուլից դուրս է բերվել լուծման փուլ:

Իր արդարացի, սահմանադրական պայրարի շնորհիվ հայ ժողովուրդը ձեոֆ է բերել բազմաթիվ դաշնակիցներ՝ ի դեմս միջազգային հասարակական կարծիքի, Մոսկվայի, Լենինգրադի, Մերձբալթյան հանրապետությունների եւ այլ դեմոկրատական ուժերի: Դա նախ եւ առաջ հայ ժողովրդի համազգային շարժման շոշափելի նպաստի գնահատումն է հորհրդային Միության դեմոկրատացման պրոցեսում եւ երկրորդ՝ արցախյան խնդրի արդարացի լուծման միակ գրավականը, որը մենմ պարտավոր ենմ փայփայել աշփի լույսի պես:

Գիտակցելով այս իրողությունը՝ արցախյան խնդիրը փակուղու առաջ կանգնեցնել ձգտող ուժերը հայ ժողովրդի դեմ նյութել են մի ահավոր դավ, որին այսօր, կամա թե ակամա, մասնակցում են որոշ հայ մտավորական գործիչներ: Պանթուրֆիզմի վտանգի, Թուրփայի կողմից նվանված հայկական տարածմների խնդրի արծարծումն այս

պահին հետապնդում է միայն ու միայն մեկ նպատակ. հայ ժողովրդին ներկայացնել որպես ռեանշիստներ, վարկաբեկել արցախյան արդարացի պահանջատիրությունը եւ դրանով զրկել նրան վերոհիշյալ դաշնակիցների համակրանքից: Այդ իսկ նկատառումով Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեն խստագույնս դատապարտում է Հայկական հարցը միջազգային հարաբերությունների էժանագին խաղաֆարտ դարձնելու հերթական փորձը եւ համոզմունք հայտնում, որ մեր ազգային իղձերի իրականացման միակ ուղին երկրի դեմոկրատացման գործընթացի անշրջելիության ապահովումն է եւ հայ ժողովրդի միաբանությունը՝ կերտված Հայոց համազգային շարժման գաղափարական սկզբունքների վրա:

Մենք վստահ ենք, որ եթե ժամանակին պաշտոնապես նանաչվեր Հայոց համազգային շարժումը, եւ դրանով փոխըմբռնման հնարավորություն ստեղծվեր հանրապետության ղեկավարության եւ ժողովրդի ներկայացուցիչների միջև, ապա այսօր տեղի չէր ունենա ֆաղափական այն արկածախնդրությունը, որին նվիրված է սույն հայտարարությունը:

*«Դրոշակ», 24 հուլիսի, 1989թ.: Լ. Տեր-Պետրոսյան, Ընտրակի, Երեւան, 2006, էջ 43–45:*

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ՕՐԱԹԵՐԹԻՆ**  
**ՏՎԱԾ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻՑ**  
(9 հոկտեմբերի, 1990թ.)

Չորրորդ կարեւոր խնդիրը՝ Հայաստանի առջեւ ծառայած ֆաղափական մեկուսացման հաղթահարումն է, որով ավելի կբարձրանա ֆաղափական գործընկերոջ մեր կշիռը: Ես նկատի ունեմ ուղղակի հարաբերություններն արտասահմանյան երկրների հետ: Այդ ուղղությամբ մեզ սպասվում է լուրջ ֆաղափական գործունեություն, նկուն դիվանագիտություն, որպեսզի մենք, եթե ոչ բարիդրացիական կամ բարեկամական, ապա գոնե նորմալ հարաբերություններ հաստատենք առաջին հերթին մեր անմիջական հարեւանների հետ: Ես նկատի ունեմ նախ եւ առաջ Վրաստանը, որի հետ մեզ կապում են դարավոր բարեկամական ավանդույթներ, այնուհետեւ՝ Իրանը, որի հետ Հայաստանը, 1828 թվականից ի վեր, որեւէ կոնֆլիկտ չի ունեցել, ուստի այս առումով հոգեբանական տեսակետից որեւէ արգելք չկա ո՛չ հայ ժողովրդի, ո՛չ էլ Իրանի համար: Կրոնական գործոնն այստեղ, ինձ թվում է, որեւէ դեր խաղալ չի կարող, որովհետեւ թե՛ Հայաստանում, թե՛ Իրանում կան ուժեր, որոնք գիտակցում են, որ պետական շահերը վեր են կրոնականից, եւ հարաբերությունները կարող են հաստատվել պետական այդ շահերի գիտակցությամբ: Ես որեւէ արգելք չեմ տեսնում:

Սոցիալական հոգեբանության եւ մանավանդ պատմական արդարության տեսակետից մի-փոքր ավելի բարդ են Հայաստանի եւ Թուրքիայի հարաբերությունները: Այնուամենայնիվ, ավանդական հակասությունները չպետք է խոչընդոտեն, մեր ազգի շահերից ելնելով, առանց որեւէ ֆաղափական զիջման, օգտվելու այն հնարավորությունից, որ



կտան թուրքիայի հետ ստեղծվող հարաբերությունները՝ գոնե զուտ առևտրական, իսկ այնուհետև՝ ավելի լայն տնտեսական հարաբերությունների մակարդակի վրա: Գտնում եմ, որ անհրաժեշտ է օգտվել այդ հնարավորությունից հանուն հենց մեր ժողովրդի շահերի: Սա, ինձ թվում է, կամրապնդի Հայաստանի՝ որպես անկախության ձգտող մի ժողովրդի պետության գոյությունը:

Պետության ապահովության երաշխիքներից մեկը, գուցեև ամենամեծ երաշխիքը, նրա հարաբերություններն են իր անմիջական հարեւանների հետ: Այստեղ մենք, շնորհալուրով մեր արդար իրավունքները, պետք է վեր կանգնենք զգացմունքներից: Ցանկացած տիպի հարաբերություններ մշակելիս եւ դրանք իրականացնելիս մենք պետք է առաջնորդվենք միայն ու միայն պետական մտածողությամբ եւ ժողովրդի շահով: Այլապես մենք դատապարտված կլինենք կործանման: Իսկ հարեւանների հետ ստեղծվող նոր հարաբերություններ մշակելիս մենք կմեծացնենք նաև ֆաղափական գործընկերոջ մեր կշիռը: Դա տալիս է մաներելու հնարավորություն եւ մեծացնում է մեր կշիռը նաև Միության, Կենտրոնի առջև: Քանի դեռ Կենտրոնը համոզված է, որ մենք դատապարտված ենք մշտապես կապված մնալու իրեն եւ որեւէ ելք չունենք դեպի արտաքին աշխարհ, նա մեզ հետ հաշվի կարող է եւ չնստել: Կա մաների եւս մեկ ճանապարհ: Դա ԽՍՀՄ հանրապետությունների հետ ուղղակի պայմանագրեր կնքելու ճանապարհն է՝ ուղղահայաց հարաբերությունները հորիզոնական պայմանագրային հարաբերությունների վերածելու ճանապարհը: Հատկապես մեծ կարեւորություն եմ տալիս Հայաստանի եւ ՌԽՖՍՀ-ի միջև հաստատվելիք հարաբերություններին, եւ այդ ուղղությամբ եւս որոշ փայլեր կատարվել են: Հատկանշական են Ելցինի նամակը ինձ, իմ նամակը Ելցինին: Դրանք նախանշում են որոշ հարաբերություններ, երկու կողմից էլ գիտակցվում է մեր հանրապետությունների, մեր ժողովուրդների շահերը կայսրության շահերին չծառայեցնելու խնդիրը:

*«Հայաստանի Հանրապետություն», 9 հոկտեմբերի, 1990թ.:  
L. Տեր-Պետրոսյան, Ընտրանի, Երեւան, 2006, էջ 123–141:*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ  
ՆԻՍՏՈՒՄ ՈՒՆԵՑԱԾ ԵԼՈՒՅԹԻՑ  
(22 հոկտեմբերի, 1990թ.)**

**Եւ վերջապես, հինգերորդ եւ ամենակարեւոր երաշխիքը**, որ պարտադիր է ցանկացած երկրի բնականոն կենսագործունեության ապահովման համար, մեր անմիջական հարեւանների՝ Իրանի եւ Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորումն է, որի հիմքում պետք է ընկած լինի հայ ժողովրդի շահերից բխող պրագմատիզմը: Սա ֆաղափական շահարկումների առարկա է դարձել, բայց առողջ ուժերը ճիշտ են հասկանում այս հրամայականը: Եւ Հայաստանի իշխանություններն են, որ պետք է մշակեն ու վարեն այս ֆաղափականությունը: Վստահ եմ, որ բարձր ֆաղափական գիտակցության հասած հայ ժողովուրդն ի վիճակի է արդեն իրական ազգային շահերը զանազանել ֆաղափական շահարկումների առարկա դարձած գաղափարներից:

Հայ ժողովրդի խնդիրն է ե՛ւ ֆաղափական, ե՛ւ տնտեսական տեսակետից մեր հանրապետությունը վերածել ինֆնակառավարվող համակարգի, ինֆնուրոյն գործող օրգանիզմի, որն ընդունակ կլինի առավելագույնս օգտվել ներքին ու արտաքին նպաստավոր հանգամանքներից եւ ժամանակին դիմագրավել սպառնացող ֆաղափական ու տնտեսական վտանգները: Ժամանակն է վերջապես լուրջ դասեր ֆաղել մեր պատմական դառը փորձառությունից եւ հախտուն, ռոմանտիկ ազգից վերածվել սառնասիրտ, իրապաշտ, պրագմատիկ ազգի, որի յուրաքանչյուր ֆայլը պետք է լինի կշռադատված, հիմնված կոնկրետ ու անվրեպ հաշվարկի վրա:

Մեր ֆաղափականության հիմնական զենքը պետք է դառնա մաներելու կարողությունը, նկուն դիվանագիտությունը: Մենք պետք է ուշիուշով հետեւենք մեր ֆաղափական գործընկերների ու հակառակորդների հարաբերություններին եւ նուրբ մաներներով հմտորեն օգտվենք նրանց միջեւ գոյություն ունեցող անգամ չնչին հակասություններից: Դրա համար անհրաժեշտ է մեկընդմիջա հրաժարվել ՅՈՒՅԱԴԻԱԿԱՆ, անլուրջ ֆաղափական գործողություններից, որոնք մի կողմից ավելորդ կերպով զբոսում են մեր ֆաղափական գործընկերներին ու հակառակորդներին, իսկ մյուս կողմից՝ չհանգեցնելով որեւէ օգտակար արդյունքի, խոր հիասթափություն են առաջացնում զանգվածների մեջ:

Քաղափականությունը համակարգ է, ոչ թե պատահական գործողությունների պարզ գումար, ուստի ինքնուրույն ֆաղափականություն վարող ոչ մի ընտրյալ իշխանություն իրավունք չունի տուրֆ տալ կողմնակի ննջումներին եւ շեղվել իր որդեգրած հիմնական դիրքորոշումից: Քաղափականության որեւէ համակարգի կարելի է հակադրել միայն մի այլ համակարգ եւ ոչ թե նրա ոգուն հակասող առանձին գործողությունների պահանջներ: Դա չի նշանակում, անշուշտ, որ ֆաղափական համակարգը դոգմա է եւ ենթակա չէ սրբագրումների՝ պահի հրամայականին համապատասխան:

Ամփոփելով այս համառոտ վերլուծությունը՝ Հայաստանի ներկա ժողովրդավարական իշխանության որդեգրած ֆաղափականության էությունը կարելի է ձեակերպել հետեւյալ կերպ. առանց լուրջ առնակատումների, առանց ավելորդ ցուցամոլության ու շտապողականության, հանդարտորեն, նուրբ մաներներով, նկուն դիվանագիտությամբ, միաժամանակ, հաստատակամ ու անդանդաղ, ֆայլ առ ֆայլ **նոր եւ կայուն ֆաղափական երաշխիքներ ստեղծել մեր հանրապետության գոյության ու բարգավաճման համար**: Իրագործելով այս խնդիրը՝ մենք լիովին կատարած կլինենք մեր պարտքը սերունդների առջեւ՝ նրանց թողնելով մեր ազգային մյուս իղձերի իրականացման պարտականությունը:

**ՀԱՅՈՑ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ**  
**2-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ ՈՒՆԵՑԱԾ ԵԼՈՒՅԹԻՑ**  
(24 նոյեմբերի, 1990թ.)

Մի այլ մեղադրանք, որը նույնպես իր պատմությունն ունի. իբր Հայոց համազգային շարժումն անտեսում է Հայ Դատը, հրաժարվում հայ ժողովրդի պատմական իրավունքներից: Մենք տվել ենք մեր բացատրությունները, բայց դրանք ամենեւին չեն ազդում մեր ընդդիմախոսների վրա: Բանավեճի առանձնահատկությունը, դժբախտաբար, այն է, որ դրանով երբեք հնարավոր չէ ազդել ընդդիմախոսի վրա: Բանավեճը նրա համար է, որ համոզես ժողովրդին, երրորդ կողմին: Միեւնույն է, եթե որեւէ դիրքորոշում ձեռնառու է մեր ընդդիմախոսներին, որքան էլ հիմնավորված լինեն մեր փաստարկներն ու պարզաբանումները, նրանք նույն մեղադրանքները շարունակ կրկնելու են, որովհետեւ ֆաղափական այլ խաղափարտ չունեն:

Ի՞նչ կարելի է ասել այս մասին: Մեր վերաբերմունքը Հայ Դատին միանշանակ է: Նախ՝ տիրում է այն թյուր տեսակետը, թե իբր Հայ Դատը Սփյուռքի դատն է, արեւմտահայության խնդիրը: Ամենեւին ո՛չ, որովհետեւ պետք է ելնել այն փաստից, որ Հայաստանի բնակչության կեսն էլ, առնվազն կեսը արեւմտահայ է: Եւ սփյուռֆահայության զգացմունքները նույնքան հարազատ են հայրենյաց ժողովրդին, որքան սփյուռֆահայությանը: Այնպես որ, Հայ Դատի պաշտպանությունը դարձնել Սփյուռքի մենաշնորհը, ինձ թվում է, հիմքից սխալ է: Սա՝ մեկ: Իսկ երկրորդը՝ մենք բազմիցս կրկնել ենք, որ Հայոց համազգային շարժումն ամենեւին չի հրաժարվում հայ ժողովրդի պատմական իրավունքներից, Յեղասպանության միջազգային ճանաչման պահանջից, բայց

գտնում է, որ այդ գաղափարներն անհրաժեշտաբար տեղ գտնելով ֆա-  
ղափական կուսակցությունների ու կազմակերպությունների ծրագրերում  
եւ լինելով նրանց գործունեության կարեւորագույն խնդիրներից, այսօր  
չեն կարող դառնալ պետական ֆաղափականության օրակարգի հարց:  
Սա է մոտեցումը: Այս սրահում ներկա է մոտ 1500 ազգային ֆաղափա-  
կան գործիչ: Դուք պարտավոր եք իմանալ, որ այս մեղադրանքները  
դեռեւս պիտի շարունակվեն, բայց մենք իրավունք չունենք վատնելու  
մեր ուժերը, մեր եռանդը նման շարախոսությունների պատասխանելու  
համար, դրանք պետք է անտեսել, եւ միայն այս ձեւով է, որ դրանք  
կմարենք: Ես ուրախ եմ, որ մեր համագումարը ցուցադրվում է հեռուս-  
տատեսությամբ, եւ ես հնարավորություն ունեմ հստակ տալու մեր տե-  
սակետը խնդրո առարկա հարցի վերաբերյալ: Հայ Դատը, արեւմտա-  
հայության իրավունքներն իր պատմական հայրենիքի նկատմամբ պե-  
տական ֆաղափականության օրակարգի հարց կդառնան միայն այն  
ժամանակ, երբ հայոց պետությունն ի վիճակի կլինի սեփական ուժե-  
րով լուծել այդ խնդիրները:

Սրա հետ առնչվող մի այլ հարց, որը նույնպես դարձել է ֆաղափա-  
կան շահարկումների առարկա: Մեր կամքից անկախ այդ հարցի վրա  
ավելի շատ ուշադրություն է հրավիրվել, քան արժանի էր: Դա Թուր-  
քիայի հետ մեր հարաբերությունների հարցն է:

Մենք այդ հարաբերությունները բացարձակապես չենք առանձնաց-  
նում մեր բոլոր հարեւանների հետ ձեւավորվելիք հարաբերություննե-  
րից: Բայց, չգիտես ինչու, շատերը, մոռանալով մյուս հարեւաններին,  
մեզ անընդհատ ստիպում են խոսել միայն ու միայն Թուրքիայի հետ  
հարաբերությունների մասին: Սա էլ հասկանալի է, բայց ունի ե՛ւ օբյեկ-  
տիվ, ե՛ւ սուբյեկտիվ պատճառներ: Օբյեկտիվն այն է, որ 70 տարի մի  
հոգեբանությամբ սնված մեր ժողովրդի համար այսօր դժվար է հոգե-  
բանական շրջադարձ կատարել եւ հնարավոր տեսնել Թուրքիայի հետ  
երկխոսությունը: Սուբյեկտիվն էլ այն է, որ այդ հարցը շահարկում են  
նույնիսկ այն մարդիկ, ովքեր համոզված են, որ այդ հարաբերություն-  
ները մեզ համար ունեն կենսական նշանակություն: Դրանք ամենեւին  
ինքնանպատակ չեն, այլ՝ թելադրված այն առողջ գիտակցությամբ,  
որին վերջապես հասել է մեր ժողովուրդը: Ես կարծում եմ, որ վերջին  
տարիներին ֆաղափական մտքի մեջ տեղի ունեցած ամենամեծ հեղա-

փոխությունը հրաժարումն է օտարին ապավինելու, երրորդ պետության հովանավորության վրա հույս դնելու սնանկ գաղափարից: 300 տարի շարունակ հայ ժողովրդի ֆաղափական միտքը թունավորվել է այն պատահանով, որ մեծ տերությունները՝ երբեմն Արեւմտյան Եւրոպան, իսկ որպէս օրենք՝ Ռուսաստանը, պետք է լինեն մեր ազգային խնդիրների իրագործողը: Սա այն գաղափարն է եղել, որին տուրք տալու համար մենք հատուցել ենք մեծագույն կորուստներով: Այսօր է, որ հայ ժողովուրդն արթնանում է քնից, հրաժարվում այս միամիտ հավատից եւ տեսնում, որ նույնիսկ Խորհրդային Միությունը, որ թվում էր, թէ 70 տարի որոշ երաշխիքներ է ապահովել մեր ազգի գոյության համար (եւ դա իրականություն է, քանի որ այդ ընթացքում Հայաստանի սահմանների վրա կրակոցներ չեն եղել, հայ ժողովուրդը, չնայած գյուղի ֆայֆայման եւ ստալինյան եղեռնի շրջանում կրած ահռելի կորուստներին, այնուամենայնիվ, հնարավորություն ունեցել է զբաղվելու խաղաղ, ստեղծագործ աշխատանքով), այսօր արդեն գտնվելով փլուզման եզրին, այլեւս չի կարող հանդիսանալ մեր ազգի գոյության երաշխավորը. եւ մենք է, որ պետք է փնտրենք, ստեղծենք մեր ազգի գոյության նոր, ավելի հուսալի երաշխիքներ: Ահա այս երաշխիքների շղթայի օղակներից մեկն է միայն Հայաստանի եւ Թուրքիայի հարաբերությունների կարգավորումը, որը, ինչպէս ասացի, մեր հասարակական հոգեբանության յուրահատկություններից էլնելով, իր վրա ավելի շատ ուշադրություն է բեւեռել, քան մեր մյուս հարեւանների հետ ունեցած հարաբերությունները:

Այստեղ էլ, որպէսզի ոչ մի թյուրիմացություն չլինի, ես ուզում եմ շեշտել, որ Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորումը, որը առաջին հերթին նշանակում է առեւտրական, տնտեսական հարաբերություններ, ամենեւին չի նշանակում հրաժարում մեր պատմական իրավունքներից, Ցեղասպանության դատապարտման պահանջից: Սակայն մենք առաջնորդվում ենք այն սկզբունքով, որ երկու կողմն էլ, նկատի ունենալով հարցի նրբությունը (չմոռանալով, որ այս հարցերը նույնքան նուրբ եւ սուր են նաեւ Թուրքիայի համար), պետք է դրսևտրեն ֆաղափական իրատեսություն եւ այդպիսի հարաբերություններ հաստատելիս չփորձեն միմյանց ներկայացնել ֆաղափական պայմաններ: Միայն այդպիսի մոտեցումն է, որ հնարավորություն կտա իրականաց-

նել Հայաստանի համար այդքան անհրաժեշտ հարաբերությունների կարգավորումը իր հարեանների, ի թիվս որոնց՝ Թուրքիայի հետ:

*«Հայաստանի Հանրապետություն», 28 նոյեմբերի, 1990թ.:  
L. Տեր-Պետրոսյան, Ընտրանի, Երեւան, 2006, էջ 157–167:*

**«ՆԵՉԱՎԻՍԻՄԱՅԱ ԳԱԶԵՏԱ» ԹԵՐԹԻՆ**  
**ՏՎԱԾ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻՑ**  
(28 մայիսի, 1991թ.)

*– Մութալիբովն ասել է նաեւ այն մասին, որ տեղի է ունենում «հայկական էքսպանսիա»: Ձեր մի քանի արտահայտությունները մամուլում «պատմական իրավունքների» մասին նույնպես կարելի է գնահատել որպես իր նախկին սահմաններում Մեծ Հայաստանը վերականգնելու մտադրություն: Դա որոշակի անհանգստություն է առաջացնում Թուրքիայում...*

– Մենք արդեն պարզաբանել ենք մեր դիրքորոշումն այդ հարցի վերաբերյալ, այդ թվում եւ «Նեգավիսիմայա Գազետայի» էջերում: Ես խոսել եմ ոչ թե «պատմական իրավունքների», այլ պատմական փաստերի մասին: Թուրքիայի հետ մենք տարածայնություններ ունենք պատմական փաստերի գնահատման հարցում: 1915 թվականի եւ դրան հաջորդած տարիների իրադարձությունները մենք գնահատում ենք որպես ցեղասպանություն: Թուրքերն այլ կերպ են մտածում: Բայց դա չպետք է ազդի մեր այսօրվա հարաբերությունների վրա: Դա ուրիշ հարց է:

Հայաստանը միշտ համարել է, որ Ռուսաստանն է մեր ժողովրդի անվտանգության եւ գոյատեւման երաշխավորը: Բայց վերջին երեք տարիների ընթացքում հայ ժողովուրդը դառնությամբ գիտակցեց, որ այդ երաշխիքներն այլեւս չկան: Սումգայիթի եւ Բաֆվի շարդերի ժամանակ ռուսական բանակը չպաշտպանեց խաղաղ բնակչությանը:

Բացի այդ, բացառված չէ, որ խորհրդային բանակն, անկախ մեր կամքից, հեռանա Անդրկովկասից: Նախադեպերը պատմության մեջ



կան: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ ռուսական բանակը, հաղթականորեն պատերազմելով Թուրքիայի դեմ, հեռացավ Արևմտյան Հայաստանից: Դա 1918 թվականին էր:

Մենք հասկանում ենք, որ կարն ժամանակահատվածում չենք կարող ստեղծել ժամանակակից բանակ եւ հզոր տնտեսություն, որպեսզի միայնակ դիմակայենք հնարավոր վտանգները: Հենց միայն այս պատճառով բոլոր խոսակցությունները «Հայկական Էսպանսիայի սպանալիքի» մասին մաքուր շահարկումներ են:

Մեր, ինչպես ցանկացած պետության, անվտանգության գլխավոր երաշխիքը հարաբերությունների կարգավորումն է հարեւանների հետ: Ուստի մենք արտահայտեցինք մեր կամքը՝ փոխշահավետ, երկկողմ հարաբերություններ հաստատել Թուրքիայի հետ: Այդ երկրի դեսպանն այցելեց Հայաստան: Ոչ ֆիչ բարդություններ կան, բայց գլխավորն այն բանի գիտակցումն է, որ երկու հարեւան ժողովուրդներն սկսել են հարաբերությունների հաստատումը: Արդեն կան բանավոր պայմանավորվածություններ՝ որ առաջ չեն փշվի ֆաղափական պայմաններ տնտեսական եւ մշակութային կապերի զարգացման համար: Ընդհակառակը, այդ կապերը հիմք կստեղծեն ֆաղափական խնդիրների լուծման համար:

*Թարգմանությունն ռուսերենից: «Նեգավիսիմայա Գազետա» ("Не-  
зависимая Газета"), 28 մայիսի, 1991թ.: Հարցազրույցը՝ Ալեք-  
սանդր Բանգերսկու: Լ.Տեր-Պետրոսյան, Ընտրանի, Երեւան,  
2006, էջ 207–215:*

**ՀԱՅՈՑ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ  
4-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ ՈՒՆԵՑՑԱԾ ԵԼՈՒՅԹԻՑ**

Իրանի եւ Թուրքիայի նկատմամբ մշակվող հարաբերություններն ընդհանուր առմամբ ձեզ հայտնի են: Հայաստանի ներկա իշխանությունները սկզբից եւեթ որդեգրել էին այն փաղափականությունը, որ ցանկացած պետության գոյության ամենահուսալի երաշխիքը նրա բնականոն հարաբերություններն են անմիջական հարեւանների հետ: Սա մեր արտաքին փաղափականության հիմնաբարն է: Մենք չենք կարող հանրապետության անվտանգության երաշխիքների համակարգ ստեղծել՝ հույս դնելով թեկուզ հզոր ու ազդեցիկ, բայց հեռավոր պետությունների՝ Ռուսաստանի, Եւրոպայի կամ Միացյալ Նահանգների վրա: Մեր խնդիրները մենք նախ եւ առաջ պետք է լուծենք երկրամասում, անմիջական հարեւանների հետ:

Այս առումով Իրանի հետ հարաբերություններում որեւէ բարդություն չի նկատվում: Ընդհակառակը, կողմերն ունեն նույնիսկ ընդհանուր փաղափական շահեր, այն էլ՝ պատմական հակասությունների բացակայության պայմաններում, որ չափազանց նպաստավոր հանգամանք է հայ-իրանական հարաբերությունների զարգացման գործում: Գոհունակությամբ պետք է նշել, որ վերջին շրջանում Իրանի հետ հարաբերությունները զարգանում են բնականոն, արագացված ընթացքով եւ, վստահ եմ, շուտով մենք կզգանք այդ հարաբերությունների իրական արդյունքները:

Ինչ խոսք, Թուրքիայի հետ հարաբերությունները շատ ավելի բարդ են ընթանում, թեեւ ինչպես վերը նշվեց, անցած չորս տարիների ընթացքում մեզ հաջողվեց հաղթահարել գոյություն ունեցող հո-

գեբանական արգելքները: Հաջողվեց մեր ժողովրդին ներշնչել, որ Թուրքիայի հետ հարաբերություններում մենք պարտավոր ենք առաջնորդվել միայնումիայն պետական շահերով, իրատես ֆաղափականության սկզբունքներով:

Հարցի առթիվ թեև մեր տեսակետը հայտնի է, սակայն հարկ եմ համարում ես մեկ անգամ կրկնել. Հայաստանը եւ Թուրքիան, լինելով հարեւան երկրներ, ունեն ակնհայտ փոխադարձ շահեր, որոնք հիմք են հանդիսանում առեւտրական, տնտեսական, գիտա-մշակութային լուրջ հարաբերություններ հաստատելու համար: Լինելով փոխշահավետ, հարաբերություններն այնքան թանկ են կողմերի համար, որ նրանք պետք է խուսափեն միմյանց ֆաղափական նախապայմաններ թելադրելուց:

Պետք է նշել, որ այս տեսակետն ընդհանուր առմամբ ընդունվում էր նաեւ Թուրքիայի պաշտոնական շրջանակների կողմից: Սակայն վերջին շրջանում թուրքական կառավարության որոշ ներկայացուցիչների ելույթներում նկատվում են այս սկզբունքին հակասող հայտարարություններ: Սակայն սա սպասելի էր, ուստի մեզ ամենեւին չպետք է խտնեցնի: Այստեղ կա երկու հանգամանք, որոնք պետք է սառնասրտորեն վերլուծենք՝ բոլորովին չգարմանալով Թուրքիայի դիրքորոշման մեջ տեղի ունեցած փոփոխության առթիվ:

Առաջինն Արցախի խնդիրն է: Բնականաբար, Թուրքիան չէր կարող անտարբեր մնալ իր արյունակիցների բախտի նկատմամբ: Չպետք է մոռանալ, որ բացի պաշտոնական ֆաղափականությունից, Թուրքիայում եւս գոյություն ունի հասարակական կարծիք, ինչպես նաեւ ընդդիմադիր ուժեր, որոնք ֆաղափական վարկ ձեռք բերելու նպատակով շահարկում են Արցախի հարցը: Այսինքն, Արցախի խնդիրը կարծեմ թե աստիճանաբար դառնում է Թուրքիայի ներքին ֆաղափական հարց: Բոլոր կուսակցությունները, ֆաղափական գործիչները, մեկը մյուսից առաջ անցնելով, փորձում են ապացուցել իրենց նախանձախնդրությունը ադրբեջանցի ցեղակիցների մղած պայքարի նկատմամբ: Սա, ինչ խոսք, վտանգավոր միտում է: Առայժմ թուրքական կառավարությունը դեռեւս կարողանում է հավասարակշռել այս ճնշումը: Սա պետք է գնահատել, որովհետեւ կառավարությունը համենայն դեպս առաջնորդվում է երկրի իրական շահերով, եւ, ամենայն հավանականությամբ, չէր ցանկանա, որ Արցախի խնդիրը խանգարեր հայ-թուրքական հարաբերությունների

կարգավորմանը: Այդուհանդերձ, թուրքական կառավարությունը ենթարկվում է լուրջ ճնշման եւ այդ պատճառով ստիպված է որոշ զիջումներ կատարել հասարակական կարծիքին, իսկ միջազգային ասպարեզում՝ աջակցել Ադրբեջանի դիվանագիտական-ֆարոզչական ջանքերին:

Երկրորդ հանգամանքը կապված է Խորհրդային Միության փլուզման եւ Ռուսաստանի վերը նշված դիրքորոշման պատճառով Անդրկովկասում առաջացող վակուումի հետ: Լինելով հզոր, լուրջ դիվանագիտական ավանդույթներ ունեցող պետություն՝ Թուրքիան անգամ բնագրաբար պետք է զգար, որ ժամանակն է օգտվելու այդ դատարկությունից: Այդ պատճառով, նահանջելով հայ-թուրքական հարաբերությունների հաստատման խնդրում ֆաղափական նախապայմաններ չներկայացնելու սկզբունքից, Թուրքիան վերջերս սկսել է նման պայմաններ առաջադրել: Դա տեղի ունեցավ եւ Պրագայում, եւ ԱՀԽ-ի շրջանակներում ընթացող խորհրդածողովներում, եւ Թուրքիայի դեսպան Վոլֆան Վուրալի Հայաստան կատարած վերջին այցելության ժամանակ: Սա նույնպես բնական է եւ մեզ համար լիովին հասկանալի: Ես ստիպված էի դեսպանին բացահայտորեն ասել հետեւյալը՝ դուք ուզում եք օգտվել ստեղծված դրությունից, տեսնելով, որ նախկին միութենական հանրապետությունների անվտանգության համակարգը խախտւած է, եւ մտածելով, որ մենք խիստ թուլացած ենք, փորձում եք մեզնից ինչ-ինչ ֆաղափական հայտարարություններ պոկել: Փորձ արվեց նրան բացատրել, որ դա իրատեսական մոտեցում չէ, եւ դրա վերջնական արդյունքը պարզապես կլինի հայ-թուրքական հարաբերությունների վիժեցումը, որը ձեռնառու չէ ո՛չ Հայաստանին, ո՛չ էլ Թուրքիային: Դեսպանին առաջարկվեց մեր դիվանագիտական հարաբերությունները հաստատել միջազգային ընդունված չափանիշերի հիման վրա: Քանի որ երկու պետություններն էլ միջազգային հեղինակավոր կազմակերպությունների՝ եւ ԱՀԽ-ի եւ ՄԱԿ-ի անդամ են, իրենց հարաբերությունները պետք է հաստատեն միայնումիայն այդ կառույցների սկզբունքների հիման վրա, առայժմ մի կողմ թողնելով հայ-թուրքական երկկողմանի ֆաղափական անհամաձայնությունները: Թեեւ պարզ է, որ այդ ֆաղափական խնդիրներն էլ արժանի են լուրջ ֆննսարկման, սակայն հարաբերությունների երկրորդ փուլում՝ դիվանագիտական, տնտեսական, առևտրական կապերի հաստատումից հետո: Այն ժամանակ, ահա, մենք կֆննսարկենք

բոլոր վիճելի հարցերն ու տարաձայնությունները, եւ վստան եմ, որ իրական պետական շահերը կողմերին կստիպեն գտնել փոխզիջումներ, երկուստե՛ք ընդունելի մոտեցումներ:

*«Հայաստանի Հանրապետություն», 2 ապրիլի, 1992թ.: Լ. Տեր-Պետրոսյան, Ընտրանի, Երեւան, 2006, էջ 273–290:*

## 1992 թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 11-Ի ՄԱՄԼՈ ԱՍՈՒԼԻՍԻՑ

*– Ինչպիսի՞ քաղաքականություն է վարում Հայաստանը հարեւան Թուրքիայի նկատմամբ:*

– Թուրքիայի հետ հարաբերություններում մենք առաջնորդվել ենք մեր որդեգրած՝ հարեւանների հետ հարաբերությունների կարգավորման սկզբունքով, եւ այս շրջանակներում իրականացրել ենք չափազանց հետետողական ֆաղափականություն՝ սկսած առաջին օրվանից, երբ Շարժումը ձեւավորվեց որպէս հասարակական-ֆաղափական շարժում եւ որդեգրեց իր սկզբունքները: Այդ օրվանից մինչեւ հիմա մեր իշխանությունները հետետողական ֆաղափականություն են վարել, ոչ մի շեղում թույլ չեն տվել, եթէ նկատի չունենանք ֆիչ առաջ հիշատակված մեր արտգործնախարարի ելույթը: Եւ պետք է ասել, որ Թուրքիայի կողմից եթէ ոչ համարժեք, ապա մոտավորապէս նույն դիրքորոշմանն ենք հանդիպում: Թեեւ պետք է նկատի ունենալ, որ այս հարցը, որքան բարդ է մեզ համար, գուցէ նույնքան բարդ է Թուրքիայի համար:

Թուրքիայում էլ հասարակական մեծ հնչեղություն ունի Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորումը, այս հարցը ֆաղափական շահարկման, ֆաղափական պայքարի առարկա է: Եւ դրա վկայությունը Թուրքիայի խորհրդարանի վերջին նիստն էր, որտեղ Հայաստանին հաց մատակարարելու պատճառով նույնիսկ հարց բարձրացվեց անվտանգություն հայտնել թուրքական կառավարությանը: Սա չափազանց էական հարց է, որը մենք պետք է հաշվի առնենք: Թուրքական կառավարությունն էլ ստիպված է հաշվի նստել հասարակական կարծիքի հետ, ստիպված է հաշվի նստել ընդդիմության ֆաղափական ճնշման հետ: Եւ սրանով է բացատրվում այն հանգամանքը, որ Թուրքիայի կողմից հա-

մապատասխան շտապողականություն մենք չենք տեսնում այս հարաբերությունների կարգավորման հարցում: Իհարկե, այստեղ գումարվում է նաև Լեոնային Ղարաբաղի հարցը, որի նկատմամբ թուրք ժողովուրդը շատ զգայուն է, սա էլ մենք պետք է հաշվի առնենք:

Հացի առաժման թույլտվությունը միայն բարի կամքի դրսևորում չէր, որովհետև, ինչպես պարզվեց խորհրդարանի նիստում, այդ որոշումը կապված էր նաև համապատասխան ոլսկի հետ: Ուրեմն, սա ուներ ավելի լուրջ հիմքեր: Թուրքիային էլ է ձեռնառու կարգավորել իր հարաբերությունները Հայաստանի հետ: Ինչպես ասացի, այստեղ ամենամեծ խոչընդոտը ԼՂՀ-ի խնդիրն է: Թուրքիան ստիպված է, հասարակական կարծիքին տուրք տալով, կորցնել իր չեզոքությունը, միջազգային ատյաններում այս հարցում հանդես գալ Ադրբեջանի հանդեպ բացահայտ աջակցությամբ: Բայց ես համոզված եմ, որ Թուրքիան էլ շահագրգռված է Լեոնային Ղարաբաղի հարցի խաղաղ կարգավորմամբ: Սա էլ մեծ շանս է մեզ համար, որովհետև, եթե Թուրքիան էլ իրականում դեմ լիներ այս պրոցեսին, չափազանց կոժվարանար հարցի խաղաղ կարգավորումը, այսինքն՝ զինադադարի հաստատումը եւ պատերազմի ավարտը:

Որքան արագ մեզ հաջողվի զինադադար կնքել Լեոնային Ղարաբաղում, կարծում եմ, այնքան արագ կգարգանան մեր հարաբերությունները Թուրքիայի հետ: Այսօր էլ, չնայած այս բոլոր դժվարություններին, համենայն դեպս, ես պետք է այդ հարաբերությունները գոհացուցիչ համարեմ, հատկապես հացի մատակարարման խնդրում: Ինչպես գիտեմ, Հաֆեզ Ասադը Հայաստանին նվիրեց 6000 տոննա ցորեն՝ նկատի ունենալով մեր դժվար կացությունը: Այդ ցորենը մենք Հայաստան պիտի տեղափոխենք դարձյալ Թուրքիայի նանապարհով, ամենայն հավանականությամբ՝ ավտոնանապարհներով: Մենք ուզում ենք, որպեսզի գործարկվի նաև Մարգարայի նանապարհը. սա եւս մի լրացուցիչ նանապարհ է, որը կօգնի մեր հոգսերի թեթևացմանը: Արդեն արտաքին գործերի նախարարությունների մակարդակով վերջնականապես համաձայնեցված է դիվանագիտական հարաբերություններ հաստատելու արձանագրությունը: Դեպքերի հաջող զարգացման դեպքում մինչև տարեվերջ հնարավոր կլինի ստորագրել դիվանագիտական հարաբերությունների հաստատման այդ փաստաթուղթը: Կիրակի օրը եւ 15 րո-

պեանոց հեռախոսագրոյց ունեցա վարչապետ պարոն Գեմիրեկի հետ (ինքն էր զանգահարել): Զրոյցի ժամանակ ես բարձրացրի ես մեկ հարց. Գերմանիայից եւ Բուլղարիայից էլեկտրաէներգիայի մատակարարումը Հայաստան սպահովել Թուրքիայի ցանցերի միջոցով: Տեխնիկապես դա հնարավոր է, եւ վարչապետը խոստացավ կարգավորել նաեւ այդ հարցը: Նա հանձնարարեց իրենց էներգետիկներին, որոնք արդեն կապի մեջ են Հայաստանի էներգետիկների հետ, զբաղվել այս հարցով: Հաջողութան դեպքում այս ձմեռ մենք 100–150 մեգավատ էլեկտրաէներգիա կստանանք նաեւ այս քանապարհով, որը, կարծում եմ, մեծ աշակցություն կլինի մեզ:

*«Հայաստանի Հանրապետություն», 14 նոյեմբերի, 1992թ.:  
Լ. Տեր-Պետրոսյան, Ընտրանի, Երեւան, 2006, էջ 305–328:*



**ՀԱՅՈՑ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ**  
**5-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ ՈՒՆԵՑԱԾ ԵԼՈՒՅԹԻՑ**  
(27 հունիսի, 1993թ.)

ՀՀՇ-ի և Հայաստանի ներկա իշխանությունների մահացու «խառաններից» է նաև հակառուսականությունը և, ո՛վ սարսափ, երդվյալ թուրամետությունը:

Հակառուսականության շուրջ չեմ ուզում ծավալվել, անելով միայն հետեյալ, թեկուզ մերկապարանոց թվացող հայտարարությունը:

Հայ-ռուսական հարաբերությունների երեհնարյուրամյա պատմության ընթացքում Հայաստանի և Ռուսաստանի կապերը երբեմիցե այնքան սերտ, այնքան անկեղծ, այնքան բարեկամական չեն եղել, որքան Ելցիճի և Լեոն Տեր-Պետրոսյանի օրոք, և դա միմիայն շնորհիվ այն բանի, որ երկու երկրներում էլ իշխանության են եկել իրապես ժողովրդավարական ուժեր, որոնց գործունեությունը հիմնվում է միջազգային իրավունքի նորմերի և համամարդկային արժեքների վրա: Հայ-ռուսական բարեկամության նորընձա շատագուրի դերին հավակնող Հայ հեղափոխական դաշնակցության կասկածելի և բացահայտ կապերը Ռուսաստանի պահպանողական, սեմարյուրյակային տարրերի հետ՝ իրականում սպառնում են վտանգել այդ բարեկամությունը:

Ինչ վերաբերում է թուրամետությանը, ապա եթե այդպիսին է համարվում Թուրքիայի՝ որպես հարեան երկրի հետ բնականոն հարաբերություններ զարգացնելու, փոխշահավետ համագործակցություն ծավալելու ձգտումը, այո՝ այդքանով մենք թուրամետ ենք: Եթե այդպիսին է համարվում Թուրքիայի նանապարհներով ցորեն և կենսական այլ ապրանքներ ստանալու փաստը, այո՝ այդքանով նույնպես մենք թուր-

բամեա ենք: Միայն թե այդ դեպքում չպետք է մոռանալ, որ դեռևս 1918 թվականին Արամ Մանուկյանի առաջին գործերից մեկը եղել է հայ ժողովրդի ջարդարար հալիլ փաշայի ձեռքով Հայաստանի սովյալների համար 20.000 փոսթ ցորենի ստացումը:

*«Հայաստանի Հանրապետություն», 28 հունիսի, 1993թ.: Լ. Տեր-Պետրոսյան, Ընտրանի, Երեւան, 2006, էջ 369–386:*

**ԵԼՈՒՅԹ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 80-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ  
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎՈՒՄ  
(21 ապրիլի, 1995թ.)**

Մեծարգո նախագահ,

Մեծարգո ներկաներ,

Այս օրերին հայ ժողովուրդը, նշելով իր ազգային ողբերգության 80-ամյակը եւ գլուխ խոնարհելով 1,5 միլիոն նահատակների սուրբ հիշատակի առջեւ, մեկ անգամ եւս հավաստում է ապրելու իր անկուտրում կամֆը եւ ժողովուրդների համաշխարհային ընտանիքում իր արժանի տեղն զբաղեցնելու վնոականությունը:

Հայաստանի մայրաքաղաքում գումարված միջազգային այս գիտա-ժողովն ըստ այդմ մենք դիտում ենք նախ՝ որպես հարգանքի տուրք Ցեղասպանության զոհերի հիշատակին, եւ երկրորդ՝ որպես բարեկամության ցույց մեր նորանկախ պետականության նկատմամբ:

Խորապես գնահատելով ձեր պրոֆեսիոնալիզմն ու իրազեկությունը, եւ չեմ հանդգնի մտնել Հայոց ցեղասպանության հետ կապված պատմական եւ իրավագիտական բարդ խնդիրների հորձանուտը, այլ պարզապես կբավարարվեմ մի քանի հայտնի նշմարտությունների արձանագրմամբ, որը, իմ կարծիքով, հույժ անհրաժեշտ է արդի հայ հասարակության քաղաքական գիտակցության ձեւավորման տեսակետից:

Պատմական փորձի ուսցիոնալ յուրացման եւ անցյալի սխալները չկրկնելու առումով, կարծում եմ, ժամանակն է իրերը գնահատել սառը դատողությամբ՝ հրաժարվելով զգացական ընկալումներից եւ հոգեբանական պայմանականություններից:

1. Հայոց ցեղասպանությունն անտեղի է բացատրել հայ եւ թուրք ժողովուրդների կրոնական, էթնիկական, ռասայական անտագոնիզմով կամ տնտեսական եւ սոցիալական մրցակցությամբ, քանի որ Օսմանյան կայսրության մեջ ձեւավորված *modus vivendi*-ն դարերի ընթացքում, համեմայն դեպս, կարողացել էր ապահովել նրանց փչ թե շատ խաղաղ համակեցությունը: Ճիշտ է՝ այդ համակեցությունը հիմնված էր կայսրության մահմեդական եւ քրիստոնյա ժողովուրդների ամենեւին ոչ իրավահավասար դրության վրա, բայց պետությունը, համեմայն դեպս, երաշխավորում էր որոշակի հավասարակշռություն:

Հայոց ցեղասպանությունը զուտ ֆաղափական ծրագիր էր՝ թելադրված Օսմանյան կայսրության կոնկրետ պետական շահերից:

Բալկանյան ժողովուրդների ազատագրումից հետո հայկական հարցը եւրոպական գերտերությունների կամքով մտավ միջազգային ֆաղափականության ոլորտը՝ ձեւակերպվելով Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածում որպես Օսմանյան կայսրության հայկական նահանգներում բարենորոգումների անցկացման ծրագիր:

Թուրքիայի համար այդպիսով պարզ դարձավ, որ եւս մեկ պատերազմ՝ եւ նա կորցնելու է նաեւ Հայաստանը: Դրանից խուսափելու միակ միջոցը հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջումն էր, որ թուրքական իշխանությունները մեթոդիկ կերպով իրականացրեցին 1878–1915 թվականների ընթացքում:

Հայ ժողովրդի բնաջնջման ծրագրի մտահղացման, մշակման եւ իրագործման ողջ պատասխանատվությունն ըստ այդմ կրում են սուլթան Համիդը եւ երիտթուրքերի կառավարությունը:

2. Եւրոպական գերտերությունները՝ Անգլիան, Ֆրանսիան, Գերմանիան եւ Ռուսաստանը 1878–1914 թվականների ընթացքում ոչ միայն որեւէ գործնական ֆայլ չկատարեցին Օսմանյան կայսրության հայկական նահանգներում բարենորոգումների ծրագրի իրականացման ուղղությամբ, այլեւ իրենց անհամաձայնեցված միջամտություններով ուղղակի վտանգ ստեղծեցին հայ ժողովրդի ֆիզիկական գոյության համար: Այսինքն՝ հայկական հարցի միջազգայնացմամբ զբաղելով օսմանյան իշխանություններին, գերտերություններն իրենց հոգնություն չպատճառեցին վայրկյան անգամ մտածել հայ ժողովրդի ֆիզիկական գոյության տարրական երաշխիքների մասին, որով եւ չափվում է Յե-

դասպանության հարցում նրանց բարոյական, իսկ Գերմանիայի դեպ-  
ֆում՝ նաև ուղղակի պատասխանատվության բաժինը:

3. Նկատի ունենալով Օսմանյան պետության եւ հայ ժողովրդի  
ուժերի ակնհայտորեն անհակակշռելի հարաբերակցությունը, ինչպես  
նաև Արեւելյան հարցում գերտերությունների միջև գոյություն ունեցող  
հակասությունները, դժվար է շխտտվանել, որ կենաց-մահու այդ  
պայքարում հայերն ի սկզբանե դատապարտված էին կործանման:

Հայ ժողովուրդն իր բոլոր կարողությունների գերլարմամբ հանդերձ  
ի գորու չէր վիժեցնելու Օսմանյան պետության մշակած հրեշավոր ծրա-  
գիրը, մանավանդ որ՝ հայերի մոտ, ցավոք սրտի, ակնհայտորեն բացա-  
կայում էր այդ ծրագրի գոյության գիտակցությունն անգամ:

4. Տիրապետող այն տեսակետը, թե հայ ժողովուրդը կարող էր խուսա-  
փել արհավիրքից, հրաժարվելով Թուրքիայի ներքին գործերին եւրոպական  
երկրների միջամտությանը նպաստելու գաղափարից եւ փորձելով հայկա-  
կան նահանգների բարենորոգումների հարցը լուծել թուրքական իշխանու-  
թյունների հետ անմիջական համագործակցությամբ, կարծում եմ, հետու է  
իրատեսությունից, քանի որ, անկախ հայերի կամքից, եւրոպական պետու-  
թյուններն այլևս չէին կարող հրաժարվել հայկական նահանգների բարենո-  
րոգումների պատրվակով Թուրքիայի վրա ազդելու ֆաղափականությունից:

Դրանով հանդերձ, պարտավոր ենք հավաստել, որ հայ ֆաղափա-  
կան մտքի երկու հոսանքներն էլ, այն է՝ կղերա-բուրժուական եւ հեղա-  
փոխական հոսանքները, թեև անհետեւողականորեն, բայց ժամանակ  
առ ժամանակ փորձել են համագործակցել թուրքական իշխանություն-  
ների հետ, որի բարձրակետը Իթթիհադի եւ Հայ հեղափոխական դաշ-  
նակցության համագործակցությունն էր: Այդ համագործակցության  
պատճառով լիովին բթացվեց հայ ժողովրդի զգոնությունը, եւ 1908-  
1914 թթ. ժամանակամիջոցը բացարձակապես չօգտագործվեց ինքնա-  
պաշտպանության պատրաստվելու համար:

Որքան էլ դառը լինի, պետք է խոստովանել, որ հայ ֆաղափական  
մտքի երկու հոսանքներն էլ հասու չեղան ոչ միայն վիժեցնել հայ ժո-  
ղովրդի բնաջնջման պետական ծրագիրը, որ, ինչպես վերը նշվեց, գրե-  
թե անհնար էր, այլև գոնե տարրական միջոցներ ձեռնարկել նրա հե-  
տեւանքները նվազագույնի հասցնելու համար:

5. Եթե ոչ Յեղասպանությունից, ապա գոնե նրա կործանարար

հետեանմեներից խուսափելու վերջին հնարավորությունը հայ ժողովուրդը կորցրեց 1914 թվականին, երբ Էրզրումում գումարված Հայ հեղափոխական դաշնակցության 8-րդ ընդհանուր ժողովի որոշմամբ պարտավորություն ստանձնեց մասնակցել Օսմանյան կայսրությունում հայտարարված ընդհանուր գորահավաֆին:

Մերժելով գորահավաֆը, թեև, միեւնույն է, հայ ժողովրդին չէր հաջողվելու կանխել ծրագրված հաշվեհարդարը, ավելին՝ դրանով լրացուցիչ ծանրակշիռ պատրվակ էր ստեղծվելու իշխանությունների բռնություններն արդարացնելու համար, այդուհանդերձ, պահպանելով զինական ուժը, շատ վայրերում, մասնավորապես Տարոնում, հնարավոր էր կազմակերպել ավելի լուրջ ինֆնապաշտպանություն եւ խուսափել իսպառ բնաջնջումից:

6. 1920 թվականին, շարունակելով պահպանել հավատարմությունը Անտանտի երկրներին, Հայաստանի Հանրապետության վարիչները չկարողացան նիշտ գնահատել Խորհրդային Ռուսաստանի եւ Քեմալական Թուրքիայի հզորացմամբ ստեղծված նոր իրադրությունը, որի պատճառով կորցրին թե՛ Հայաստանի անկախությունը, թե՛ նրա տարածքների մի մասը: Մինչդեռ հայ-թուրքական եւ հայ-ռուսական ուղղակի պայմանավորվածությունների միջոցով, ակնհայտորեն, Հայաստանի համար հնարավոր էր ապահովել ավելի բարեհաջող ապագա:

7. Այսօր Հայաստանը եւ Թուրքիան, որպես հարեւան պետություններ, պարտավոր են հաստատել փոխշահավետ առեւտրա-տնտեսական կապեր եւ բարիդրացիական հարաբերությունների միջոցով աստիճանաբար հաղթահարել պատմական հակասություններն ու վերականգնել հայ եւ թուրք ժողովուրդների փոխադարձ վստահությունը, որի համար կողմերից պահանջվում է դրսևտրել համապատասխան ֆաղաֆական կամֆ եւ բարոյական կեցվածֆ:

Ամֆոֆելով խոսֆ, եւ հաջողություն եմ մաղթում Հայոց ցեղասպանության 80-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի աշխատանֆին, համոզված լինելով, որ այն կդառնա կարևոր հանգրվան՝ մարդկության դեմ գործված այդ անավոր հանցագործության գիտական ուսումնասիրության գործում: Շնորհակալություն ուշադրության համար:

**ՖՐԱՆՍԻԱԿԱՆ «ՊՈԼԻՏԻԿ ԷՆՏԵՐՆԱՍԻՈՆԱԼ»  
ՀԱՆԴԵՍԻՆ ՏՎԱԾ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՅԻՑ  
(գառուն, 1997թ.)**

*– Թուրքիայում, Արեւելյան Անատոլիայի զարգացման հետ կապված, որոշ շարժումներ եւ տնտեսական ուժեր պաշտպանում են Հայաստանի հետ հարաբերությունների զարգացումը եւ հատկապես սահմանի բացումը, որը իշխանությունները պայմանավորում են Հայաստանի կողմից Ադրբեջանի հանդեպ կատարելիք քայլով: Այս ուղղությամբ Դուք կոնկրետ հեռանկարներ տեսնո՞ւմ եք:*

– Մեր պաշտոնական տեսակետն այս հարցի վերաբերյալ հետեւյալն է. չնայած անցյալում գոյություն ունեցած խոր անտագոնիզմին, Հայաստանը եւ Թուրքիան, որպես հարեւան պետություններ, պետք է առանց ֆաղափական նախապայմանների հաստատեն նորմալ բարիդրացիական հարաբերություններ, որոնք կարող են ընդգրկել տնտեսության, առևտրի, տուրիզմի, գիտության, մշակույթի, էկոլոգիայի ոլորտները:

Մենք չենք թափցնում. Թուրքիան մեզ անհրաժեշտ է թե՛ որպես կարեւոր տնտեսական գործընկեր, թե՛ որպես ամենակարճ ճանապարհ դեպի Եւրոպա եւ արաբական աշխարհ: Բայց ականհայտ է, որ Հայաստանը նույնպես անհրաժեշտ է Թուրքիային. մի պատճառը դուր՝ նշեցիք, իսկ մյուսն այն է, որ Հայաստանն էլ Թուրքիայի համար ամենակարճ ճանապարհն է դեպի Ադրբեջան եւ Միջին Ասիա: Բավական է նշել, որ Թուրքիան նախկին Խորհրդային Միության հանրապետություններին կապող միակ երկաթուղին անցնում է Հայաստանով:

Առայժմ, այո, Թուրքիան հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը պայմանավորում է հայ-ադրբեջանական հարաբերություններով, մասնավորապես դարաբաղյան հակամարտության առկայությամբ: Սակայն ժամանակն է, որ նա անջատի այս հարցերն իրարից, քանի որ, իմ խորին համոզմամբ, հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը, բացի վերը նշված նկատառումներից, բարենպաստ մթնոլորտ կստեղծի նաև Լեռնային Ղարաբաղի խնդրի լուծման համար:

**– 1915 թվականի հրադարձությունների գնահատականի վերաբերյալ տարակարծությունը արդյո՞ք կարող է շրջանցվել:**

– Հայաստանը 1915թ. իրադարձությունները համարում է հայ ժողովրդի դեմ կատարված ցեղասպանություն, որն, անկասկած, վաղ թե ուշ հանաչվելու եւ դատապարտվելու է նաև միջազգային հանրության կողմից:

Դրանով հանդերձ, Հայաստանն այդ հարցը չի դիտում որպես փառական նախապայման հայ-թուրքական պետական հարաբերությունների կարգավորման համար: Երկու ժողովուրդների փոխըմբռնման ձեւավորումը, որին ես անկեղծորեն հավատում եմ, կախված է այդ հարաբերությունների արագ կարգավորումից:

*«Հայաստանի Հանրապետություն», 9 մայիսի, 1997թ.: Թարգմանություն ֆրանսերենից: «Պոլիտիկ Էստերնասիոնալ» ("Politique internationale"), հ. 75, 1997թ.: Հարցազրույցը՝ Սիշել Մարիանի: L. Տեր-Պետրոսյան, Ընտրանի, Երեւան, 2006, էջ 551–560:*



## 1997 թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26-Ի ՄԱՄԼՈ ԱՍՈՒԼԻՍԻՑ

*ՍԵԻՎՆ ԴԵՅՐՄԵՆՁՅԱՆ, «Ժամանակ», Ստամբուլ – Ուզում եմ իմանալ, թե ինչ վիճակում ես գտնվում այսօր Հայաստան – Թուրքիա հարաբերությունները: Եւ ինչպիսին կլինի Հայաստան – Թուրքիա հարաբերությունների տեսքը Ձեր նախագահության շրջանում:*

– Այս հարցի շուրջ մենք բազմիցս ենք արտահայտվել, գուցե նույնիսկ կարելի է ասել, որ ամեն ինչ ասված է: Մենք որեւէ խնդիր չունենք: Պատրաստ ենք այսօր եւթ, այս վայրկյանին, առանց որեւէ նախապայմանի Թուրքիայի հետ սկսել լուրջ առետրատնտեսական հարաբերություններ, բացել սահմանները, Թուրքիային տրամադրել մեր ճանապարհները տարանցիկ առետրի համար: Թուրքիան նույնպես, կարծեք թե, այդ ամենին համաձայն է, բայց իր համար ստեղծել է մի թակարդ, որից չի կարողանում դուրս գալ, քանի որ Հայաստանի հետ հարաբերությունների բարելավումը նա կապում է հայ-ադրբեջանական հարաբերությունների բարելավման, մասնավորապես, ԼՂ խնդրի կարգավորման հետ: Մենք փորձեցինք նրանց ապացուցել, համոզել, որ նրանք պետք է կարողանան անջատել հայ-թուրքական հարաբերությունների բարելավումն ու նորմալացումը հայ-ադրբեջանական հարաբերություններից, սակայն դա չհաջողվեց: Միգուցե մենք ենք մեղավոր, որ լավ չենք բացատրել: Ինչեւէ, ես գտնում եմ, որ եթե Թուրքիան իսկապես շահագրգռված է Հայաստանի հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատել, եթե Թուրքիան իսկապես շահագրգռված է նպաստել ԼՂ հարցի լուծմանը, որը նա, ըստ էության, դարձրել է հարաբերությունների բարելավման նախապայման, ապա, սա իմ խորին համոզումն է, Թուրքիան իր նպատակներին շատ ավելի հեշտությամբ կհասներ, եթե

մինչև հիմա բարելաված լինել իր հարաբերությունները Հայաստանի հետ: Հայաստանի հետ հարաբերությունների բարելավմամբ Թուրքիան կնպաստեր նաև ԼՂ հարցի խաղաղ լուծմանը:

*ԱՐԱՅԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ, «Արմենպրես» – Պարոն Նախագահ, վերջին տարիներին մեր քաղաքական գործիչների կողմից հատկապես շատ է խոսվում ազգային գաղափարախոսության, ազգային ծրագրերի անհրաժեշտության մասին, իսկ Դուք մի առիթով նշեցիք, որ ազգային գաղափարախոսությունը կեղծ կատեգորիա է: Կարելի՞ է իմանալ, դա ինչ մեկնություն ուներ՝ քաղաքակա՞ն, գիտակա՞ն թե՞ փիլիսոփայական, եւ արդյո՞ք Դուք ընդունում եք անհատի գործունը պատմության մեջ եւ մասնավորապես մեր պետության կայացման գործում:*

– Ես արտահայտել եմ ո՛չ փիլիսոփայական, ո՛չ ֆաղափական, ո՛չ էլ գիտական միտք: Ես արտահայտել եմ ընդամենը շատ պարզ, մարդկային միտք, որը բխում է ժողովրդավարության իմ հասկացողությունից: Ես ասել եմ՝ ազգային գաղափարախոսությունը կեղծ ֆաղափական կատեգորիա է, եւ այսօր էլ դա կրկնում եմ ու վաղն էլ կասեմ: Ի՞նչ նկատի ունեմ: Ի՞նչ են այդ մարդիկ հասկանում ազգային գաղափարախոսության տակ: Մեկ բան՝ ամբողջ ազգը պետք է ընդունի այդ գաղափարախոսությունը: Ես այնպես եմ հասկանում, որ ամբողջ ազգը մեկ գաղափարախոսություն ընդունում է միայն տոտալիտար համակարգերում, միայն իդեոլոգիական պետություններում: Իսկ երբ ժողովրդավարություն է, ապա ոչ ոք ոչ ոքի չի կարող պարտադրել որեւէ գաղափարախոսություն: Հայաստանում այսօր առկա բոլոր գաղափարախոսությունները՝ լինի դա կոմունիստական, սոցիալ-դեմոկրատական, լիբերալ-դեմոկրատական, ազգայնական, թե ծայրահեղ-ազգայնական՝ ինձ համար ազգային գաղափարախոսություններ են, որովհետեւ սրանցից յուրաքանչյուրն իր մեջ է տեսնում ազգի խնդիրների լուծման լավագույն նախապահը: Եթե ազգին պարտադրվում է ազգային գաղափարախոսություն, դրանով խաչ եմ ֆաշում ժողովրդավարության վրա: Կա՞մ մեկը, կա՞մ մյուսը: Այո, հնարավոր է ազգին պարտադրել մի գաղափարախոսություն: Այդպիսի բան տեսել եմք եւ տեսել եմք նաև դրա հետեւանմաներ:

**ՊԱՏԵՐԱԶՄ, ԹԵ՛ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ՀՈԴՎԱԾԻՑ**  
(1 նոյեմբերի, 1997թ.)

**Հաջորդ թյուրիմացությունը** կամ ավելի նիշա՝ անհեթեթությունն այն է, թե Հայաստանի Նախագահը ծախում է Ղարաբաղը իր իշխանությունը պահելու համար: Դժվար է հավատալ, որ անգամ խելակորույսի մտքով կանցներ, թե Ղարաբաղը ծախելով, որեւէ մեկը Հայաստանում կարող է իշխանություն պահել:

Ի դեպ, իշխանությունը պահելու մարմաջի մասին. ի՞նչը պիտի ինձ ստիպեր ամեն գնով պահպանել իշխանությունը. բարի՛քը, փա՛ռքը, թե հերոսականացումը:

Նախագահության օրոք ոչ մի բարիք կամ սեփականություն չեմ ստացել (կարող եմ ստուգել) եւ չեմ էլ ուզում ստանալ:

Անձնական փառքի կամ հերոսականացման ձգտելու պարագայում ես պարզապես չէի մասնակցի 1996թ. ընտրություններին, սերունդների աչքում մնալով որպես անկախություն նվաճած, ղարաբաղյան հերոսամարտը շահած, հայկական տարածքներն ընդարձակած Նախագահ, անկախ այն բանից, թե որքան արդարացի է այդ ամենի ինձ վերագրումը: Ինչ փույթ, թե դրանից հետո ինչ կպատահեր եւ ում վրա կընկներ վիճակի վատթարացման պատասխանատվությունը: Միեւնույն է, իմ վարկանիշը դրանից չէր տուժի, այլեւ ընդհակառակը, թերեւս ավելի շահեր: Կրկնում եմ, անձնական տեսակետից ինձ համար ամենալավ լուծումը թերեւս այդ էր, բայց դա կլիներ ոչ այլ ինչ, եթե ոչ փոփոքի դասալիություն, որին, դժբախտաբար թե բարեբախտաբար, սովոր չեմ: Ես վերընտրվել եմ իմ առջեւ կանգնած դժվարությունների եւ դրանց

հաղթահարման գործում կրելիք պատասխանատվության սառը գիտակցությամբ, որի համար ամենեւին չեմ գղջում:

Մի՞թե ես չգիտեմ հերոս ձեանալու, ազգային բոլոր իղծերի իրականացնողը ներկայանալու, ժողովրդին ամեն գնով դուր գալու էժան հնարները: Մի՞թե ես չէի կարող գիշեր-ցերեկ հայհոյել թուրքերին, ՄԱԿ-ի առջև բարձրացնել Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը, չեղյալ հայտարարել Կարսի պայմանագիրը, Թուրքիայից պահանջել Սերի դաշնագրով գծված սահմանները, վերջնագիր ներկայացնել Ադրբեջանին, ճանաչել Լեռնային Ղարաբաղի անկախությունը, հայտարարել, որ ոչ մի թիզ հող չենք գիշի եւ այլն:

Այդ բոլոր հնարները եւ վարպետորեն կարող էի օգտագործել, համենայն դեպս ոչ ավելի վատ, քան Կիմոյի տանը հավաքվածներից որեւէ մեկը. ինչ է, կրթությունս չի ներում, ինչիս չի կտրում: Ես հեշտությամբ կարող էի քաջի ու մեծ հայրենասերի համբավ ձեռք բերել, դառնալ ազգի կուռքը, Հայաստանի ու Սփյուռքի միասնության խորհրդանիշը:

Ի՞նչն է, ուրեմն, խանգարում անել այդ ամենը՝ քաջության պակասը, աշխարհաբաղակալական (կոսմոպոլիտ) մտածողությունը, ապագային էությունը, թե սխալ դաստիարակությունը: Խանգարում է ընդամենը պարզ քաղաքական հաշվարկը եւ մեր ժողովրդին փորձանքներից հեռու պահելու գիտակցությունը: Այլ կերպ վարվելու դեպքում աղետներն ու արհավիրքներն անխուսափելի կլինեին, եւ այսօր ոչ միայն կորցրած կլինեինք Ղարաբաղը, այլեւ վտանգված կլինեք Հայաստանի գոյությունը: Լուսաբանությունների համար հեռու չգնալով, հիշենք մեր հարեանների քախառը. մեր աչքի առջև Գամսախուրդիան եւ Ելչիբեյը որդեգրեցին հերոսանալու քաղաքականությունը, դարձան ազգային կուռքեր, քայց անհամար աղետներ բերին իրենց ժողովուրդների գլխին:

Հայաստանի քաղաքական մտքի եւ հասարակական կարծիքի անդաստաններում դեգերում են նաեւ որոշ կայունացած պնդումներ, որոնք արդեն վերաբերում են առասպելի ու հանելուկի բնագավառին.

**... Առասպել երկրորդ. Եթե Հայաստանը խիստ կեցվածք ընդունի Թուրքիայի նկատմամբ, նրա առջև դնի Յեղասպանության ճանաչման, Կարսի պայմանագիրը չեղյալ հայտարարելու, հայկական հողերը**

**վերագործնելու հարցերը, ապա Թուրքիան եւ Ադրբեջանը ավելի զիջող կդառնան Ղարաբաղի հարցում:**

Իմ խորին համոզմամբ, որը ես կարող եմ ապացուցել նաեւ կոնկրետ ֆաղափական հաշվարկներով, այդպիսի կեցվածքը ոչ միայն որեւէ օգուտ չի բերի Լեռնային Ղարաբաղի խնդրի լուծմանը, այլեւ նոր բարդություններ կառաջացնի Հայաստանի եւ Թուրքիայի հարաբերություններում, որոնք ավելի եւս կծանրացնեն Հայաստանի ու Ղարաբաղի դրությունը: Անգե՛ն աշփով իսկ կարելի է նկատել, որ ընդհակառակը, Ադրբեջանի եւ Թուրքիայի համար դա լրացուցիչ կովան կհանդիսանար ապացուցելու Հայաստանի ծավալապաշտական նկրտումները եւ նրա դեմ լարելու միջազգային հանրության առանց այդ էլ աննպաստ կարծիքը:

*«Հայաստանի Հանրապետություն», 1 նոյեմբերի, 1997թ.:  
 Լ. Տեր-Պետրոսյան, Ընտրանի, Երեւան, 2006, էջ 625–639:*

**ԱՆՎՏԱՆ ԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ**  
**ԸՆԴԱՅՆՎԱԾ ՆԻՍՏՈՒՄ ՈՒՆԵՑԱԾ ԵԼՈՒՅԹԻՑ**  
(8 հունվարի, 1998թ.)

Հակամարտության առկայությունը Հայաստանին զրկում է իր ամենաբնական եւ շահավետ տնտեսական գործընկերներից՝ Ադրբեջանից, Թուրքիայից եւ մասամբ՝ Իրանից: Բնական եւ շահավետ նախ եւ առաջ այն պարզ պատճառով, որ նրանք մեր անմիջական հարեաններն են: Գաղտնիք չէ, որ աշխարհի բոլոր նորմալ պետությունների արտաքին տնտեսական կապերի առնվազն հիսուն տոկոսը բաժին է ընկնում նրանց անմիջական հարեաններին: Մինչդեռ Հայաստանի դեպքում դա գործնականում հավասարվում է զրոյի: Ես առիթ ունեցել եմ գնահատելու հայ-ադրբեջանական տնտեսական համագործակցության հնարավորություններն ու հեռանկարները, ուստի զերծ եմ մնում կրկնությունից: Չեմ կարծում, որ որեւէ մեկը կարող է ժխտել նաեւ հայ-թուրքական տնտեսական հարաբերությունների հսկայական պոտենցիալը, որը թերեւս երկրորդական դեր կարող է խաղալ Թուրքիայի տնտեսության զարգացման գործում, բայց Հայաստանի դեպքում, անկասկած, ունի կենսական նշանակություն: Մեր Արդյունաբերողների միության կատարած հաշվարկների համաձայն՝ Հայաստանի ու Թուրքիայի հաղորդակցության նանապարհների վերագործարկման դեպքում, երկու երկրների միջեւ շրջանառությունը մեկ տարվա ընթացքում կարելի է հասցնել մոտ 600 միլիոն դոլարի: Այսինքն, մեկ տարվա ընթացքում Հայաստանի արտաքին առևտրի շրջանառությունը կարող է աճել 50 տոկոսով (այսօր այն կազմում է մոտավորապես 1 միլիարդ 125 միլիոն դոլար): Իսկ դա նշանակում է արդյունաբերության զարգացման լուրջ հնարավորու-

թյուններ, լրացուցիչ աշխատատեղեր և սոցիալական խնդիրների լուծման հեռանկարներ:

Զպետք է մոռանալ նաև, որ բացի բնական տնտեսական գործընկեր լինելու ինքնին արժեքից, Թուրքիան և Ադրբեջանը Հայաստանի համար կարևոր նշանակություն ունեն նաև որպես ամենակարև տարանցիկ ճանապարհներ մի դեպքում՝ դեպի Եւրոպա և արաբական աշխարհ, մյուս դեպքում՝ դեպի Իրան, Ռուսաստան ու Միջին Ասիա: Այս առումով, ըստ իս, չարժե լուրջ պատրանքներ փայփայել՝ կապված Մեղրու ավտոճանապարհի հետ, քանի որ ակնհայտ է, որ Ջուլֆայի երկաթուղին մեկ-երկու շաբաթվա ընթացքում, այն էլ զգալիորեն նվազ ծախսով, շատ ավելի մեծ ծավալի բեռներ կարող էր տեղափոխել, քան այդ ավտոճանապարհը՝ մեկ տարում:

ԱՊՀ-ն, քաղաքական և անվտանգության կարեւորությամբ հանդերձ, ըստ էության որեւէ դեր չի խաղում Հայաստանի տնտեսության զարգացման մեջ: Իսկ Սեւծովյան տնտեսական համագործակցությունն առայժմ դուրս չի եկել բարի մտադրությունների արտահայտման ակումբի կարգավիճակից: Ինչ վերաբերում է Հայաստան – Իրան – Թուրքմենստան և Հայաստան – Իրան – Հունաստան եռակողմ համագործակցության ծրագրերին, ապա դրանք դեռևս գտնվում են ձեւավորման փուլում, բայց անգամ լիարժեք իրականացման դեպքում էլ էական ազդեցություն չեն կարող ունենալ Հայաստանի տնտեսական զարգացման վրա: Բոլորիս համար էլ, կարծում եմ, հասկանալի է, որ տնտեսական առումով շատ ավելի գործնական ու կարևոր են ԳՈՒՌՈՒԱՄ-ը, ՏՐԱՍԵԿՍ-ն, ԷԿՕ-ն, նավթամուղային կոնսորցիումները, որոնց դռները, դժբախտաբար, առայժմ փակ են մեր առաջ:

Հակամարտության կարգավորման գործընթացի խափանման կամ նույնիսկ ձգձգման դեպքում մենք ոչ միայն չենք կարողանալու դուրս գալ առկա մեկուսացումից, այլև ավելի ու ավելի խորացնելու ենք այն: Խոսքը սուսկ տնտեսական մեկուսացման մասին չէ, քանի որ ինքնըստ-ինքյան հասկանալի է, որ տնտեսական մեկուսացումն ունենալու է նաև անցանկալի քաղաքական հետեւանքներ: Չեմ բացառում, որ անգամ մեկուսացման պայմաններում Հայաստանը կարող է մասնակցել տարածաշրջանային կազմակերպությունների ինչ-ինչ ծրագրերի, բայց ես նկատի ունեմ ոչ թե սիմվոլիկ մասնակցությունը, այլ լիարժեք ան-

դամակցությունը, քանի որ միայն այդ դեպքում կարելի է ակնկալել շոշափելի արդյունքներ:

*L. Տեր-Պետրոսյան, Ընտրակի, Երեւան, 2006, էջ 647–660:*



**2007 թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 8-Ի ՀԱՆՐԱՀԱՎԱՔՈՒՄ  
ՈՒՆԵՑԱԾ ԵԼՈՒՅԹԻՑ**

**Հայոց ցեղասպանության վերախմաստավորման  
անհրաժեշտության մասին**

Պատասխան չգտնելով իմ նախորդ ելույթների դրույթների դեմ, Ռոբերտ Քոչարյանը եւ Սերժ Սարգսյանը օրերս հայտնաբերել են ինձ ոչնչացնելու ամենաարդյունավետ միջոցը, այն է՝ ինձ «թրփամետ» հռչակելու մահացու խարանը: Նրանց թվում է, թե ինձ հասցրել են թնդանոթի հարված, որից հետո ժողովուրդն ինձ պիտի հոշոտի, կամ որից ես երբեւէ ուշֆի չեմ գալու: Ավելի մեծ հաճույք պատճառելու համար իմ նախկին ընկերներին, ստորեւ կփորձեմ ջուր լցնել նրանց ջրաղացին եւ բազմաթիվ նոր ապացույցներ մատակարարել իմ «թրփամետության» մասին: Մինչ այդ, սակայն, չեմ կարող չհիշեցնել, որ «թրփամետության» մասին խոսում են մարդիկ, ովքեր իրենց գիտակցական կյանքի տեսական մի հանգրվանում ստորաբարձրեն ծառայել են թուրքերին:

Սկսեմ նրանից, որ հանրահավաքի մասնակիցներից շատերի նման՝ ես եւս Հայոց ցեղասպանությունը վերապրածների շտապիղ եմ: Պապս մասնակցել է Մուսա-լեռան հերոսամարտին: Յոթնամյա հայրս ուտելիք եւ ջուր է կրել դիրքեր: Իսկ մայրս այդ օրերին ծնվել է ֆարանձավում: Եթե ֆրանսիական նավատորմը պատահաբար չանցներ Մուսա-լեռան օդերով, ապա ես գոյություն չէի ունենա եւ, ի հրեվանս Ռոբերտ Քոչարյանի ու Սերժ Սարգսյանի, այսօր չէի խոսի այս հարթակից: Իմ գերդաստանի երեք սերունդ այս կամ այն կերպ պայքարել է թուրքերի դեմ: Ասվեց արդեն, որ պապս մասնակցություն է ունեցել Մուսա-լեռան հե-

րոսամարտին: Ավելի վաղ, 1896 թվականին, Զեյթունի ապստամբությունից հետո, նա վեց ամիս անցկացրել է թուրքական բանտերում: Հայրս 1939-ին գլխավորել է Ալեքսանդրեթի սանչակը Թուրքիային հանձնելու ծրագրի դեմ ուղղված հայկական շարժումը: Իսկ ես 1966-ին, Յեղասպանության տարեդարձի առթիվ կազմակերպված ցույցի ժամանակ, ձերբակալվել եմ շուրջ մեկ շաբաթ բանտարկվել եմ Երեւանի բերդում, երբ Քոչարյանն ու Սարգսյանը ցեղասպանություն բառն անգամ չէին լսել:

Ինձ «թրամետ» են անվանում այն պատճառով, որ իմ նախագահության օրոք ես բազմիցս պնդել եմ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման անհրաժեշտությունը եւ, որ իբր երբեւէ չեմ բարձրացրել Յեղասպանության հանաչման հարցը: Փաստերից առաջինը ստույգ է, քանի որ իսկապես պնդել եմ եւ այսօր էլ կարեւորում եմ հայ-թուրքական հարաբերությունների շուտափույթ կարգավորումը, իսկ երկրորդը, մեղմ ասած, չի համապատասխանում իրականությանը: Իմ իշխանության օրոք է կառուցվել Յեղասպանության Երեւանի թանգարանը: Առաջին անգամ Հայաստանում է՛ս եմ կազմակերպել Յեղասպանությանը նվիրված հեղինակավոր միջազգային գիտաժողով, որը տեղի է ունեցել 1995 թվականին, եւ որին մասնակցել են համաշխարհային նանաչում ունեցող բազմաթիվ մասնագետներ: Սկսած Հայաստանի առաջին հանրապետությունից մինչեւ օրս, է՛ս եմ եղել մեր երկրի միակ գործող ղեկավարը, որը, թեեւ սեղմ, բայց համակողմանի ֆաղափական գնահատական է տվել Յեղասպանությանը (Լ. Տեր-Պետրոսյան, Ընտրանի, Երեւան, 2006, էջ 477-481):

Ճիշտ է, սակայն, որ այս ամենով հանդերձ, Յեղասպանության հանաչումը ես չեմ դրել Հայաստանի արտաքին ֆաղափականության հիմքում, դա համարելով անժամանակ ու վտանգավոր, ինչը կփորձեմ հիմնավորել ֆիչ հետո: Ի տարբերություն ինձ, Հայաստանի երկրորդ նախագահը այդ հարցն անմիջապես դարձրեց հանրապետության արտաքին ֆաղափականության անկյունաքարը եւ իշխանավարության առաջին իսկ օրվանից սկսեց հետետողական ֆայլեր կատարել այդ ուղղությամբ: Ո՞րն էր այս նոր ֆաղափականության տրամաբանությունը: Դա պարզաբանելու համար ես կրկին ստիպված եմ դիմելու հուշապատումի օգնությանը: 1997 թվականին, երբ ես վարչապետ Քոչարյանին առաջարկեցի

գլխավորել «Հայաստան-Սփյուտֆ հարաբերությունների համակարգման պետական խորհուրդը», նա հրաժարվեց՝ պատճառ բռնելով այն հանգամանք, որ խորհրդի գործունեության ծրագրում բացակայում է Յեղասպանության հանաչման վերաբերյալ կետը: Երբ ես, «Հայաստան համահայկական հիմնադրամի» տնօրեն Մանուշակ Պետրոսյանի ներկայությամբ, ինդրեցի հիմնավորել իր տեսակետը, Քոչարյանն ասաց բառացիորեն հետեւյալը. «Ես չգիտեմ, թե ինչ բան է ցեղասպանությունը, բայց հաստատ գիտեմ, որ դա պետք է Սփյուտֆին: Եթե մենք մտցնենք այս կետը, ապա Սփյուտֆը կոգետրվի եւ ավելի մեծ նյութական օժանդակություն կցուցաբերի Հայաստանին: Ավելին, եթե Հայաստանը պաշտոնապես ներկայացնի Յեղասպանության հանաչման պահանջը, ապա Թուրքիան տեղի կտա եւ մեկ տարուց կբացի հայ-թուրքական սահմանը: Բացի այդ, նա ավելի անկողմնակալ դիրք կգրավի Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում եւ այլևս ջանասիրաբար չի պաշտպանի Ադրբեյջանի դիրքորոշումը»:

1998 թվականի սեպտեմբերին Ռոբերտ Քոչարյանը ՄԱԿ-ի ամբիոնից բարձրացրեց Յեղասպանության հանաչման հարցը, ինչը թեւեւ պալատական ներքողագիրների կողմից գնահատվեց որպես աննախադեպ ֆաշազորություն, բայց այդպես էլ մնաց որպես մերկապարանոց եւ անհետեւանք հայտարարություն: Եթե նշված ճղնիմ ու պրիմիտիվ ֆաղափական հաշվարկներն էին ընկած Քոչարյանի որդեգրած դիրքորոշման հիմքում, ապա դա կարող է նշանակել միայն մեկ բան, այն է՝ տրորել, պղծել մեր ազգային մեծագույն ողբերգությունը, այն դարձնել անպարկեշտ սակարկությունների առարկա, մանավանդ, եթե նկատի ունենանք, որ Հայաստանի նախագահի վերոհիշյալ կանխատեսումներից ոչ մեկը մինչեւ օրս այդպես էլ իրականություն չի դարձել: Որ ՄԱԿ-ում Հայոց ցեղասպանության հանաչման հարցի հնչեցումը սոսկ ներքին սպառման կարիքները բավարարելուն, այսինքն՝ հայության աշխում հերոս երեւալուն միտված տղայամտություն էր, պարզ է դառնում նրանից, որ Քոչարյանի հայտարարությամբ չհետեւեց ոչ մի գործնական ֆայլ: Ավելի լուրջ մտադրություններ ունենալու պարագայում՝ Քոչարյանն ու Օսկանյանը պարտավոր էին, ՄԱԿ-ի կանոնադրությամբ սահմանված արարողակարգով, Յեղասպանության հանաչման նպատակով կոնկրետ գործընթաց սկսել, որի արդյունքը պիտի հանդիսա-

նար այդ կազմակերպության կողմից ընդունված համապատասխան բանաձեռը: Որպես ՄԱԿ-ի լիիրավ անդամ, Հայաստանն ուներ այդ իրավունքը, բայց, չգիտես ինչու, չօգտվեց դրանից, բավարարվելով ընդամենը հարցի արժարժման պարզունակ իմիտացիայով: ՄԱԿ-ը մամուլի ակումբ չէ, ուր գնում են հայտարարություններ անելու, այլ հեղինակավոր իրավա-ֆաղափական ատյան, որտեղ պետությունները կոնկրետ հարցեր են լուծում:

Եւ ընդհանրապես, Հայաստանի ներկա իշխանությունները գործնական ֆաղափականությունը չեն տարբերում հայտարարություններից ու հոխորտանքներից, մոռանալով, որ ֆաղափականությունը ոչ թե խոսք է, այլ նախեստաչ ու միայնումիայն՝ գործ: Երբ ազդարարում են, որ Ղարաբաղը մերն է, նրանց թվում է, թե հարցն արդեն լուծված է: Երբ պնդում են, որ Ղարս-Ախալաբալ տերկաթուղին չպիտի կառուցվի, նրանք կարծում են, թե այդպես էլ պիտի լինի: Երբ պահանջում են, որ ամերիկյան կոնգրեսը հանաչի Հայոց ցեղասպանությունը, համոզված են, որ այդ մարմինը պիտի կատարի իրենց պահանջը: Երբ Թուրքիային թելադրում են բացել հայ-թուրքական սահմանը, կասկած չունեն, որ մեր հարեւանը պիտի ենթարկվի այդ թելադրանքին: Երբ Ադրբեջանին հորդորում են զերծ մնալ միլիտարիստական ռիտորիկայից, մտածում են, որ վերջինս կանսա իրենց հորդորին:

Վերջին տաս տարում Հայաստանի արտաքին ֆաղափականությունն, ահա, այսպիսի դատարկ, գավառական, անիմաստ հայտարարությունների մի շարան է: Իշխանությունները չեն իսկ անդադառնում, թե դրանով ինչպիսի ծիծաղելի վիճակի մեջ են դնում թե՛ իրենց, թե՛ մեր երկիրը: Տպավորություն է ստեղծվում, թե նրանք պետությունը շփոթում են Ստեփանակերտի ԺէԿ-ի կամ Բուրջ-Համմուդի թաղապետարանի հետ: Երբ իրենց հայտարարությունների ձեռքը կրակն ընկած Ռոբերտ Քոչարյանն ու Վարդան Օսկանյանը հայտնվում են անհարմար վիճակներում, պատճառաբանում են, թե ճիշտ չեն հասկացվել, կամ իրենց խոսքերը սխալ են թարգմանվել: Ո՞վ է երբեւէ, անհողաբաշխ բարբառանքներից ու հոխորտալից հայտարարություններից բացի, նրանց շուրթերից որեւէ կշռադատված, տրամաբանական վերլուծություն կամ ծրագրային ելույթ լսել արտաքին ֆաղափականությանը վերաբերող խնդիրների մասին: Ե՛րբ են նրանք իրենց հստակ տեսակետը ներկայացրել արտաքին

ֆաղաֆականության այնպիսի կենսական եւ հրատապ հարցերի վերաբերյալ, ինչպիսիք են, ասենք, Ղարաբաղյան հակամարտության լուծումը, Հայաստանի ֆաղաֆական եւ տնտեսական մեկուսացման հաղթահարումը, հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը եւ թեկուզ Ցեղասպանության ճանաչման խնդրի հետապնդումը, որի նպատակը հայտնի չէ ո՛չ ժողովրդին, ո՛չ էլ նույնիսկ իրենց:

Ազնիվ լինելու դեպքում ներկա իշխանությունները պետք է ընդունեին, որ մեր արտաքին ֆաղաֆականությունը վերջին տաս տարում լիակատար ձախողման կամ կրախի է մատնվել: Ամերիկյան կոնգրեսից պահանջում էին ուժի մեջ թողնել Ադրբեջանի դեմ կիրառված պատժամիջոցներին վերաբերող 907 բանաձեռը, բայց կոնգրեսը չեղյալ հայտարարեց այն: Նույն մարմնին պաշտոնապես կոչ էին անում ճանաչել Հայոց ցեղասպանությունը, եւ տեսանք, թե դա ինչ արդյունք ունեցավ: Թուրքիային հորդորում էին մեզ հետ հարաբերությունները չպայմանավորել հայ-ադրբեջանական հակամարտության գործոնով ու բացել ընդհանուր սահմանը, սակայն ոչինչ չստացվեց: Սկզբնապես Թուրքիայի առջեւ պայման էին դնում ճանաչել Ցեղասպանությունը, բայց հետո հրաժարվեցին դրանից, համաձայնելով՝ այդ երկրի հետ հարաբերությունները կարգավորել առանց նախապայմանների: Համաշխարհային հանրությանը թելադրում էին թույլ չտալ Ղարս-Ախալբալաֆ երկաթուղու կառուցումը, բայց դա արդեն իրականություն է դառնում: Ընդդիմանում էին Ախալբալաֆում տեղակայված ռուսական բազայի դուրսբերմանը, սակայն այդ բազան այլեւս գոյություն չունի: Հոխորտում էին, թե Հայաստանը դեռ 100 տարի էլ կարող է զարգանալ շրջափակման պայմաններում, բայց շարունակ բողոքում են շրջափակումներից: Պնդում էին, որ հայերն ու ադրբեջանցիներն օրգանապես անհամատեղելի ազգեր են, բայց գիշեր-ցերեկ խոսում են հաշտությունից: Հայտարարում էին, որ Ղարաբաղի հարցը մեզ համար արդեն լուծված է, բայց, չգիտես ինչու, չեն հրաժարվում բանակցություններից: Փորձում էին խափանել ԵԱՀԿ գագաթնաժողովի անցկացումը Ստամբուլում, բայց գլխիկոր մասնակցեցին այդ գագաթնաժողովին, ու դեռ ավելին, ստորագրեցին նրա ընդունած հայտնի խարտիան, այդպիսով պետական մակարդակով ճանաչելով Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը: Մի խոսքով, դիվանագիտական խայտառակ պարտությունների մի ամբողջ

շարան, որոնք խոստովանելու կամ նույնիսկ ըմբռնելու ունակությունը դուրս է Քոչարյանի և Օսկանյանի կարողության սահմաններից:

Ի՞նչ կարիք կար ներհաշվել գործընթացների մեջ, որոնք կախված չեն Հայաստանի կամֆից, կամ հավակնել դերակատարումների, որոնք վեր են նրա հնարավորություններից: Այդպիսի անխոհեմության ամենավառ օրինակն է մեր միջամտությունը Երոմիության և Թուրքիայի հարաբերությունների կառուցման գործընթացին: Մի՞թե հասկանալի չէ, որ Հայաստանը ո՛չ կարող է նպաստել, ո՛չ էլ խոչընդոտել Թուրքիայի անդամակցությանը Երոպական Միությանը: Մեր ի՞նչ գործն էր, ուրեմն, նամակներ հղել Բրյուսել՝ պահանջելով չսկսել Երոմիություն-Թուրքիա բանակցությունները կամ վերջինիս առջեւ նախապայման դնել՝ հանաչել Հայոց ցեղասպանությունը: Մեզ համար ո՞րն է գլխավոր՝ պատշան կերպով չնեակերպված մի սկզբունք, թե՞ Հայաստանի կոնկրետ պետական շահը: Երոպան, եթե ցանկանար, այդ նախապայմանը կդնե առանց մեր խնդրանքի, և հավատացած եղեք, այդպես էլ վարվել է: Եթե Երոմիությունն այսօր տարբեր պատրվակներով ձգձգում է Թուրքիայի հետ բանակցությունները և նորանոր պայմաններ առաջարկում նրան, դա ընդամենը նշանակում է, որ առայժմ պատրաստ չէ իր կազմում ընդգրկել այդ երկիրը: Երբ պատրաստ լինի, կբավարարվի Թուրքիայի բացատրություններով և մի կողմ կդնի սուր տարածայնությունները, այդ թվում՝ Ցեղասպանության հարցը:

Հայաստանի իշխանությունների՝ անմեղսունակության հասնող պահվածքն այս հարցում տարօրինակ է նաեւ մեկ այլ առումով: Մի կողմից կեսբերան հայտարարելով, թե համաձայն են Թուրքիայի անդամակցությանը Երոմիությանը, մյուս կողմից նրանք, ինչպես տեսանք, անում են ամեն ինչ՝ դա վիժեցնելու համար: Ինչո՞վ բացատրել այս երկակի խաղը: Մի՞թե ակնհայտ չէ, որ Թուրքիայի անդամակցությունը Երոմիությանը՝ Հայաստանին ձեռնառու է բոլոր առումներով՝ թե՛ տնտեսական, թե՛ ֆաղափական, թե՛ սպահովական: Ո՞րն է ավելի վտանգավոր՝ Երոմիության անդամ Թուրքիան, թե՞ Արեւմուտքից մերժված, հայացքը դեպի Արեւելք շրջած Թուրքիան: Կամ ո՞րն է ավելի նախընտրելի՝ Արեւմուտքից մեկուսացած Հայաստանը, թե՞ Երոմիությանը սահմանակից Հայաստանը: Մեր երկրի արտաքին ֆաղափականությունը վաղուց պիտի պատասխանած լինեւր այս պարզ հարցերին: Ի դեպ, իմ

տպավորությամբ, հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հարցում Սերժ Սարգսյանն ավելի լրջմիտ եւ իրատես է, քան Ռոբերտ Քոչարյանը, քանի որ չի տառապում վերջինիս նարցիսիզմով:

Ի՞նչ պիտի անեին Հայաստանի իշխանությունները՝ Եւրոմիությանը Թուրքիայի անդամակցությանը խոչընդոտելու փոխարեն: Պիտի անեին իրենց արածի նիշտ հակառակը: Այսինքն՝ պետք է բարի կամք դրսևորեին եւ ոչ մի կերպ չխանգարեին այդ գործընթացին: Ավելին, պետք է Բոյոսելից պահանջեին շահահարկել Ցեղասպանության ճանաչման հարցը՝ հայ-թուրքական հարաբերությունների այդ բարդ կնեռի լուծումը թողնելով կողմերին: Ժամանակն է վերջապես հասկանալ, որ վերջնագրեր ներկայացնելով կամ անկյուն սեղմելով, ոչ ոք չի կարող Թուրքիային պարտադրել՝ ճանաչել Հայոց ցեղասպանությունը: Բոլորովին չեմ կասկածում, որ Թուրքիան վաղ թե ուշ անելու է այդ բանը: Բայց դա տեղի է ունենալու ոչ թե հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումից առաջ, այլ մեր երկրների միջեւ բարիդրացիության, համագործակցության եւ վստահության մթնոլորտի ձեւավորումից հետո: Հետեւաբար, զգացմունքները մի կողմ թողնելով, այդ հարաբերությունները պետք է կառուցել մեկնելով այն իրողությունից, որ 1915 թվականի իրադարձությունները Հայաստանը համարում է Ցեղասպանություն, իսկ Թուրքիան՝ ոչ: Մեզ համար անընդունելի եւ վիրավորական է հայ եւ թուրք պատմաբանների հանձնախումբը ստեղծելու մասին արված հայտնի առաջարկը, քանի որ դա նախ՝ կասկածի տակ է դնում մեր համազգային համոզումը, եւ երկրորդ՝ բազմաթիվ երկրների խորհրդարանների կողմից Ցեղասպանության ճանաչման կայացած փաստն այլեւս ավելորդ ու ժամանակավրեպ է դարձնում նման հանձնախմբի ստեղծումը:

Այն ամենն, ինչ ասվեց Հայաստանի մասին, բոլորովին չի վերաբերում Սփյուռքին: Ցեղասպանության ճանաչման, հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հարցում Հայաստանն ունի իր ըմբռնումն ու օրակարգը, Սփյուռքն՝ իրենը: Հայաստանը չի կարող եւ իրավունք չունի Սփյուռքին թելադրել իր ըմբռնումն ու օրակարգը: Աշխարհացրիվ հայ ժողովրդի զավակները, որպես տարբեր երկրների քաղաքացի, հարկատու եւ ընտրող, իրավունք ունեն նշում բանեցնելու իրենց կառավարությունների վրա եւ նրանցից պահանջելու՝ ճանաչել Հայոց ցեղասպանությունը: Այդ երկրների ներքին գործն է արձագանքել կամ չարձա-

զանձել իրենց ֆաղափացիների պահանջներին: Թուրքիան նախ՝ չպետք է Հայաստանը շփոթի Սփյուտֆի հետ, եւ երկրորդ՝ չպետք է դժգոհի վերջինիս պահվածքից, քանի որ Սփյուտֆը Ցեղասպանության հետեւանձն է: Թող Ցեղասպանություն չաներ՝ Սփյուտֆ չէր լինի:

Մենք իրավունք չունենք այլեւ կրկնել 19-րդ դարի վերջի եւ 20-րդ դարի սկզբի հայ ֆաղափական մտքի նակատագրական սխալը եւ հայթորական հարաբերություններում ապավինել երրորդ ուժի: Այդպիսի ֆաղափականության ողբերգական հետեւանձները հայտնի են բոլորին: Դա ֆաղափականություն էլ չէ, այլ խեղճի, որբի, անգործի հոգեբանություն: Երբ ուժ չունես պատժելու քո հակառակորդին, հրեվում ես, որ նրան պատժում են ուրիշները: Ոգետրվում ես, որ տարբեր երկրներ Թուրքիային վերաբերող աննպաստ որոշումներ են կայացնում: Եւ վերջապես, ցնծում ես, որ Թուրքիայի ֆուտբոլի հավաքականը պարտվում է մի այլ հավաքականի: Մեզանից յուրաքանչյուրը մանուկ հասակում ապրած պետք է լինի այդ հոգեվիճակը: Երբ քեզ ծեծում էին, ու դու անգործ էիր, ուրախանում էիր, որ մի ուրիշը ծեծում է քեզ ծեծողին: Երեխան՝ հասկացանք, հասարակ մարդը՝ հասկացանք, իսկ մի՞թե պետական այրն իրավունք ունի առաջնորդվել այս հոգեբանությամբ:

Շատ ժողովուրդներ ու պետություններ տարբեր հանգամանքներում ու տարբեր պատճառներով հայտնվել են համազգային աղետի առջեւ: Հայերն ու հրեաները ենթարկվել են ցեղասպանության: Գերմանիան ու Ճապոնիան ջախջախիչ պարտություն կրելով, հիմնահատակ ավերվել են: Օսմանյան Թուրքիան, Բրիտանիան եւ Ռուսաստանը կորցրել են իրենց հզորագույն կայսրությունները: Նրանցից յուրաքանչյուրն իր ողբերգությունը համարում է եզակի. ինչպես արտահայտվել է Տոլստոյը՝ «Երջանիկները նման են իրար, իսկ դժբախտները՝ դժբախտ յուրովի»: Սակայն համազգային ողբերգություն ապրած համարյա բոլոր ժողովուրդներն ու պետություններն էլ այդ ողբերգությունը դարձրել են ոչ թե հուսալուրջան կամ թերաթեփության, այլ ապափինման ու հզորացման գործոն: Նրանք իրենց մեջ ուժ են գտել ոչ միայն ամոքելու իրենց վերերը, ազատվելու պատմական բարդույթներից, այլեւ վերածնունդ ապրելու ու դասվելու աշխարհի ամենակենսունակ ու ծաղկուն պետությունների շարքը: Ի՞նչ է մեզ խանգարում՝ շարունակ ողբալու, աշխարհից դժգոհելու եւ արդարություն մուրալու փոխարեն, հետեւել այդ ազգերի



օրինակին: Մինչև չհաղթահարենք գոնի հոգեբանությունը, մինչև չագտվենք անցյալի բարդություններից, մինչև չնայենք դեպի ապագա՝ մենք ժամանակակից ու կենսունակ ազգ չենք կարող դառնալ: Այդ հոգեբանությունը հաղթահարելու միակ միջոցը Հայաստան երկրի շենացումն ու հզորացումն է՝ երկիր, որն այսօր գտնվում է բորենիների ձեռքում: Պատմությունը հպարտության աղբյուր է շատ ազգերի համար, բայց պատմական բեռը՝ անցանկալի կապանք:

Այս ելույթից հետո էլ, առանց դույզն իսկ կասկածի, կգտնվեն մարդիկ, ովքեր իմ խոսքերը կտրելով կոնտեքստից կամ պարզապես աղավաղելով դրանք, գյուտարարի հրեմելանքով ինձ կվերագրեն մտքեր, որոնք իրականության հետ կապ չունեն: Ես պատասխանատու եմ միայն իմ մտքերի, իմ խոսքերի համար, եւ մտադիր չեմ երբեք անդրադառնալ այդ տիպի անպարարություններին: Ողջ պատմության ընթացքում հայ ժողովուրդը գլխավորապես տուժել է իր կառավարիչների տգիտությունից, անհեռատեսությունից ու արկածախնդրությունից: Մինչդեռ ողջամտությունը երբեք նրան վնաս չի բերել: Ես հավատում եմ ձեր ողջամտությանը եւ կասկած չունեմ, որ դուք ինձ ճիշտ կընկալե՞ք՝ նույնիսկ նախընտրական տրամաբանությամբ ինձ դիվիդենտներ չբերող այս զգայուն հարցում:

*«Հայք», «Հայկական ժամանակ», «Ժամանակ Երեւան» (հատվածաբար), 11 դեկտեմբերի, 2007թ.: «168 ժամ», 12 դեկտեմբերի, 2007թ.: Հրատարակված նաեւ հայերեն, անգլերեն եւ ռուսերեն առանձին գրքույկներով. «Պատմություն. Գաղափարախոսություն. Տիպաբանություն», Երեւան, 2007թ. – “History, Ideology, Typology”, Yerevan-2007 – “История, Идеология, Типология”, Ереван-2007.*

## 2008 թ. ՀՈՒՆՎԱՐԻ 11-Ի ՄԱՄԼՈ ԱՍՈՒԼԻՍԻՑ

*ՉՈՅԱ ԲԱՐՍԵՂՅԱՆ, «Արմենպրես» գործակալություն. – Իմ հարցը վերաբերում է Ձեր ծրագրի արտաքին քաղաքականության հատվածին, որտեղ կա հետեւյալ դրույթը՝ «Կառուցողական ջանքերի գործադրումը Թուրքիայի եւ Ադրբեջանի հետ հարաբերությունների կարգավորման ուղղությամբ»: Կիսնդրեի մանրամասնել սա, եւ ո՞րն եք համարում կառուցողական, բացի առանց նախապայմանների հարաբերությունների հաստատումից: Եւ որպես այս հարցի շարունակություն կիսնդրեի Ձեր վերաբերմունքը ադրբեջանական եւ թուրքական մամուլում եղած անթաքույց ուրախության վերաբերյալ Ձեր հնարավոր վերադարձի նկատմամբ, որով ակնկալվում է Լեռնային Ղարաբաղի հարցի շուտափույթ լուծում հոգուտ Ադրբեջանի: Մասնավորապես նման հրապարակում կար «Չերկալո» օրաթերթում:*

– Ես ֆիչ առաջ ասացի, որ իմ ծրագիրը միայն սա չէ, այս համառոտ դրույթները չեն: Ձեր բարձրագրած հարցերի մասին ես շատ ընդարձակ խոսել եմ իմ վերջին ելույթներում: «Կառուցողական ջանքերի գործադրում Ադրբեջանի եւ Թուրքիայի հետ հարաբերությունները կարգավորելու հարցում» ասելով, ես, առաջին հերթին, նկատի ունեմ Ղարաբաղի հարցի լուծումը: Կառուցողականն այն է, որ ոչ կառուցողական չէ: Մինչեւ հիմա տարվել է ոչ կառուցողական ֆաղափականություն, այսինքն՝ մեր իշխանությունների կողմից ոչինչ չի արվել այդ հարցը լուծելու ուղղությամբ, անկախ այն բանից՝ ի նպաստ մեզ, թե՞ ի նպաստ Ադրբեջանի: Տասը տարի մեր իշխանությունները որեւէ ֆայլ չեն ձեռնարկել: Հակառակ ուղղությամբ են գործել, այն է՝ չլուծել հարցը, վիժեցնել բանակցու-

թյունները՝ ստատուս-ֆլոն պահպանելու նպատակով: Իմ ամբողջ տասը տարվա հայեցակարգային պայքարն այս իշխանությունների դեմ՝ սրա շուրջն է ընթացել: Ազնիվ լինելու պարագայում իշխանությունները մեր ժողովրդին պետք է ասեին՝ մենք չենք լուծելու այս հարցը, ձգե՛ք ձեր գոտիները, համբերե՛ք ես տասը, երեսուն, հառասուն տարի. մենք պիտի ապրենք շրջափակումների մեջ, պիտի գրկանքներ կրենք: Թող ազնիվ լինեն, ասեն այս ամենը: Ոչ սա են ասում, ոչ էլ հարցի լուծման ուղղությամբ որեւէ ֆայլ ձեռնարկում: Ուրեմն, կառուցողականն այս գործընթացում՝ հարցի կարգավորման փիլիսոփայության փոփոխությունն է: Այսինքն՝ հարցի լուծումը վիժեցնելու փիլիսոփայությունից պետք է անցում կատարել հարցի լուծման փիլիսոփայության: Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման խնդրում ես որեւէ գաղտնիք չեմ տեսնում: Այդ հարաբերությունները կկարգավորվեն միայնումիայն Ղարաբաղի հարցի լուծումից հետո: Դրանից առաջ որեւէ բան սպասելն անիմաստ է: Մինչև Ղարաբաղի հարցը չլուծվի, Թուրքիայի սահմանը մեզ համար փակ կմնա: Խոսքը նույնիսկ չի վերաբերում վերջնական լուծմանը: Համոզված եմ՝ կարգավորման գործընթացում թեկուզ լուրջ առաջընթաց արձանագրվելու պարագայում, Թուրքիան կբացի սահմանը՝ դրանով իր նպաստը բերելով վերջնական լուծման գործին: Ինչ վերաբերում է այն հարցին, թե Ադրբեջանում կամ Թուրքիայում ինչ են մտածում իմ հաղթանակի մասին, դա իրենց գործն է: Մենք մեր խնդիրն ենք լուծում, մեր ժողովուրդն է ինձ ընտրում, ոչ թե թուրքերը կամ ադրբեջանցիները: Ես Ձեզ հետ համաձայն էլ չեմ. Ադրբեջանում տասնյակ ավելի շատ հրապարակումներ են եղել, որոնցում ցանկություն է հայտնվել, որ Սերժ Սարգսյանը դառնա Հայաստանի Հանրապետության նախագահ, տասնյակ ավելի շատ, քան ինձնով ուրախացող: Ես այդպիսիք անգամ չեմ էլ տեսել, գուցե կան, չեմ առարկում: Մի պահ պատկերացրե՛ք, եթե Թուրքիայում, Իրանում, Ռուսաստանում, Ֆրանսիայում Հայաստանի ֆաղափականության մասին պատկերացում կազմեն մեր մամուլի հրապարակումներից, որքան լուրջ կընդունվի դա: Ձեմ ասում մերը վատ մամուլ է, ո՛չ, շատ էլ լավ մամուլ է, բայց նրանում այնքան ձայն կա, այնպիսի անեկդոտատիպ սենսացիաներ եւ հնարովի լուրեր, որ դրանից ոչ ոք գլուխ չի հանի: Ուստի մամուլի

այդպիսի հրապարակումների վրա հիմնվելով՝ ֆաղափական լուրջ եզրակացություններ անելը, կարծում եմ այնքան էլ նիշտ չի լինի:

*«Չայք», 16 հունվարի, 2008թ.: «Չայկական ժամանակ», 18 հունվարի, 2008թ.: «Ժամանակ Երեւան», (հատվածաբար), 12 հունվարի, 2008թ.:*

**2008 թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15-Ի  
ՀԱՆՐԱՀԱՎԱՔՈՒՄ ՈՒՆԵՑԱԾ ԵԼՈՒՅԹԻՑ**

Ամենաբնութագրական կողմը աշխարհաբաղադրական այն աննախադեպ իրավիճակն է, որում Հայաստանը հայտնվել է ռուս-վրացական հակամարտությունից հետո: Կարող եմ ասել մի բան՝ անկախության տասնյոթ տարիների ընթացքում Հայաստանը երբեք այնքան ենթակա չի եղել արտաքին ճնշումների և արտաքին մանիպուլյացիաների, որքան հիմա: Սրա բացատրությունը մեկն է՝ արտաքին ճնշումների ենթակա է, և արտաքին ճնշումների ենթարկվում է ոչ լեգիտիմ, կոռուպացված, անազնիվ, գող իշխանությունը: Մաքուր, լեգիտիմ, ընտրյալ, ազնիվ, արդար իշխանությունն ի վիճակի է դիմագրավել ցանկացած արտաքին ճնշում: Արդ, այս ճնշումների առկայության պայմաններում, որոնք, ինչպես ասվեց, ահռելի են, ի՞նչ խնդիր է լուծում Սերժ Սարգսյանը: Խոսել պետական շահի կամ ժողովրդի բարօրության մասին ավելորդ է. Սերժ Սարգսյանի համար, ինչպես նրա նախորդի, նման հասկացություններ գոյություն չունեն: Նրա միակ խնդիրը, նրա միակ մտահոգությունը իր լեգիտիմության ճանաչման, չունեցած լեգիտիմության ճանաչման և իշխանության պահպանման խնդիրն է: Դրա համար նա ուներ երեք ճանապարհ: Առաջին՝ նա պետք է ընտրված լիներ օրինական կարգով, ինչը տեղի չի ունեցել, այլապես նման ջղաձգությունների կարիք չէր ունենա: Երկրորդ՝ ընդդիմության հետ անկեղծ երկխոսության և երկրում արմատական տնտեսական և ժողովրդավարական բարեփոխումների միջոցով շահեր ժողովրդի համակրամբը և լեգիտիմության որոշ պաշար ձեռք բերել: Եւ երրորդ՝ փորձել այդ լեգիտիմությունը ստանալ Հայաստանի պետական շահը զոհաբերելու միջոցով: Դժբախտաբար,

ամենայն ցավով եմ սա ասում, Սերժ Սարգսյանը ակնհայտորեն ընտրել է այս երրորդ հանապարհը, ինչի վկայությունն են Ցեղասպանության եւ Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորման հարցում զիջումներ կատարելու վերաբերյալ նրա պատրաստակամության ցուցադրությունները:

Ցեղասպանության եւ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հարցի մասին մենք շատ ենք խոսել: Դա մեր ծրագրային դրոյթներից մեկն է, որի էությունը վերջին հաշվով հանգում է հետեւյալ բանաձեւին: Քանի որ Թուրքիայի հետ հարաբերություններում Ցեղասպանությունը վիճելի խնդիր է, եւ դժվար է պատկերացնել, որ երկու երկրների միջեւ դա առաջիկայում կարող է հարթվել, ապա գործադրելին համաձայնություն տարածայնության մասին բանաձեւն է: Այսինքն՝ Հայաստանը համարում է, որ 1915 թվականին տեղի ունեցածը ցեղասպանություն է, իսկ Թուրքիան դա չի ընդունում: Այլ կերպ ասած, համաձայնում ենք, որ տեսակետները տարբեր են, եւ մեր հարաբերությունները կառուցում ենք ահա այս համաձայնության հիման վրա: Այս դեպքում հարցը չի խանգարում հայ-թուրքական հարաբերությունների մնացյալ հարցերի կարգավորմանը: Բայց, դժբախտաբար, հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գլխավոր խոչընդոտը նույնիսկ Ցեղասպանության հարցը չէ, այլ Ղարաբաղյան հակամարտության առկայությունը, ինչը ֆիչ հետո կբացատրեմ: Հիմա, ի՞նչ արեց Սերժ Սարգսյանը՝ աշխարհին դուր գալու համար: Առանց երկար-բարակ մտածելու, չգիտեմ ում խորհրդով, վերցրեց եւ հայտարարեց, որ Հայաստանը պատրաստ է ընդունել Թուրքիայի այն առաջարկը, որի էությունը հայ եւ թուրք պատմաբաններից կազմված հանձնաժողովի ձեւավորումն է՝ լուծելու համար այն հարցը, թե ցեղասպանություն եղե՞լ է, թե՞ ոչ: Սա է՛ւ տգիտության, է՛ւ ֆաղափական տհասության խայտառակ դրսեւորում է, մանավանդ որ անակնկալ էլ չէր այդ հարցը: Դա բազմիցս ֆննարկվել է: Այդ առաջարկը եղել է 3-4 տարի առաջ: Դրա մասին արտահայտվել են բոլոր տեսակետները, հանգելով այն ընդհանուր եզրակացության, որ Թուրքիայի կողմից առաջ փառված պատմաբանների հանձնաժողով ստեղծելու գաղափարի նպատակն ընդամենը մեկն էր՝ կասեցնել Ցեղասպանության հանաշման միջազգային գործընթացը: Սա չհասկանալ եւ կասկածի տակ դնել Ցեղասպանության իրողության հարցը, ես կարծում եմ՝ արանից այնկողմ բան չկա: Հիմա

Սարգսյանը հազար բացատրություն կարող է տալ: Այո, իր հաշորդ հարցազրույցներում փորձեց բողոքել խնդիրը, թե ինքն այդպիսի բան չի ասել կամ դա նկատի չի ունեցել, բայց ասվածն արդեն ասվել է: Ասվել է եւ ետ վերադարձնել չի կարելի: Հնարավոր չէ: Թուրքիային տրվել է շանս՝ զգալու Հայաստանի ներկա իշխանության թուլությունը, ինչի արտահայտությունն է այն, որ նա կարող էր անգամ պատրաստակամություն հայտնել նման հանձնաժողով ստեղծելու հարցում: Վնասը տրված է: Իհարկե, հայ հասարակությունը ինչպես Հայաստանում, այնպես էլ Սփյուռքում թույլ չի տա ոչ միայն Սերժ Սարգսյանին, այլև որևէ նախագահի համաձայնվել այդպիսի հանձնաժողովի ստեղծմանը: Դա պետք է մոռանա ներկա թե ապագա ցանկացած նախագահ: Այդ բանը տեղի ունենալ չի կարող: Բայց, ինչպես ասացի, վնասը արդեն տրված է, Սերժ Սարգսյանը ցույց է տվել իր իշխանության թուլությունը, այլապես նա Թուրքիային այդպիսի զիջման գնալու եւ աշխարհին դուր գալու կարիք չէր ունենա: Իսկ աշխարհին դա իսկապես դուր եկավ, տեսանք՝ ինչպիսի արձագանքների արժանացավ նրա պատրաստակամությունը:

Ղարաբաղի հարցը շատ ավելի բարդ է, եւ շատ ավելի բարդ փուլ ենք մտնում այդ հարցի կարգավորման (եթե, իհարկե, կարելի է խոսել կարգավորման մասին), քան էր ընդամենը մեկ ամիս առաջ, այսինքն՝ էր վրաց-ռուսական հակամարտությունից առաջ: Ի՞նչ է տեղի ունենում: Կային մի շարք ստեղծված հակամարտություններ: Չեմ ուզում թվարկել, դուր գիտեմ: Դրանցից երեքը արդեն լուծվեցին: Լուծվեցին բոլորովին ոչ այն զարգացումների տրամաբանությամբ, ինչը մեզ պատկերանում էր, ասենք, մեկ-երկու տարի առաջ: Լուծվեցին էթնիկական փոքրամասնությունների ինֆորոնզման իրավունքի կիրառմամբ, այսինքն՝ ճանաչվեց Կոսովոյի եւ այժմ էլ՝ Հարավային Օսեթիայի եւ Աբխազիայի անկախությունը: Թվում է՝ սա ոգետրիչ հանգամանք պիտի լիներ բոլոր մնացյալ նույնատիպ հակամարտությունների համար, եւ այս տրամաբանությամբ ենթադրվեր, որ վաղ թե ուշ նույն ձեռով լուծվելու են նաև այս հակամարտությունները: Բայց, դժբախտաբար, այդպես չէ, քանի որ այս հարցերում միջազգային հանրությունը, իսկ հանրություն ասելով՝ եւ նկատի ունեմ նախևառաջ գերտերությունները, առաջնորդվում են բացարձակապես ոչ միօրինակ կամ նույն սկզբունքներով: Այս հարցերը սովորաբար լուծվում են երկու սկզբունքով. առաջին՝ կա՛մ երկրնե-

րի տարածֆային ամբողջականության սկզբունքի հիման վրա, կա՛մ էլ ազգային ինֆնորոշման սկզբունքի: Բայց դրանք կիրառվում են ոչ ստանդարտ: Այստեղ գործում է նպատականահարմարության սինդրոմը: Եթե գերտերություններից մեկին կամ մի քանիսին ձեռնառու է հարցը լուծել տարածֆային ամբողջականության սկզբունքով, լուծում են այդ սկզբունքով: Եթե ձեռնառու է լուծել ազգերի ինֆնորոշման սկզբունքի միջոցով, լուծում են այդ սկզբունքով: Ուրեմն նախապայմանը գերտերություններից որեւէ մեկի հակվածությունն է հոգուտ այդ սկզբունքներից մեկի: Դժբախտաբար, Ղարաբաղի հարցում ես չեմ տեսնում որեւէ գերտերություն, իսկ գերտերություն ասելով՝ հիմնականում ես նկատի ունեմ արեւմտյան ոլորտը՝ Միացյալ Նահանգները, Եւրոպական Միությունը եւ Ռուսաստանը, որոնցից որեւէ մեկին Ղարաբաղի ինֆնորոշման իրավունքը ձեռնառու է, կամ գերտերություններից որեւէ մեկը պատրաստակամ է պաշտպանել Ղարաբաղի ինֆնորոշման իրավունքը: Առանց սրա, առանց գերտերությունների շահագրգռության սա հնարավոր չէ: Բայց սա էլ դեռ դժբախտություններից միակը եւ վերջինը չէ: Ավելի մեծ, ավելի ցավոտ գործընթաց է այսօր տեղի ունենում: Ես չեմ ուզում չափազանցել, բացարձականացնել, բայց ստացվում է հետեւյալ պատկերը. աշխարհը դժգոհեց, բողոքեց, քննադատեց Ռուսաստանի վերջին գործողությունները Վրաստանում, բայց վերջիվերջո կարծես-թե հաշտվեց, որ Ռուսաստանն էր, որ պիտի լուծեր Աբխազիայի եւ Հարավային Օսեթիայի հարցը: Սա փաստ է, եւ հիմա Արեւմուտքը փորձում է Ռուսաստանի այս ազդեցությունը հակակշռել իր ակտիվությամբ Լեռնային Ղարաբաղի հարցի կարգավորման գործում: Եթե պարզ, ժողովրդի լեզվով արտահայտվելու լինեմք, Ռուսաստանին ասում են՝ լավ, դու լուծեցիր Հարավային Օսեթիայի եւ Աբխազիայի հարցը, մեմ էլ լուծելու ենք Լեռնային Ղարաբաղի հարցը: Ի՞նչն է ինձ հիմք տալիս նման եզրակացություն անելու: Ակնհայտորեն, Արեւմուտքի եւ մանավանդ Թուրքիայի վերջին շրջանում դրսևորած ակտիվությունը, ինչպես նաեւ այն, որ Սերժ Սարգսյանը, դժբախտաբար, կարծես հիպնոսի տակ, ենթարկվում է այս ակտիվությանը: Ի՞նչը եւ նկատի ունեմ. նախ Թուրքիայի այն առաջարկը, որն արվել է Հայաստանին ու Ադրբեյջանին՝ առաջիկայում եռակողմ հանդիպում կազմակերպել Թուրքիայի, Հայաստանի եւ Ադրբեյջանի արտաքին գործերի նախարարների միջև: Այս հարցը նոր չի



դրվել: Այս հարցը է՛ւ Ադրբեջանի կողմից, է՛ւ Թուրքիայի կողմից 1992 թվականից, անցած տասնվեց տարիների ընթացքում, անընդհատ մեր առջև դրվել է: Ես կարող եմ նույնիսկ անձնական հուշեր պատմել: Երբ ես գնացել էի Օզալի հուղարկավորությանը, Գեմիրելն ինձ եւ էլշիբեյին առաջարկեց եռակողմ հանդիպում կազմակերպել: Ես մերժեցի: Հետո խնդրեց, որ լավ, եթե ոչ իր մակարդակով, գոնե իմ եւ էլշիբեյի հանդիպմանը մասնակցի Թուրքիայի արտաֆին գործերի նախարարը: Բայց դա կրկին եռակողմ կլիներ, եւ ես նորից մերժեցի: Ասացի՝ ես առանձին կհանդիպեմ էլշիբեյի հետ, դեմ առ դեմ, եւ ինչ որ պետք է, մենք կխոսենք մեր երկու երկրների հարաբերությունների մասին: Եռակողմ հանդիպում կազմակերպելու ձգտումը, փաստորեն, Թուրքիայի միջնորդության ընդգծման իմաստ ուներ: Իսկ ի՞նչ կարող էր մեզ համար նշանակել Թուրքիայի միջնորդությունը. ստացվում էր 2/1 հարաբերություն, որովհետեւ Թուրքիայի եւ Ադրբեջանի տեսակետները Ղարաբաղի հարցի վերաբերյալ բացարձակապես համընկնում էին: Մենք լինում էինք միայնակ, Թուրքիան եւ Ադրբեջանը՝ երկուսով:

Դատելով Հայաստանի իշխանությունների առաջին արձագանքից, նրանք պատրաստ են, ահա, այսպիսի հանդիպման: Սա չափազանց վտանգավոր զարգացում է: Չափազանց վտանգավոր ոչ միայն այն առումով, ինչ արդեն նշեցի, այլ նաեւ որովհետեւ դրանով, փաստորեն, վտանգվում է Մինսկի խմբի ձեռաչափը: Կարգավորման գործընթացը դուրս է գալիս Մինսկի խմբի ձեռաչափից: Իսկ Մինսկի խմբի ձեռաչափը մեզ համար մինչեւ հիմա եղել է ամենանիշտ ձեռաչափը, որովհետեւ այստեղ կար գերտերությունների ուժերի հավասարակշռություն, որը մեզ հնարավորություն էր տալիս հասնել այն բանին, որ Ղարաբաղի հարցը չլուծվի գերտերություններից որեւէ մեկի միակողմանի ջանքերի շնորհիվ: Հիմա սա է վտանգված: Եռակողմ հանդիպումներ մեզ առաջարկվել են նաեւ ուրիշների կողմից: Ասենք, Ֆրանսիայի նախագահ ժակ Շիրակը ինձ առաջարկել էր հանդիպում կազմակերպել իր, Ալիեւի եւ իմ միջեւ: Ես դա էլ մերժեցի՝ հայտարարելով, որ Հայաստանը չի կարող մասնակցել որեւէ եռակողմ հանդիպման, եթե այդ հանդիպմանը չի մասնակցում նաեւ Լեոնային Ղարաբաղի նախագահը: Ավելին, ինձ այդպիսի առաջարկ արել է նաեւ Բորիս Ելցինը՝ մեր բարեկամը՝ Հայաստանի եւ անձնապես իմ բարեկամը: Ես այնքան ուժ ունեցել եմ՝

մերժելու անգամ նրան: Ինձ առաջարկել էր հանդիպում կազմակերպել իմ, Ալիևի եւ իր միջեւ կամ Կոզիրեւի, Ալիևի եւ իմ միջեւ՝ նորից Ղարաբաղի հարցը քննարկելու համար: Ես հասա այն բանին, որ Բորիս Ելցինը եւ Կոզիրեւը համաձայնեցին եւ այդ հարցում համոզեցին նաեւ Ալիևին, որպէսզի այդ հանդիպմանը մասնակցի Ռոբերտ Քոչարյանը: Եւ Ռոբերտ Քոչարյանը մասնակցեց այդ հանդիպմանը:

Հիմա, ինչպէս սասցի, այն ռեւերանսներով, որ Սերժ Սարգսյանն այսօր անում է Արեւմուտփին եւ Թուրքիային, չափազանց վտանգվում է Միւսկի իմբի հակատագիրը, որը մեզ համար կարող է բախտորոշ դառնալ: Ի՞նչ կարող էր անել Սերժ Սարգսյանը՝ նշված ննշումները դիմագրավելու համար: Ասացի արդեն՝ այդ ննշումները կարող էր դիմագրավել ընտրյալ նախագահը, կոռուպցիայի մեջ չթաղված, կոմպրոմատների չենթարկվող նախագահը: Ես վստահ եմ, եթե Սերժ Սարգսյանը շատ համառի, նրա նկատմամբ արտասահմանում նաեւ կոմպրոմատներ են հրապարակվելու: Սարգսյանը միայն մեկ բան կարող է անել, այն է՝ փորձել փոխել հասարակական մթնոլորտը, որ տիրում է մեր երկրում, ազատ արձակել ֆաղթանտարկյալներին, փորձել ինչ-որ ձեւով իրական, ոչ թե կեղծ, ոչ թե շինծու, ոչ թե իմիտացիոն երկխոսություն սկսել հասարակության եւ նրա ներկայացուցիչների հետ: Դա միանգամից կփոխեր մթնոլորտը: Դա միանգամից Արեւմուտփին կհասկացներ, որ ազգային խնդիրների շուրջ (ինչպիսին է Ղարաբաղին սպառնացող վտանգը), Հայաստանն ի վիճակի է անգամ լրջագույն տարաձայնությունների պարագայում համախմբվել եւ միասնաբար, ազգովին դիմակայել արտաքին ննշումներին: Միակ հանապարհը սա է: Եթե Սերժ Սարգսյանը գնաց այլ հանապարհով, դա նշանակում է՝ նա հանուն իր ետսփրական շահերի վաճառքի է հանում եւ Յեղասպանությունը, եւ Լեոնային Ղարաբաղը, իսկ վերջին հաշվով՝ մեր հայրենիքը՝ Հայաստանի Հանրապետությունը: Ես չգիտեմ՝ ինչ ազդեցություն կունենա իմ այս ելույթը, բայց սա, կարելի է ասել, ողջամտության իմ վերջին կոչն է Հայաստանի իշխանություններին:

*«Յայը», «Յայկական ժամանակ», «Ժամանակ Երեւան», 16 սեպտեմբերի, 2008թ.:*

**2008 թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի  
ՀԱՆՐԱՀԱՎԱՔՈՒՄ ՈՒՆԵՑԱԾ ԵԼՈՒՅԹԻՑ**

Սիրելի հայրենակիցներ,

Սեպտեմբերի 26-ի հանրահավաքում ես ձեզ խոստացել էի առաջիկայում հանգամանորեն բացահայտել Համաժողովրդական շարժման կամ Հայ Ազգային Կոնգրեսի ուղղվածությունը, ոչինչ չթափանցելով ձեզանից: Այսօր եկել է այդ խոստումը կատարելու ժամանակը, ուստի խնդրում եմ համբերությամբ զինվել ես հետևել իմ ելույթի յուրաքանչյուր բառին:

Ես արդեն առիթ ունեցել եմ ձեր ուշադրությունը հրավիրելու աշխարհաբանական այն աննախադեպ իրավիճակի վրա, որում Հայաստանը հայտնվել է վերջին ժամանակներս, ընդգծելով նաև, որ անկախության տասնյոթ տարիների ընթացքում մեր երկիրը երբեք այնքան ենթակա չի եղել արտաքին ննջումների, որքան հիմա: Եւ այս վտանգավոր իրավիճակում Սերժ Սարգսյանը, պետական շահի կամ ժողովրդի բարօրության գիտակցությամբ առաջնորդվելու փոխարեն, մտահոգված է բացառապես իր լեգիտիմության նանաչման եւ իշխանության պահպանման խնդիրներով: Ընդ որում, վերջին շրջանում նրա կատարած ֆայլերը ցույց են տալիս, որ հանուն այդ նպատակների նա պատրաստ է վերանայել անգամ Հայաստանի արտաքին ֆաղափականության հայեցակարգը եւ Ռուսաստանի ու Արեւմուտքի հետ հարաբերություններում հավասարակշռություն պահպանելու փոխարեն, աստիճանաբար թեփվել վերջինիս կողմը:

Ինչո՞վ բացատրել Սերժ Սարգսյանի կտրուկ շրջադարձը դեպի Արեւմուտք: Չէ՞ որ մինչ այժմ նա հայտնի էր որպես Հայաստանի ամենա-  
 ուսասմես պետական գործիչը: Չմոռանանք, որ նա է «Գույք պարտքի  
 դիմաց» գործարքի գլխավոր նարտարապետը՝ գործարք, որի շնորհիվ  
 Հայաստանի համարյա ողջ էներգետիկ համակարգը հանձնվեց Ռու-  
 սաստանին: Չմոռանանք նաև նրա նշանակալի դերակատարությունը  
 «Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության»  
 շրջանակներում, ինչպես նաև ուսական հատուկ ծառայությունների  
 ու հանցագործ աշխարհի հետ նրա սերտ համագործակցության մասին  
 շրջանավորով համառ խոսակցությունները:

Արդ, ի՞նչն է ստիպել Սերժ Սարգսյանին հրաժարվելու ուսական  
 կողմնորոշումից եւ շրջվելու Արեւմուտքի կողմը: Պատճառն, ակնհայտորեն,  
 Հայաստանի պետական շահը կամ ռազմավարական նկատառումները  
 չեն, այլ իր լեգիտիմության խնդիրը լուծելու պարզ շահագրգռությունը:

Ռուսաստանը Սերժ Սարգսյանի լեգիտիմությունը կասկածի տակ չի  
 դրել: Նախագահ Վլադիմիր Պուտինն առաջիններից մեկն էր, որ դեռևս  
 ընտրությունների արդյունքների պաշտոնական ամփոփումից առաջ  
 շնորհավորեց նրան: Իսկ Սարգսյանն, իր հերթին, խախտելով դիվանա-  
 գիտական վարվելակերպի կանոնները, մի այնպիսի չափազանցված  
 երախտագիտություն հայտնեց Ռուսաստանին, որն անհարմար դրու-  
 թյուն ստեղծեց վերջինիս դիվանագիտության համար:

Սերժ Սարգսյանն իր լեգիտիմության հանաչման խնդիր ունի Արեւ-  
 մուտքում: ԱՄՆ-ի նախագահ Ջորջ Բուշը այդպես էլ մինչ օրս չի  
 շնորհավորել նրան: Իսկ Եւրոխորհրդի Խորհրդարանական վեհաժողովը  
 շարունակում է պահպանել Հայաստանի նկատմամբ պատժամիջոցներ  
 կիրառելու սպառնալիքը, ինչի իրագործումը լուրջ կասկածի տակ  
 կարող է դնել Սերժ Սարգսյանի լեգիտիմությունը:

Այսինքն՝ Սարգսյանն այս հարցում Ռուսաստանից սպասելիք չունի, եւ  
 նրա միակ հույսը Արեւմուտքի բարեհաճությունն ստանալու ակնկալիքն է,  
 ինչի համար նա պատրաստ է ցանկացած գիշման: Իսկ քանի որ Հայաս-  
 տանը, հանձնախնդրներ, տարանցիկ նախապահիների եւ գրավիչ  
 շուկայի բացակայության պատճառով, Արեւմուտքին առաջարկելու այլ

բան չունի, քան իր պետական շահը, Սարգսյանը հետեւաբար ընտրել է այդ շահը զոհաբերելու ճանապարհը: Այս պնդումը հաստատվում է ոչ միայն Առնային Դարաբաղի հակամարտության եւ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հարցերում նրա դրսեւորած գիշողական կեցվածքով, այլեւ, որ ավելի էական է, Հայաստանի արտաքին ֆաղափականությունը «կողմնորոշման» հուն տեղափոխելու նրա մտադրությամբ:

Անկախության ողջ շրջանում Հայաստանն իր արտաքին ֆաղափականության մեջ ձգտել է առաջնորդվել Ռուսաստանի եւ Արեւմուտքի հետ հավասարաշափ հարաբերությունների հաստատման սկզբունքով: Որդեգրելով հանդերձ ժողովրդավարության, ազատականության, շուկայական տնտեսության արեւմտյան արժեքները, Հայաստանը չի ենթարկվել Արեւմուտքի միակողմանի ֆաղափական ազդեցությանը: Մյուս կողմից, սերտ տնտեսական եւ ռազմական հարաբերություններ ունենալով Ռուսաստանի հետ, Հայաստանն այնուամենայնիվ չի դարձել վերջինիս ֆաղափական արբանյակը: Այսինքն, Հայաստանը փորձել է լինել ո՛չ ռուսամետ, ո՛չ էլ արեւմտամետ, այլ առաջնորդվել է բացառապես սեփական ազգային շահերով:

Իմ նախագահության օրոք նման դիրքորոշումը կոչվում էր «բալանսավորման» կամ հավասարակշռման ֆաղափականություն, Քոչարյանի օրոք՝ «կոմպլեմենտարիզմի» կամ փոխյրացման ֆաղափականություն, որոնց տարբերությունը սուսկ տերմինաբանական է:

Սերժ Սարգսյանն, արդ, կտրուկ կերպով խախտում է իրերի այս դրվածքը, եւ առաջնորդվելով բացառապես սեփական շահերով, փորձում է սիրաբանել Արեւմուտքի հետ: Ես ավելորդ եմ համարում գնահատել ռուսական կամ արեւմտյան կողմնորոշման առավելությունները կամ թերությունները, որովհետեւ վտանգավոր եմ համարում ցանկացած ֆաղափական կողմնորոշում: Դրանում ինձ նախելատաջ համոզում է հայ ավանդական ֆաղափական մտքի փորձը, որը աղետալի հետեւանմներ է ունեցել Հայաստանի համար: Վերջին հաշվով, կողմնորոշման արատավոր ֆաղափականության արդյունքն են թե՛ հայ ժողովրդին բաժին ընկած ցեղասպանությունը, թե՛ Հայաստանի առաջին հանրապետության կրած տարածափային կորուստները: Դրանում ինձ համոզում է նաեւ այսօրվա իրականությունը: Մեր աչքի առջեւ Վրաստանի որդեգրած արեւմտյան կողմնորոշումը այդ երկիրը կանգնեցրեց ազգային աղետի առջեւ, ինչից նա կարող էր

խուսափել Ռուսաստանի հետ հավասարակշիռ հարաբերություններ ունենալու պարագայում: Արեւմուտքը, համերաշխության դատարկ ցույցերից ու հոխորտալից հակառուսական հայտարարություններից բացի, ոչնչով չկարողացավ օգնել իր հավատարիմ կրտսեր դաշնակցին:

\* \* \*

Կողմնորոշման ֆաղափականությունն այսօր մեզ համար ունի ոչ թե տեսական կամ վերացական նշանակություն, այլ շափազանց կոնկրետ եւ գործնական բովանդակություն: Երես թե՛հով Ռուսաստանից եւ լիովին ապավինելով Արեւմուտքին՝ հանձինս ԱՄՆ-ի եւ նրա դաշնակից Թուրքիայի, Սերժ Սարգսյանը փաստորեն վերջիններիս է վստահում Հայաստանի արտաքին ֆաղափականության ամենահանգուցային խնդրի՝ Ղարաբաղյան հակամարտության միակողմանի կարգավորումը: Նման եզրակացության հիմք է տալիս այն իրողությունը, որ Արեւմուտքն, ակնհայտորեն, ջանում է Ռուսաստանը դուրս մղել Ղարաբաղյան կարգավորման գործընթացից: Դրա ամենավառ արտահայտությունն են ինչպես արեւմտյան դիվանագետների թափանցիկ ակնարկները, այնպես էլ Ղարաբաղի հարցով հայ-թուրք-ադրբեջանական եռակողմ բանակցությունների անցկացման փաստը, եւ մանավանդ՝ Թուրքիայի կողմից Մինսկի խմբի համանախագահությունն ստանձնելու հնարավորությունների վերաբերյալ խոսակցությունները: Ի դեպ, Սերժ Սարգսյանը տվյալ պահին այնպիսի կախյալ վիճակի մեջ է Արեւմուտքից, որ եթե նրա առջեւ պահանջ դրվի Մինսկի խմբի համանախագահությունում Ռուսաստանը փոխարինել Թուրքիայով, ապա նա հազիվ-թե կարողանա ընդդիմանալ դրան:

Ըստ այդմ, այսօր վտանգի տակ է Մինսկի խմբի գոյությունը, որը տասնվեց տարի շարունակ եղել է Լեւոնային Ղարաբաղի հարցի լուծման միակ միջազգային մեխանիզմը: Իր բոլոր թերություններով հանդերձ, Մինսկի խումբը, Արեւմուտքի եւ Ռուսաստանի հավասարաշափ ներկայացվածության եւ մասամբ նաեւ նրանց միջեւ գոյություն ունեցող մրցակցության շնորհիվ, մեզ համար եղել է Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարմարագույն կամ օպտիմալ ձեռաչափը: Պատահական չէ, որ Ադրբեջանը ջանք չի խնայել Մինսկի խմբի գործունեությունը վարկաբեկելու եւ Ղարաբաղի հարցը միջազգային այլ առյաններ տեղափոխելու ուղղությամբ:

Դժբախտաբար, այդ ձեռաչափի խախտման եւ դրանից Ռուսաստանի դուրսմղման վտանգը միանգամայն իրական է, քանի որ վերջինս, ամբողջապես զբաղված լինելով Վրաստանի իրադարձությունների առթիվ ծագած միջազգային եզնաժամի հաղթահարմամբ, հազիվ-թե կարողանա ինչ-որ կերպ դիմակայել Ղարաբաղի հարցում Արեւմուտքի դրսեւորած ակտիվությանը: Ինքնըստինքյան հասկանալի է, որ Արեւմուտքի ջանքերով Ղարաբաղյան հակամարտության միակողմանի կարգավորման պարագայում Ռուսաստանը դուրս է մնալու նաեւ տարածաշրջանում տեղակայվելիք խաղաղարար ուժերի կազմից: Իսկ դա նշանակում է Այսրկովկասում Ռուսաստանի ազդեցության եթե ոչ լիակատար վերացում, ապա զգալի թուլացում, ինչը հղի է աշխարհաբաղաձայն անկանխատեսելի հետեւանմաներով, ինչպես, օրինակ, Հայաստանի եւ Ադրբեջանի անդամակցության դադարեցումը ԱՊՀ-ին, ռուսական ռազմակայանի եւ սահմանապահ զորքերի դուրսբերումը Հայաստանից եւ այլն:

\* \* \*

Մինակի խմբի ձեռաչափի փոփոխությունն, այսպիսով, նշանակում է Ղարաբաղի հարցի միակողմանի լուծում Արեւմուտքի կողմից, այն էլ Թուրքիայի ամենագործոն մասնակցությամբ, ինչը Հայաստանի համար ամենեւին նպաստավոր չի կարող լինել: Իմիջիայրոց, իրատեսությունը պահանջում է նշել, որ Հայաստանի համար ձեռնտու չէր լինի նաեւ Ղարաբաղի հարցի միակողմանի լուծումը Ռուսաստանի կողմից, քանի որ վերջինս բազմիցս պաշտոնապես հայտարարել է, որ այդ լուծումը տեսնում է Ադրբեջանի տարածքային ամբողջականության շրջանակում: Սակայն սա ընդամենը վերացական դատողություն է, որովհետեւ գործնականում Ռուսաստանի կողմից Ղարաբաղի հարցի միակողմանի լուծում չի սպառնում, գլխավորապես այն պատճառով, որ Ադրբեջանը երբեք դրան չի համաձայնի:

Մինչդեռ հակառակը, այն է՝ այդ հարցի կարգավորումը բացառապես Արեւմուտքի, իսկ ավելի ճշգրիտ, ԱՄՆ-ի եւ Թուրքիայի ջանքերով, ինչպես փորձեցինք հիմնավորել, միանգամայն իրական է:

Սերժ Սարգսյանը գիտակցո՞ւմ է, արդյոք, Արեւմուտքի գիրկը նետվելու եւ Ղարաբաղի հարցի լուծման մենաշնորհը նրան վերապահելու վտանգավորությունը, որը վերջիվերջո կարող է հանգեցնել ազգային

աղետի: Անտարակոյս՝ ո՛չ: Նա փորձում է Արեւմուտքի հետ խաղալ նույն խաղը, որ տասը տարի խաղացել է Ռոբերտ Քոչարյանը: Այդ խաղի էությունը, որ ես հանգամանորեն բացահայտել եմ 2007թ. հոկտեմբերի 26-ի իմ ելույթում, հետեւյալն է. ձեւացնել, թե Հայաստանն անկեղծորեն շահագրգռված է Ղարաբաղի հարցի շուտափույթ կարգավորմամբ, սակայն իրականում հետապնդելով բոլորովին այլ նպատակ, այն է՝ ամեն կերպ խափանել ու վիժեցնել այդ գործընթացը եւ պահպանել ստատուս-ֆվոն:

Ու թեւեւ ԵԱՀԿ-ի միջնորդներն, իրենց հերթին, ձեւացրել են, թե հավատում են հայկական կողմի անկեղծությանը, դա ամենեւին չի նշանակում, որ նրանք չեն հասկացել վերջինիս պարզունակ խաղը: Այն, որ նրանք առանձնապես մեծ ջանքեր չեն գործադրել հակամարտության կարգավորման ուղղությամբ, բացատրվում է նրանով, որ գերտերությունների առաջնահերթությունների շարքում Ղարաբաղի հարցն զբաղեցրել է չափազանց երկրորդական տեղ: Միջազգային տեղորոշմբ, Հյուսիսային Կորեան, Բալկանները, Աֆղանստանը, Իրաքը, Իրանը, արաբ-իսրայելյան հակամարտությունը եւ բազմաթիվ այլ խնդիրներ, մշտապես ստվերել են Ղարաբաղի հարցը:

Եթե Սերժ Սարգսյանին թվում է, թե իրեն կհաջողվի շարունակել այս խաղը, նա չարաչար սխալվում է, որովհետեւ հաշվի չի առնում Այսրկովկասի աշխարհաբաղադրական իրավիճակում տեղի ունեցած հետեւյալ երեք էական փոփոխությունները.

Որքան էլ պարադոքսալ թվա, Աբխազիայի եւ Հարավային Օսեթիայի անկախության հանաչումից հետո Ռուսաստանի ազդեցությունն այս տարածաշրջանում ոչ թե մեծանալու, այլ նվազելու միտումներ է դրսևորում:

Ռուսաստանը դուրս է մղվում Միոսկի խմբի ձեւաչափից, հետեւաբար կորցնում իր դերակատարությունը Ղարաբաղյան կարգավորման գործընթացում:

Ի տարբերություն նախորդ տասը տարիների, այսօր Ղարաբաղի հարցն արդեն Արեւմուտքի համար դարձել է առաջնահերթություն:

Ռուսաստանի հանդէպ Արեւմուտքն առաջնորդվում է մոտավորապես հետեւյալ տրամաբանությամբ. «Շատ լավ, դու լուծեցիր Աբխազիայի եւ Հարավային Օսեթիայի հարցը, մենք էլ լուծելու ենք Լեոնային Ղարաբաղի հարցը»: Իրականության ողջ դատնությունն այն է, որ ինչ-



պես Արեւմուտքը չկարողացավ Ռուսաստանին խանգարել լուծելու Ար-  
խազիայի եւ Հարավային Օսեթիայի հակամարտությունները, այնպես  
էլ, ամենայն հավանականությամբ, Ռուսաստանը չի կարողանալու  
Արեւմուտքին խանգարել լուծելու Ղարաբաղյան խնդիրը: Միակ խան-  
գարիչ հանգամանքը կարող է լինել միջազգային ֆինանսական ճգնա-  
ժամի խորացման եւ անկառավարելի դառնալու վտանգը, որը շեղելով  
Արեւմուտքի ուշադրությունը, թերեւս որոշ խոչընդոտներ առաջացնի  
Ղարաբաղյան կարգավորման նրա ծրագրի իրականացման համար:

\* \* \*

Ռուսաստանին հակադրվելու գործոնը, սակայն, Արեւմուտքի վարքը  
կանխորոշող դրդապատճառներից միայն մեկն է, եւ ամենեւին ոչ գլխա-  
վորը: Գլխավորը Սերժ Սարգսյանի թուլությունն է եւ դրանից օգտվելու  
աննախադեպ պատեհությունը: Այնպիսի լծակների առկայությամբ,  
ինչպիսիք են լեզբախմության բացակայությունը, կոռուպացվածության  
աստիճանը եւ բարոյական նկարագրի խոցելիությունը, Սերժ Սարգսյանն  
ուղղակի գտնված գանձ է Արեւմուտքի համար: Հայաստանի ուրիշ ու  
մի ղեկավար կհամաձայներ անմնացորդ կերպով նետվել Արեւմուտքի  
գիրկը, խորացնել ՆԱՏՕ-ի հետ համագործակցությունը, մեջով շրջվել դե-  
պի Ռուսաստանը, նպաստել Միոսկի խմբից նրա դուրսմղմանը, ընդա-  
ռաջել հայ եւ թուրք պատմաբանների հանձնաժողով ստեղծելու մո-  
ռացված առաջարկին, դրանով կասկածի տակ դնելով Ցեղասպանու-  
թյան իրողությունն ու վիժեցնելով նրա միջազգային ճանաչման գործ-  
ընթացը, համաձայնել հայ-թուրք-ադրբեջանական եռակողմ բանակ-  
ցությունների անցկացմանը, եւ վերջապես, բառիս բուն իմաստով, վա-  
ճառքի հանել Լեռնային Ղարաբաղը:

Այս ամենի դիմաց Արեւմուտքը, բնականաբար, պատրաստ է աչք  
փակել Սերժ Սարգսյանի վերը թվարկված բոլոր արատների վրա, մո-  
ռանալ փետրվարի 19-ի խայտառակ ընտրություններն ու մարտի 1-ի  
ոճրագործությունը, չտեսնելու տալ նրա վարած բռնապետական ներ-  
քին ֆաղափականությունը, հանդուրժել Հայաստանում ժողովրդավարա-  
կան ազատությունների սահմանափակման ու մարդու իրավունքների ոտ-  
նահարման համատարած երեւոյթները եւ հաշտվել ֆաղթանտարկյալ-

ների գոյության փաստի հետ: Սերժ Սարգսյանն, ըստ էության, կանաչ լույս է ստացել Արեւմուտփից՝ ներքին ֆաղափականության բնագավառում գործելու սեփական հայեցողությամբ, ինչի վկայությունն են, մասնավորապես, ժողովրդի դեմ վերջերս սաստկացած ոստիկանական բռնությունները: Սեփական արժեքները մանրադրամի վերածելու Արեւմուտփի այս վարձագիծը, անբարոյական լինելուց առավել, Հայաստանի ու Ղարաբաղի դեմ նյութվող դավադրության տարր է պարունակում:

Սերժ Սարգսյանը կա՛մ չի զգում այս վտանգը, կա՛մ էլ իր իշխանությունը պահպանելու այլ միջոց չի պատկերացնում: Նա ներհաշվել է աշխարհահաղափական մի այնպիսի խաղի հորձանուտ, որի ելքը Հայաստանի ու Ղարաբաղի համար եթե ոչ կործանարար, ապա առնվազն անբարենպաստ է լինելու: Հոկտեմբերի 15-ին Ադրբեջանում կայացած նախագահական ընտրություններից հետո Արեւմուտքը եւ Թուրքիան ուժեղացնելու են իրենց ննչումը Հայաստանի վրա եւ արագացնելու Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացը, միաժամանակ, ինչպես արդեն ասվեց, ձգտելով դրանից դուրս մղել Ռուսաստանը:

Ռուսաստանը կփորձի, անշուշտ, ինչ-որ կերպ հակազդել իր համար անցանկալի այդ զարգացումներին, սակայն որքան արդյունավետ ու Հայաստանի համար օգտակար կլինի այդ հակազդեցությունը, պարզ չէ: Չպետք է անտեսել նաեւ Իրանի գործոնը: Թեեւ այն միակ պետությունն է, որ մինչ օրս հավասարակշռված ֆաղափականություն է վարել Այսրկովկասում, ձգտելով նորմալ հարաբերություններ պահպանել թե՛ Վրաստանի, թե՛ Ադրբեջանի, թե՛ Հայաստանի հետ, սակայն Արեւմուտփի եւ Թուրքիայի ակտիվությունն այս տարածաշրջանում չի կարող չառաջացնել նաեւ նրա որոշակի անհանգստությունը: Եւ արդեն իսկ առաջացրել է, ինչի վկայությունն է, մասնավորապես, Հայաստանի արտգործնախարարի հապշտապ կայացած այցն այդ երկիր:

Թե ինչպես է իր հաշիվների մեջ խնկված Սերժ Սարգսյանը գլուխ հանելու աշխարհահաղափական այս բարդ իրավիճակից, միայն Աստծուն է հայտնի: Եթե նրան թվում է, թե Արեւմուտփին հաճոյանալով եւ լուրջ զիջումների գնալու պատրաստակամության ցուցադրությամբ, կարող է ժամանակ շահել եւ այս անգամ էլ խուսափել Ղարաբաղի հարցի կարգավորումից, իսկ հետագայում նաեւ ինչ-որ կերպ լեզու գտնել Ռուսաս-

տանի հետ, ուրեմն նա ֆաղափականությունից ոչինչ չի հասկանում: Իսկ եթե Սարգսյանը հույսը դրել է այն բանի վրա, որ Ամերիկան, զբաղված լինելով նախագահական ընտրություններով եւ ֆինանսական նգնաժամի հաղթահարման խնդրով, մեծ ջանքեր չի գործադրի Ղարաբաղի հարցի կարգավորման ուղղությամբ, ապա այստեղ էլ նրան հուսախաբություն է սպասում, որովհետեւ տարածաշրջանում ստեղծված նոր իրավիճակում դրա համար Ամերիկայի Միացյալ Նահանգներից մեծ ջանքեր չեն պահանջվում: Չի կարելի նկատի չունենալ նաեւ այն յուրահատուկ հանգամանքը, որ իշխանությունը լոկո ԱՄՆ-ի ներկա վարչակազմը կփափագեր իր ժամկետի ավարտը պսակել արտաքին ֆաղափականության բնագավառում արձանագրած մի այնպիսի հաջողությամբ, ինչպիսին Ղարաբաղյան հակամարտության եւ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումն է:

\* \* \*

Այսպիսով, միանգամայն ակնհայտ է, որ մենք կանգնած ենք Ղարաբաղյան հակամարտության մոտալուտ հանգուցալուծման շեմին: Կարգավորման հիմքում, անկասկած, ընկած է լինելու 2007թ. դեկտեմբերին Մինսկի խմբի համանախագահության անունից հակամարտող կողմերին ներկայացված Մադրիդյան առաջարկը, որի գաղափարաստությունը միջազգային իրավունքի երկու սկզբունքների՝ տարածքային ամբողջականության եւ ազգերի ինքնորոշման ներդաշնակումն է: Ինչ վերաբերում է կարգավորման էությանը կամ կոնկրետ ծրագրին, ապա այն բաղկացած է լինելու մոտավորապես հետեւյալ կետերից.

Հայկական ուժերի դուրսբերում Լեռնային Ղարաբաղին հարակից ադրբեջանական շրջաններից.

Այդ շրջանների վերաբնակեցում ադրբեջանցի փախստականների կողմից.

Ադրբեջանցի փախստականների վերադարձ բուն Լեռնային Ղարաբաղի տարածք.

Լաչինի միջանցքով Լեռնային Ղարաբաղի եւ Հայաստանի միջեւ ցամաքային կապի ապահովում.

Լեոնային Ղարաբաղի սահմանների շրջագծով միջազգային խաղաղարար ուժերի տեղակայում.

Ադրբեջանին վերադարձված տարածքների ապառազմականացում (դեմիլիտարիզացիա).

Ղարաբաղի և Հայաստանի արտաքին հաղորդակցության ճանապարհների ապաշրջափակում և հայ-թուրքական սահմանի վերաբացում.

Լեոնային Ղարաբաղի Հանրապետության միջանկյալ կարգավիճակի սահմանում.

Անորոշ ապագայում Ղարաբաղի վերջնական կարգավիճակի վերաբերյալ հանրաքվեի կամ ժողովրդական հարցման՝ պլեբիսցիտի անցկացում.

Հակամարտության գոտու վերականգնման համար միջազգային ֆինանսական օգնության հատկացում:

Նկատի ունենալով, որ ակնհայտորեն խնդիր է դրված Լեոնային Ղարաբաղի հակամարտության և հայ-թուրքական հարաբերությունների կննդի լուծել փաթեթով, չպետք է բացառել, որ փորձ արվի այդ փաթեթում ընդգրկել նաև Յեղասպանության ուսումնասիրության նպատակով հայ և թուրք պատմաբաններից կազմված հանձնաժողովի ստեղծման հարցը: Քանի որ, ինչպես ասում են, Սերժ Սարգսյանը այդ խայծը կոչ է տվել, նրա օձիքը բաց չեն թողնելու:

Կարելի է, իհարկե, ֆննել այն հարցը, թե վերը նշված կետերից որոնք են ձեռնառու Ադրբեջանին ու Թուրքիային, իսկ որոնք՝ հայկական կողմին, բայց սա անիմաստ զբաղմունք է, որովհետև դրանք արժեւորվում են փոխկապակցվածության և ամբողջականության մեջ: Ավելի էական է պարզել, թե որ կետերն են բանակցություններում առանձնապես լուրջ բարդություններ հարուցելու: Ամենադժվարալույծը, բնականաբար, լինելու են 3-րդ, 4-րդ և 9-րդ կետերը, որոնք համապատասխանաբար վերաբերում են՝ բուն Ղարաբաղում ադրբեջանցի փախստականների վերաբնակեցման, Լաչինի միջանցքի իրավական կարգավիճակի սահմանման և Լեոնային Ղարաբաղում հանրաքվեի անցկացման խնդիրներին: Սակայն նկատի ունենալով աշխարհաբաղադատական վերջին զարգացումները, կարծում եմ, դրանք միջնորդների համար անհաղթահարելի խոչընդոտներ չեն լինելու:

Խնդիրն այն է, որ եթե Մինսկի խմբի համամախազահությունը մինչ այժմ առաջնորդվում էր հակամարտող կողմերի միջև համաձայնու-

թյուն կայացնելու սկզբունքով, ապա այժմ Արեւմուտքը հնարավորություն ունի պարտադրել իր սեփական լուծումը, այսինքն՝ կիրառել Դեյտոնյան տարբերակը: Ցավալին այն է, որ նույն Դեյտոնյան տրամաբանությամբ՝ Լեռնային Ղարաբաղը մասնակցություն չի ունենալու կարգավորման գործընթացին, եւ նրա շահերն առաջիկա բախտորոշ բանակցություններում ներկայացնելու է Հայաստանը, ինչպես բոսնիական սերբերի շահերը ներկայացնում էր Հարավսլավիան: Շուտով մենք, ամենայն հավանականությամբ, ականատեսն ենք լինելու ԱՄՆ-ի ու Թուրքիայի նախաձեռնությամբ եւ Հայաստանի ու Ադրբեջանի մասնակցությամբ գումարվելիք Դեյտոնյան տիպի մի կոնֆերանսի, որին Ռուսաստանը եւ Ֆրանսիան, որպես Միմսկի խմբի համանախագահներ, լավագույն դեպքում, ներկա են գտնվելու դիտորդի կարգավիճակով: Այս կապակցությամբ, կարծում եմ, պատահական չի սահմանված նաեւ Եւրոխորհրդի հորհրդարանական Վեհաժողովի Հայաստանին վերաբերող վերջնական բանաձեւի ընդունման ժամկետը, այն է՝ 2009թ. հունվարը: Սերժ Սարգսյանին այդքան ժամանակ է տրված կատարելու Ղարաբաղյան կարգավորման հարցում իր տված խոստումները, հակառակ դեպքում վերջապես գործի դնելով նախատեսված պատժամիջոցները:

Իրավիճակի պատասխանատվությունն, իհարկե, չի կարելի բարդել միայն Սերժ Սարգսյանի վրա: Մեծ հաշվով, սա Ղարաբաղյան հակամարտության եւ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հարցում այն խայտառակ ֆաղափականության արդյունքն է, որ վերջին ութ տարիներին վարել է ֆոչարյանական վարչակազմը, եւ որի համար հավասարապես պատասխանատու են իրար փոխարինած բոլոր կոալիցիոն կառավարությունները, ֆրեականացած Ազգային ժողովը, պաշտոնական մամուլը, իշխանության կերակրատաշտից օգտվող մտավորականները եւ գրպանային կոտակցությունները: Այսօր մենք ֆաղում ենք, ահա, այդ ֆաղափականության, ինչպես նաեւ ընդհանրապես Քոչարյանի օրոք ձեւավորված ավագակապետական համակարգի ու նրան սատարող ուժերի հանցավոր գործունեության դառը պտուղները:

*«Յայք», «Յայկական ժամանակ», «Ժամանակ Երեւան», 18 հոկտեմբերի, 2008թ.: «168 ժամ», 19 հոկտեմբերի, 2008թ.:*

**ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ «NEWSWEEK» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ ԹՈՒՐ-ՔԱԿԱՆ  
ՏԱՐԲԵՐԱԿԻ ԹՂԹԱԿԻՑ ՍԵՄԻՆ ԳՅՈՒՄՈՒՇԵԼԻԻ ՀԵՏ  
(1 դեկտեմբերի, 2008թ.)**

*– Պարոն նախագահ, ինչպե՞ս եք գնահատում Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ դիվանագիտական ակտիվության ներկա մակարդակը:*

– Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ դիվանագիտական ակտիվության ներկա մակարդակը հիշեցնում է 1991–1993թթ. վիճակը: Այն ժամանակվա պես, այսօր էլ կողմերը դրական ազդանշաններ են հաղորդում միմյանց, պատրաստակամություն հայտնելով ջանքեր գործադրել երկու երկրների հարաբերությունների կարգավորման ուղղությամբ: Բարիդրացիության հաստատման առաջին փորձը, ինչ-ինչ պատճառներով, ձախողվեց: Հուսանք, որ երկրորդ փորձն ավելի հաջող ավարտ կունենա:

*– Այս նոր դիվանագիտական ակտիվության համար խթան հանդիսացավ նաեւ Թուրքիայի նախագահ Գյուլի Հայաստան կատարած այցելությունը: Շարունակվում են նաեւ երկու երկրների դիվանագետների եւ պաշտոնյաների միջեւ գաղտնի բանակցությունները: Այս նոր իրավիճակում Դուք ինչպե՞ս եք գնահատում երկու երկրների մերձեցման փորձի ժամանակացույցը:*

– Գնահատելով հանդերձ պարոն Գյուլի այցը, կարծում եմ դեռ վաղ է այն պատմական համարել: Պատմական դառնալու համար անհրաժեշտ է, որ այդ այցը շոշափելի արդյունքներ ունենա: Ինչ վերաբերում է երկու երկրների դիվանագետների եւ պաշտոնյաների կապերին, ապա ես կխուսափեի դրանք գաղտնի կոչել: Դիվանագիտական հարաբերությունների բացակայության պայմաններում այդպիսի խողովակներ

միշտ էլ գործել են՝ գլխավորապես տեխնիկական հարցեր կարգավորելու նպատակով: Իսկ Թուրքիայի եւ Հայաստանի ներկա մերձեցման պահի ընտրությունը (timing) պայմանավորված է ռուս-վրացական հակամարտության հետեւանմով Հարավային Կովկասում ստեղծված նոր իրավիճակով, ինչպես նաեւ Լեռնային Ղարաբաղի խնդրի շուտափույթ կարգավորման հեռանկարով:

*– Վրաստանում տեղ գտած օգոստոսյան իրադարձություններից հետո տարածաշրջանային կայունությունը դարձավ առաջնահերթություն, ինչը Թուրքիային դրդեց առաջ քաշել Կովկասյան կայունության եւ համագործակցության պլատֆորմի գաղափարը: Ինչպե՞ս եք գնահատում այդ նախաձեռնությունը: Արդյո՞ք այդ պլատֆորմը դրական ազդեցություն կունենա Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացի վրա:*

– Համաձայն եմ, որ օգոստոսյան իրադարձություններից հետո տարածաշրջանային կայունության անհրաժեշտությունը առաջնահերթություն է դարձել: Սակայն այդ գաղափարը նոր չէ, եթե նկատի առնենք, որ վերջին հաշվով նույն նպատակին էր ուղղված Սեւծովյան երկրների համագործակցության ծրագիրը: Կովկասյան կայունության եւ համագործակցության պլատֆորմը, անշուշտ, ողջունելի է: Սակայն նրա իրականացումը մեծապես կախված է այն բանից, թե որքան անկողմնակալ եւ կոնստրուկտիվ կլինի Թուրքիայի դիրքորոշումը Ղարաբաղյան կարգավորման գործընթացում: Բացի այդ, դժվար է պատկերացնել նման գաղափարի հաջողությունը առանց տարածաշրջանային կարեւոր դերակատարներից մեկի՝ Իրանի մասնակցության:

*– Ինչ վերաբերում է Լեռնային Ղարաբաղի կարգավորման գործընթացին, ի՞նչ եք կարծում, արդյոք Հայաստանի եւ Ադրբեջանի դիրքորոշումների մեջ կտրուկ փոփոխություն է տեղի ունեցել: Արդյո՞ք կան լավատեսության հիմքեր բանակցությունների ներկա փուլի առնչությամբ, մասնավորապես, Հայաստանի եւ Ադրբեջանի առաջնորդների կողմից Մոսկովյան հռչակագրի ստորագրությունից հետո: Արդյո՞ք Թուրքիան կարող է միջնորդական դերակատարություն ունենալ հակամարտության կարգավորման մեջ:*

– Նկատի ունենալով Հայաստանի եւ Ադրբեջանի իշխանությունների որդեգրած իռացիոնալ դիրքորոշումները, ես չեմ հավատում, որ այդ երկրներն ընդունակ են երբեւէ համաձայնության գալու Լեռնային Ղարաբաղի հակամարտության շուրջ: Ամեն ինչ կախված է միջնորդների, առաջին հերթին, Ամերիկայի Միացյալ Նահանգների եւ Ռուսաստանի ներդրած ջանքերի արդյունավետությունից: Մինչ այժմ ո՛չ Արեւմուտքի, ո՛չ էլ Ռուսաստանի համար Ղարաբաղի հարցը առաջնահերթություն չի եղել, ինչի պատճառով էլ նրանք անհրաժեշտ ջանքեր չեն գործադրել այն լուծելու ուղղությամբ: Կարծում եմ, Հարավկովկասյան վերջին զարգացումները նրանց պետք է ստիպեն վերանայել իրենց մոտեցումը: Մոսկովյան հոչակագիրը դրա արտահայտություններից մեկն է, որին, վստահ եմ, շուտով կհետեւեն Արեւմուտքի նախաձեռնությունները: Իսկ Թուրքիայի դրական դերը Ղարաբաղյան կարգավորման գործընթացում ես տեսնում եմ Ադրբեջանի վրա ազդեցություն գործելու եւ նրան փոխզիջման տրամադրելու ունակության մեջ:

*– Պարոն նախագահ, հիմնվելով Ձեր փորձառության վրա, Դուք ինչպե՞ս եք պատկերացնում Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման գործընթացը:*

– Իմ պատկերացմամբ՝ հարցը պետք է լուծվի փուլ առ փուլ, հավասարակշռված փոխզիջումների հիման վրա, հաշվի առնելով Լեռնային Ղարաբաղի հանրապետության ինքնորոշման իրավունքը: Կարծում եմ, Մինսկի խմբի համանախագահության ներկայացրած Մադրիդյան առաջարկը լուրջ հիմք է այդպիսի լուծման հասնելու համար: Թեեւ այդ առաջարկը, այսօրվա դրությամբ, լիապես չի բավարարում կողմերից ոչ մեկին, սակայն արդյունավետ միջնորդական ջանքերի գործադրման եւ միջազգային երաշխիքների ապահովման պարագայում հայկական կողմի եւ Ադրբեջանի միջեւ գոյություն ունեցող տարաձայնությունները ինձ միանգամայն հաղթահարելի են թվում:

*– Պարոն նախագահ, Դուք քննադատում եք Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանին արեւմտամետ դիրքորոշում որդեգրելու համար, Ռուսաստանի եւ Արեւմուտքի միջեւ հավասակշռության քաղաքականությունը պահպանելու փոխարեն: Ի՞նչ հետեւանքներ կարող է ունենալ արտաքին քաղաքականության սման փոփոխությունը, մասնավոր-*



**րապես, այն բանից հետո, երբ Ռուսաստանը տարածաշրջանում ցուցադրեց իր ռազմական ուժը:**

– Ռուսաստանի եւ Արեւմուտքի հավասարակշռության խախտումը Հայաստանի արտաքին ֆաղափականության մեջ եւ վտանգավոր եւ համարում թե՛ տարածաշրջանային անվտանգության, եւ թե՛ Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորման առումով: Մանավանդ, որ այդ վարֆագիծը թելադրված է ոչ թե ստրատեգիական նկատառումներով, այլ Հայաստանի ներքաղաքական իրավիճակի առանձնահատկությամբ: Երկրի ներսում լեզիտիմության դեֆիցիտը Սերժ Սարգսյանը ձգտում է փոխհատուցել արտաքին աշխարհում լեզիտիմություն ստանալով: Ի տարբերություն Ռուսաստանի, որը Սերժ Սարգսյանի լեզիտիմությունը կասկածի տակ չի դրել, Սերժ Սարգսյանն իր լեզիտիմության ճանաչման խնդիր ունի Արեւմուտքում: ԱՄՆ-ի նախագահ Ջորջ Բուշը այդպես էլ մինչ օրս չի շնորհավորել նրան: Իսկ Եւրոխորհրդի Խորհրդարանական վեհաժողովը շարունակում է պահպանել Հայաստանի նկատմամբ պատժամիջոցներ կիրառելու սպառնալիքը, ինչի իրագործումը կասկածի տակ կարող է դնել Սերժ Սարգսյանի լեզիտիմությունը: Այսինքն՝ Սարգսյանն այս հարցում Ռուսաստանից սպասելիք չունի, եւ նրա միակ հույսը Արեւմուտքի բարեհաճությունն ստանալու ակնկալիքն է, ինչի համար նա պատրաստ է ցանկացած գիշման: Իսկ քանի որ Հայաստանը, հանրային ռեսուրսների, տարանցիկ ճանապարհների եւ գրավիչ շուկայի բացակայության պատճառով, Արեւմուտքին առաջարկելու այլ բան չունի, քան իր պետական շահը, Սարգսյանը հետեւաբար ընտրել է այդ շահը զոհաբերելու ճանապարհը:

*– Անդրադառնալով անցյալ տարվա մարտին տեղի ունեցած իրադարձություններին եւ Ձեր երկրի ներքաղաքական ճգնաժամին, Դուք ինչպե՞ս եք մեկնաբանում այն իրադարձությունները, որոնք ավարտվեցին ընդդիմության դեմ բռնի ուժի գործադրմամբ, ինչի արդյունքում անձամբ Դուք հայտնվեցիք տնային կալանքի մեջ: Ձեր կարծիքով Չայաստանի ներկա իշխանությունները շարունակո՞ւմ են վախենալ Ձեզնից որպես քաղաքական գործիչի, թե Չայաստանի քաղաքականության մեջ վտանգ ներկայացնող գործիչի: Ավելին, ինչպե՞ս եք պատկերացնում Չայաստանում ժողովրդավարության հեռանկարնե-*

**որը եւ արդոյքը հնարավոր է ժողովրդավարության առաջընթաց ակնկալել քաղաքական փակուղու պայմաններում, երբ անգամ քաղաքատարկյալները դեռեւս բանտում են:**

– Հայաստանի հասարակության մեծամասնության համար անառարկելի է այն փաստը, որ Սերժ Սարգսյանը իշխանությանը տիրել է կեղծված ընտրությունների եւ խաղաղ ցուցարարների դեմ գործադրված սպանդի միջոցով: Այդ պատճառով ժողովրդավարության վերականգնման միակ հեռանկարը մենք համարում ենք արտահերթ նախագահական եւ խորհրդարանական ընտրությունների անցկացումը, որը մեր ներքին խնդիրն է եւ լուծելու ենք ինքներս: Դրանով հանդերձ, մենք չենք կարող մեր հուսախաբությունը շարտահայտել Հայաստանում ժողովրդավարության եւ մարդու իրավունքների ոտնահարման հանդեպ Արեւմուտփի դրսեւորած հանդուրժողականության առթիվ, ինչն այլ կերպ, քան քաղաքական շահադիտության վրա հիմնված վարձագիծ չի կարելի կոչել: Տպավորություն է ստեղծվում, որ Արեւմուտփի համար ժողովրդավարությունը եւ մարդու իրավունքները դադարել են ինքնին արժեք լինելուց:

**– Պարոն Նախագահ, Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ հարաբերությունների բարելավման հարցում Ձեր հայացքները եւ Ձեր վարչակազմի վարած քաղաքականությունը ժամանակին գնահատվում էին որպէս բեկումնային եւ առաջադիմական: Այժմ, երբ Սարգսյանը հետեւում է Ձեր առաջ քաշած քաղաքականությանը, չե՞ք ցավում այն բանի համար, որ Հայաստանը այսքան մեծ ուշացումով է գնահատում եւ ընկալում Ձեր ջանքերը:**

– Ինձ այնքան էլ չի հետաբերում հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործում իմ վարած քաղաքականության գնահատականը, ոչ էլ ավստոսում եմ, որ իմ ջանքերն ուշացումով են ընկալվում: Ցավում եմ միայն կորսված ժամանակի եւ բաց թողնված հնարավորությունների համար: Եթէ Հայաստանի իշխանություններն անկեղծորեն ձգտում են վերականգնել այդ կորուստները, եւ միայն գոհունակություն կարող եմ արտահայտել այդ առթիվ:

**– Ձեր քաղաքական կարիերայից տասնյակ տարիներ հետո որո՞նք են Ձեր կարծիքով Ձեր անցյալ սխալները եւ թուր հաշվարկները հայ-թուրքական հարաբերությունները փակուղուց դուրս բերելու մոտեց-**

**ման մեջ: Օրինակ, Ձեր նախկին խորհրդական Ժիրայր Լիպարիտյանը իր գրքում նշում է ընդհանուր պատմության մասին, որն ազդեցություն է ունեցել ինչպես Հայաստանում, այնպես էլ Թուրքիայում պետականության ձևավորման հարցում: Ի՞նչ կասեիք ընդհանրական պատմության եւ ապագայի մասին:**

– Այդ հարցում իմ սխալների եւ թյուր հաշվարկների մասին պետք է հարցնել թուրքական կողմի կարծիքը: Ես կարող եմ խոսել Թուրքիայի իշխանությունների բացթողումների մասին, որոնցից գլխավորը, իմ կարծիքով, հայ-թուրքական հարաբերությունների պայմանավորումն էր հայ-ադրբեջանական հարաբերություններով: Դա մասամբ բացատրվում էր այն իրողությամբ, որ 90-ական թվականներին թուրքական կառավարությունները մեծամասնության կառավարություններ չէին, եւ այդ պատճառով Թուրքիայում Ադրբեջանի նկատմամբ համերաշխությունը վերածվել էր ներհաղափական պայքարի առարկայի: Թուրքիայի ներկայիս մեծամասնական կառավարությունը չունի այդ մտահոգությունը, ինչը հույս է ներշնչում նրանից ակնկալել ավելի կառուցողական մտեցում:

*“Newsweek Turkiye”, 1 դեկտեմբերի, 2008թ.:*

**ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍԻ ԱՌԱՋԻՆ**  
**ՀԱՄԱԺՈՂՈՎՈՒՄ ՈՒՆԵՑԱԾ ԵԼՈՒՅԹԻՑ**  
(21 դեկտեմբերի, 2008թ.)

Անդրադառնալով Ղարաբաղյան հակամարտությունը և հայ-թուրքական հարաբերությունները փաթեթով կարգավորելու ուղղված վաղ սկզբունքին, ապա գործնական ֆաղափականության և մեթոդաբանության առումով, դա, թերեւս, իրատեսական մոտեցում է: Որովհետեւ միանգամայն ակնհայտ է, որ ֆանի դեռ Ղարաբաղի հարցը լուծված չէ, հայ-թուրքական հարաբերությունները չեն կարգավորվելու և հայ-թուրքական սահմանը չի բացվելու: Սակայն մեթոդաբանական այդ սկզբունքի իրականացումը կախված է նրանից, թե որքան անկողմնակալ և կառուցողական կլինի Թուրքիայի դիրքորոշումը Ղարաբաղյան կարգավորման գործընթացում՝ մասնավորապես Ադրբեյջանի վրա ազդեցություն գործելու և նրան փոխզիջման տրամադրելու առումով: Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման համատեքստում թուրքական կողմն, ակնհայտորեն, նկատի ունի նաեւ Յեղասպանության հարցով հայ և թուրք պատմաբանների համատեղ հանձնաժողովի ստեղծումը: Մոռացված այս գաղափարը, որն անզգուշաբար ֆաղափական օրակարգ մտավ Սերժ Սարգսյանի թեթեւ ձեռքով, կարող է լուրջ և անհարկի խոչընդոտներ հարուցել ինչպես Ղարաբաղյան հակամարտության, այնպես էլ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործում, ֆանի որ ակնհայտ է, որ մի կողմից՝ Թուրքիան չի հրաժարվելու այդպիսի հանձնաժողով ստեղծելու սեւեռուն մտադրությունից, մյուս կողմից՝ Սարգսյանը, ամենամեծ ցանկության դեպքում

անգամ, հասարակական կարծիքի ննշման տակ, չի կարողանալու դրականորեն արձագանքել այդ մտադրությանը:

*«Հայք», «Հայկական ժամանակ», «Ժամանակ Երեւան», 23 դեկտեմբերի, 2008թ.:*

**2009 թ. ՄԱՅԻՍԻ 1-Ի  
ՀԱՆՐԱՀԱՎԱՔՈՒՄ ՈՒՆԵՑԱԾ ԵԼՈՒՅԹԻՑ**

**Հայ-թուրքական հարաբերություններ**

Հայ-թուրքական հարաբերություններում վերջերս նկատվող աննախադեպ տեղաշարժը արժանի է հատուկ գնահատականի, որովհետև այն շոշափում է Հայոց պետականության զարգացման ամենակենսական խնդիրներից մեկը: Միանգամից նշեմ, որ Հայ Ազգային Կոնգրեսը, բացառությամբ իր մասը կազմող մի կազմակերպության, կողմ է հայ-թուրքական հարաբերությունների շուտափույթ կարգավորմանը եւ պատրաստ է այդ հարցում աջակցել Հայաստանի իշխանությունների ձեռնարկած բոլոր դրական ֆայլերին: Մեր միակ առարկությունը վերաբերում է Ցեղասպանության ուսումնասիրման նպատակով հայ եւ թուրք պատմաբանների հանձնաժողովի ստեղծմանը, քանի որ մեր համոզմամբ՝ դա այլ բան, քան Հայոց ցեղասպանության ուրացում, չի նշանակում:

Իսկ այժմ տեսնենք, թե ինչում է արտահայտվում հիշյալ տեղաշարժը: Ակնհայտ է, որ հայ եւ թուրք դիվանագետների գաղտնի շփումների արդյունքում ստեղծվել է մի աշխատանքային փաստաթուղթ, որն ընդգրկում է հետևյալ կետերը.

– Հայաստանի եւ Թուրքիայի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատում.

– Պետական սահմանների փոխադարձ հանաչում.

– Հայ-թուրքական սահմանի բացում.

– Հայ եւ թուրք պատմաբաններից կազմված հանձնաժողովի ստեղծում:

Հետագայում այդ փաստաթուղթը կոչվեց «ճանապարհային ֆարտեզ», և բացահայտվեցին մի ֆանի այլ մանրամասներ: Ինչեւէ, թվում է, թե մենք գործ ունենք միջպետական հարաբերությունների հաստատման մի լուրջ մտադրության հետ, մանավանդ նկատի ունենալով, որ Թուրքիան, կարծես-թե, հրաժարվել է հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը Ղարաբաղի խնդրի լուծմամբ պայմանավորելու իր նախկին ապակառուցողական դիրքորոշումից: Սակայն առկա են երկու հանգամանքներ, որոնք մթազնում են այս տպավորությունը: Հայկական կողմի համար ակնհայտորեն որոշակի դժվարություն պիտի հարուցեր հայ եւ թուրք պատմաբանների հանձնաժողովի ստեղծման գաղափարը, և վերջիվերջո նրան հաջողվել է այն վերանվանել միջկառավարական հանձնաժողով: Բայց դա ընդամենը միայն խնդիրը փոփոխելուն է հայ ժողովրդին հանդարտեցնելուն միտված մեղմասացություն (եւֆիմիզմ) է, ֆանի որ միջկառավարական հանձնաժողովում եւս ենթադրվում է ստեղծել պատմաբանների ստորաբաժանում, ինչից հարցի էությունն ամենեւին չի փոխվում: Իսկ թուրքական կողմը չի կարող հաշվի չնստել ադրբեջանական հասարակության եւ սեփական ընդդիմության ճնշման հետ, ուստի ստիպված կրկին վերադառնալու է իր նախկին դիրքորոշմանը: Այսինքն, հակառակ լավատեսական կանխատեսումներին և հակառակ բոլոր սպասումներին, Հայաստանի եւ Թուրքիայի հարաբերությունները չեն կարգավորվելու և հայ-թուրքական սահմանը չի բացվելու, ֆանի դեռ էական առաջընթաց չի արձանագրվել Ղարաբաղյան հակամարտության լուծման հարցում:

Այս դեպքում հարց է առաջանում. ի՞նչն էր, ապա, բարձրացված այդ ամբողջ աղմուկի իմաստը: Ցավոք, հարցի պատասխանը դառնահամ է լինելու հայկական կողմի համար: Ամբողջ խնդիրն այն է, որ Թուրքիան, Հայաստանի հետ հարաբերությունները կարգավորելու ընդհանուր տրամադրվածությունից բացի, իր առջեւ նաեւ մի ավելի նվազագույն եւ կոնկրետ նպատակ էր դրել, այն է՝ ամեն գնով կանխել Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ Բարաք Օբամայի եւ ամերիկյան կոնգրեսի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման վտանգը: Թուրքիան լիովին հասավ իր նպատակին, Հայաստանը մնաց ձեռնունայն, իսկ Սփյուտքը դարձյալ հուսախաբ եղավ: Ֆուտբոլային դիվանագիտությամբ սկսված խաղի առաջին կեսն ավարտվեց 1 : 0 հաշվով՝ հօգուտ Թուրքիայի:

Թուրքիայի ղեկավարները նախագահ Օբամայի առջև դրին հայ եւ թուրք դիվանագետների աշխատանքի արդյունքում ծնված վերոհիշյալ փաստաթուղթը եւ, ինչպես սպասելի էր, նրան հեշտությամբ համոզեցին, որ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման բնագավառում լրջագույն գործընթաց է մեկնարկել: Օբաման, թեւ գովելի ազնվությամբ, հայտարարեց, որ Հայոց ցեղասպանության գնահատման հարցում չի փոխել նախընտրական շրջանում արտահայտած իր տեսակետը, սակայն պետական այրին վայել կեցվածքով բացատրեց, որ մտադիր չէ խանգարել այդ դրական գործընթացին, հասկացնել տալով, որ Հայոց ցեղասպանության ճանաչման հարցն առայժմ հանվում է Ամերիկայի Միացյալ Նահանգների օրակարգից:

Կարելի՞ է, արդյոք, Թուրքիային եւ Ամերիկայի Միացյալ Նահանգներին մեղադրել երկերեսանիության մեջ: Ամենեւին ոչ: Թուրքիան, նախանձելի դիվանագիտական հնարամտություն դրսևորելով, այս հանգրվանում փայլուն կերպով լուծեց իր հետապնդած առաջնահերթ խնդիրը: Իսկ Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահը վարվեց այնպես, ինչպես նման իրավիճակում կվարվեր ցանկացած պատասխանատու առաջնորդ: Եթե, այնուամենայնիվ, մեղադրանքի թիրախ փնտրելու անհրաժեշտություն կա, ապա այդ թիրախը կարող են լինել միայն Հայաստանի վերջին տասնմեկ տարվա իշխանությունները՝ հանձինս Ռոբերտ Քոչարյանի, Վարդան Օսկանյանի, Սերժ Սարգսյանի եւ Էդվարդ Նալբանդյանի, որոնք բառացիորեն պղծեցին Յեղասպանության սուրբ գաղափարը, այն վերածելով ֆաղափական անուրդի ու սակարկության առարկայի: Եւ դա ոչ թե պետական կամ ազգային վեհ նպատակների, այլ բացառապես Սփյուռքին հանդիմանալու եւ ներհաղափական դիվիդենտներ ստանալու մանրախնդիր նկատառումով:

Այս կապակցությամբ հետաքրքիր է հետեւել նրանց վարած միանգամայն սնանկ ու վնասակար ֆաղափականության էվոլյուցիային.

– Քոչարյանի վարչակազմի առաջին գործը եղավ դավանանական կամ հակազգային հայտարարել Թուրքիայի հետ առանց նախապայմանների հարաբերություններ հաստատելու՝ նախկին իշխանությունների որդեգրած ֆաղափականությունը:

– Հայաստանի արտաքին ֆաղափականության անկյունաքարը հռչակվեց Յեղասպանության միջազգային ճանաչման պահանջը, որը որպես



հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման բանական հիմք, հոխորտանձով դրվեց նաև Թուրքիայի առջև:

– Երբ, երկար համառելուց հետո, Քոչարյանը եւ Օսկանյանը ի վերջո համոզվեցին, որ այս եանապարհը փակուղային է, նրանք վերադարձան իրենց կողմից ժամանակին դավանանական հայտարարված Թուրքիայի հետ առանց նախապայմանների հարաբերություններ հաստատելու սկզբունքին, ակամա բացահայտելով Հայաստանի թուլությունը եւ Թուրքիային հիմք տալով ավելի կոշտացնելու իր դիրքորոշումը:

– Թե՛ այս օրյեկտիվ պատճառով, եւ թե՛ սեփական լեզվախմբության խնդրի լուծման նկատառումով, Սերժ Սարգսյանն ընկավ մի ավելի վտանգավոր ծայրահեղության գիրկը՝ հայ-թուրքական սահմանի բացման դիմաց անխոհեմաբար համաձայնելով ընդառաջել Յեղասպանության ուսումնասիրման հարցով հայ եւ թուրք պատմաբաններից կազմված հանձնաժողով ստեղծելու վերաբերյալ Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Էրդողանի կողմից տարիներ առաջ արված համարյա մոռացված առաջարկին:

Ոչ մի այլ բան, քան քաղաքական խարխափումների, անհեռատես ֆայլերի եւ անպատասխանատու ձեռնարկների այս խայտառակ շարքն է, անհա, որ հանգեցրեց նախագահ Օրբանայի Թուրքիա կատարած այցի բերած արդյունքին: Իհարկե, չի կարելի պնդել, որ եթե շիներ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հարցում մեկնարկած վերոհիշյալ գործընթացը, Օրբանան ապրիլի 24-ի իր ուղերձում, արդեն Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահի հանգամանքով, անպայման կարտասաներ ցեղասպանություն բառը կամ ամերիկյան կոնգրեսը կհանաչեր Հայոց ցեղասպանությունը: Այսպիսի իրավիճակներ շատ են եղել, բայց երբեք այդ բանը տեղի չի ունեցել: Բայց ներկա իրավիճակն էականորեն տարբերվում է նախորդներից, քանի որ այս անգամ արդեն հարցի մերժման ֆորմալ պատրվակը Թուրքիայի հետ ամեն գնով, այդ թվում Յեղասպանության ուրացման գնով, մերձենալու Սերժ Սարգսյանի ձախորդ նախաձեռնությունն է: Այսպիսով, առանց դուրս գալու իսկ չափազանցության, հարկադրված ենք արձանագրել. Սերժ Սարգսյանը հանուն սեփական իշխանության երկարաձգման, բառիս բուն իմաստով, ծախեց Յեղասպանությունը: Նրա հաջորդ ֆայլն,

անկասկած, լինելու է Ղարաբաղը ծախելը, ինչից հետո, բնականաբար, նա դառնալու է առաջին հայր, որը կարժանանա Նոբելյան մրցանակի:

Ես մեղմ եմ արտահայտվում. վստահաբար, Սարգսյանի վարքը շատ ավելի անխնա գնահատականների է արժանանալու Հայաստանի եւ մանավանդ Սփյուռքի արմատական շրջանակներում: Արդարությունը պահանջում է, սակայն, կատարվածում մեղադրանքի որոշ բաժին հասցեագրել նաեւ Սփյուռքի ազգային շոջերին, ովքեր ոչ միայն երբեւէ Հայաստանի իշխանություններին չզգուշացրին Ցեղասպանության հանաչման հարցը պետականորեն բարձրացնելու ձեռնարկի անխոհեմության ու վնասակարության մասին, այլեւ ընդհակառակը, ոգետությամբ խրախուսեցին վերջիններիս ջանքերն ու թմբկահարեցին նրանց «սխրանքները»՝ արդյունքում ստանալով այն, ինչ ստացան: Ավելի քան բառասուն տարիների ընթացքում Հայոց ցեղասպանության միջազգային հանաչման նպատակով Սփյուռքի ներդրած հսկայական ջանքերն ու դրամական միջոցներն, այսպիսով, մեկ օրում ջուրը թափվեցին: Դժվար է պատկերացնել, թե ինչպես կարելի է շտկել վիճակը եւ դարմանել պատհառված վնասը:

Այս ամենով հանդերձ, թեկուզ մման տխուր արդյունքով ավարտված հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման ներկա գործընթացը բոլորովին գուրկ չէ դրական տարրերից: Մի կողմից՝ Թուրքիայի բնական շահագրգռվածությունը հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հարցում, իսկ մյուս կողմից՝ այդ կարգավորման պայմանավորումը հայ-ադրբեջանական հարաբերություններում ակնկալվող տեղաշարժով, որոշ հող է ստեղծում Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացի խթանման համար: Դրական պետք է համարել նաեւ դեպքերի բերումով նախագահ Օբամայի ստանձնած բարոյական պատասխանատվությունը, ինչը նրա ղեկավարած երկրի առջեւ պարտավորություն է դնում ավելի ակտիվորեն ու անկողմնակալ կերպով ներգրավվել ինչպես հայ-թուրքական հարաբերությունների, այնպես էլ Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում: Բարաբ Օբաման իդեալիստ է՝ բառիս ամենադրական իմաստով: Իսկ հայտնի է, որ թեեւ աշխարհը սովորաբար կառավարում են պրագմատիկներն ու ցինիկները, բայց ֆաղափարությունն առաջ են մղում ժամանակ առ ժամանակ հայտնվող իդեալիստները: Ընդ որում,

իդեալիստ ասելով, ես ամենեւին նկատի չունեմ իդեոլոգներին, այլ բարոյականության, ազնվության եւ արդարության հարցերում կայուն սկզբունքներ ունեցող հազվագյուտ պետական անձանց:

*«Չայք», «Չայկական ժամանակ», «Ժամանակ Երեւան», «168 ժամ»,  
2 մայիսի, 2009թ.:*



## ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ .....	5
ԵԼՈՒՅԹ ՀԵՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆՍՏԱՇՐՋԱՆՈՒՄ .....	13
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ՕՐԱԹԵՐԹԻՆ ՏՎԱԾ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻՑ .....	16
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ ՈՒՆԵՑԱԾ ԵԼՈՒՅԹԻՑ .....	18
ՀԱՅՈՑ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ 2-ՐԳ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ ՈՒՆԵՑԱԾ ԵԼՈՒՅԹԻՑ .....	20
«ՆԵՋԱՎԻՍԻՄԱՅԱ ԳԱԶԵՏԱ» ԹԵՐԹԻՆ ՏՎԱԾ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻՑ .....	24
ՀԱՅՈՑ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ 4-ՐԳ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ ՈՒՆԵՑԱԾ ԵԼՈՒՅԹԻՑ .....	26
1992 թ. ՆՈՅՄԲԵՐԻ 11-Ի ՄԱՄԼՈ ԱՍՈՒԼԻՍԻՑ .....	30
ՀԱՅՈՑ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ 5-ՐԳ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ ՈՒՆԵՑԱԾ ԵԼՈՒՅԹԻՑ .....	33
ԵԼՈՒՅԹ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 80-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎՈՒՄ .....	35
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ «ՊՈԼԻՏԻԿ ԷՆՏԵՐՆԱՍԻՈՆԱԼ» ՀԱՆԴԵՍԻՆ ՏՎԱԾ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻՑ .....	39
1997 թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26-Ի ՄԱՄԼՈ ԱՍՈՒԼԻՍԻՑ .....	41
ՊԱՏԵՐԱԶՄ, ԹԵ՞ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ՀՈԳՎԱԾԻՑ .....	43
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆԴԴԱՅՆՎԱԾ ՆԻՍՏՈՒՄ ՈՒՆԵՑԱԾ ԵԼՈՒՅԹԻՑ .....	46
2007 թ. ԳԵԿՏԵՄԲԵՐԻ 8-Ի ՀԱՆՐԱՀԱՎԱՔՈՒՄ ՈՒՆԵՑԱԾ ԵԼՈՒՅԹԻՑ .....	49
2008 թ. ՀՈՒՆՎԱՐԻ 11-Ի ՄԱՄԼՈ ԱՍՈՒԼԻՍԻՑ .....	58
2008 թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15-Ի ՀԱՆՐԱՀԱՎԱՔՈՒՄ ՈՒՆԵՑԱԾ ԵԼՈՒՅԹԻՑ .....	61

2008 թ. Հոկտեմբերի 17-ի ՀԱՆՐԱՀԱՎԱՔՈՒՄ ՈՒՆԵՑԱԾ ԵԼՈՒՅԹԻՑ ..... 67

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ «NEWSWEEK» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿԻ  
ԹՂԹԱԿԻՑ ՍԵՄԻՆ ԳՅՈՒՄՈՒՇԵԼԻԻ ՀԵՏ ..... 78

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎՈՒՄ ՈՒՆԵՑԱԾ ԵԼՈՒՅԹԻՑ..... 84

2009 թ. ՄԱՅԻՍԻ 1-Ի ՀԱՆՐԱՀԱՎԱՔՈՒՄ ՈՒՆԵՑԱԾ ԵԼՈՒՅԹԻՑ ..... 86



Տպագրությունը՝ «ՓՐԻՆԹԻՆՖՈ» ՀԶ ՍՊԸ